

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԹԱՂԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Ը. 00. 01 – «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

***Գիտական ղեկավար՝***

***Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ***

***Արոմ Շավարշի Մարգարյան***

**ԵՐԵՎԱՆ – 2018**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>3</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b>	
1.1 Տնտեսական աճի էությունը և սահմանումները: «Տնտեսական աճ» և «տնտեսական զարգացում» հասկացությունների փոխհարաբերությունները.....	8
1.2 Տնտեսական աճի տեսությունների և մոդելների էվոլյուցիա.....	20
1.3 Երկարաժամկետ տնտեսական աճի կայունության հիմնախնդիրները ինստիտուցիոնալ տեսության շրջանակներում.....	36
<b>ԳԼՈՒԽ 2. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ</b>	
2.1 Գիտատեխնոլոգիական գործոնների ազդեցությունը կայուն ու երկարաժամկետ տնտեսական աճի վրա .....	47
2.2 Ինստիտուցիոնալ միջավայրի դերը երկարաժամկետ աճը խթանող տեխնոլոգիական գործոնի զարգացման մեջ.....	62
2.3 ՀՀ տնտեսական աճի փուլային ուսումնասիրություն.....	77
<b>ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ</b>	
3.1 ՀՀ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցության գնահատումը.....	96
3.2 Տնտեսական աճի վրա կառուցվածքային տեղաշաժերի ազդեցության գնահատումը.....	110
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>120</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>127</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....</b>	<b>139</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Տնտեսական աճը եղել և շարունակում է մնալ ժամանակակից տնտեսագիտության առանցքային հիմնահարցերից մեկը: Հատկապես ուշագրավ է, թե ինչու են որոշ երկրներ աճում, զարգանում՝ սեփական երկրի բնակչությանն ապահովելով առավել բարենպաստ կենսապայմաններով, իսկ մյուսները՝ ձախողվում: Հայտնի տնտեսագետ Դարոն Աճեմօղլուի հետազոտությունները ցույց են տալիս, որ 1960-ական թթ. եկամուտների միջին մակարդակ ունեցող երկրների մի մասն արդեն 2000-ական թթ. համալրեց եկամուտների հարաբերականորեն բարձր մակարդակ ունեցողների շարքը, մինչդեռ մյուս երկրներում եկամուտները կամ պահպանվեցին նույն մակարդակին, կամ նույնիսկ հայտնվեցին անկման ուղու վրա<sup>1</sup>: Գաղտնիք չէ, որ երկրների միջև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ունի զգալի տարբերություններ (օրինակ՝ 2016թ.-ին ԱՄՆ-ում 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 57,638 դոլար, այն դեպքում, երբ հարևան Մեքսիկայում եղել է ընդամենը 8,208 դոլար, Սինգապուրում՝ 52,962 դոլար, մինչդեռ Չինաստանում և Հնդկաստանում շնչի հաշվով ՀՆԱ-ն համապատասխանաբար կազմել է՝ 8,123 և 1,709 դոլար<sup>2</sup>): Ուստի հարց է առաջանում, թե ո՞րն է երկրների՝ նման անհամաչափ տեմպերով զարգացման պատճառը, ի՞նչ է տնտեսական աճն առհասարակ և ինչպե՞ս է այն անդրադառնում երկրի բնակչության տարբեր խավերի վրա: Արդյո՞ք քննարկվող տնտեսական երևույթը հանդես է գալիս միայն դրական լույսի ներքո, թե՞ այն նույնպես կարող է ունենալ բացասական հետևանքներ, ինչպե՞ս է տեխնոլոգիական գործոնն ազդում տնտեսական աճի որակի վրա և ինչպիսի՞ հնստիտուցիոնալ միջավայր է անհրաժեշտ երկարաժամկետում երկրի կայուն զարգացումն ապահովելու համար, ինչպիսի՞ հնարավորություններ և նոր սպառնալիքներ է պարունակում տեխնոլոգիական գործոնը երկարաժամկետ աճի համար:

Գլոբալացման ներկա պայմաններում տեխնոլոգիական առաջադիմությունը հանդիսանում է տնտեսական աճի առանցքային գործոններից մեկը: Պատահական չէ,

<sup>1</sup> Acemoglu D., “Introduction to modern economic growth: Parts 1-5”, Department of Economics, Massachusetts Institute of Technology, USA, page 4

<sup>2</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում.  
<http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.PP.KD>

որ զարգացած երկրները կայուն երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու նպատակով հսկայական ֆինանսական ռեսուրսներ են ուղղում գիտահետազոտական և նախագծային-փորձարարական աշխատանքների իրականացմանը: Այս համատեքստում հատկապես կարևորվում է զարգացող և զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում բարձրտեխնոլոգիական ոլորտի զարգացման ինստիտուցիոնալ ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Համաշխարհային և տարածաշրջանային տնտեսաքաղաքական զարգացումները, ՀՀ-ի ԵԱՏՄ անդամակցությունը, ինչպես նաև սպառող երկրի կարգավիճակից դուրս գալու հրամայականն էլ ավելի հրատապ են դարձնում ՀՀ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական առաջադիմության ազդեցության հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտի պոտենցիալի գնահատումը և ՀՀ կայուն երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում վերջինիս գործնական կիրառման ուղիների բացահայտումն ու համադրումը: Մասնավորապես, այդ համատեքստում հետազոտության առանցքային նպատակ է հանդիսացել առաջադիմական տեխնոլոգիական փոփոխությունների ինստիտուցիոնալ ապահովման ու երկարաժամկետ տնտեսական աճին միտված տնտեսական քաղաքականության մեխանիզմների ձևավորման քննությունը: Այդ նպատակին հասնելու համար հետազոտության մեջ փորձ է արվել լուծել հետևյալ խնդիրները՝

- Տնտեսական աճի վերաբերյալ տեսությունների և մոդելների էվոլյուցիայի քննական վերլուծություն, դրանց վերաբերյալ տեսակետների դասակարգում և համադրում
- Ներառական աճի համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի առանձնահատկությունների ուսումնասիրություն կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով
- ՀՀ տնտեսական աճը պայմանավորող հիմնական գործոնների վերլուծություն և դրա որակական հատկանիշի գնահատում

- Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի մեջ բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման դերի գնահատում և վերահիմաստավորում
- Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի ուսումնասիրություն, առկա խոչընդոտների և դրանց վերացման ուղիների բացահայտում
- Կայուն երկարաժամկետ տնտեսական աճի վրա բարձր տեխնոլոգիական ոլորտի ազդեցության գնահատում և վերլուծություն

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ուսումնասիրության օբյեկտը ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական գործոններով պայմանավորված կայուն, երկարաժամկետ և որակյալ տնտեսական աճն է: Հետազոտության առարկան՝ այդպիսի աճի համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի և քաղաքականության պատշաճ գործիքակազմի ձևավորումը:

**Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը:** Հետազոտության համար հիմք են հանդիսացել վերոշարադրյալ հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղված տնտեսագետների և փորձագետների գիտական աշխատությունները, արտասահմանյան և տեղական գիտաժողովների, սեմինարների, ամսագրերի և տարբեր գիտական հոդվածների նյութերը, համաշխարհային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև համապատասխան ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ՀՀ կառավարության որոշումները: Որպես հետազոտության համար անհրաժեշտ վիճակագրական տվյալների և ժամանակագրական շարքերի աղբյուրներ՝ օգտագործվել են միջազգային կազմակերպությունների (Համաշխարհային տնտեսական ֆորում, Համաշխարհային բանկ և այլն) կողմից պարբերաբար հրապարակվող վիճակագրական տվյալների բազաները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և այլ պետական ինստիտուտների կողմից հրապարակվող պաշտոնական տվյալները: Ելնելով հետազոտվող խնդրի բնույթից՝ հետազոտության մեթոդաբանության առանցքն են կազմել տնտեսաչափական վերլուծությունների, մոդելավորման, վիճակագրական, գիտական վերացարկման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

**Հետազոտության գիտական նորույթը և ստացված արդյունքները** պայմանավորված են վերը առաջադրված խնդիրների լուծմամբ, որոնք հանգում են հետևյալին՝

- Բացահայտվել են որակյալ տնտեսական աճի ներառականության հիմնական ինստիտուցիոնալ հատկանիշները: Այդ համատեքստում հիմնավորվել է տնտեսական աճի՝ որպես զուտ քանակական փոփոխությունների գաղափարը վերահիմաստավորելու կամ որպես դրան փոխարինող նոր եզրույթներ կիրառելու անհրաժեշտությունը՝ ի դեմս «տնտեսական զարգացում» և «ներառական աճ» եզրույթների (էջ 19-20):
- Կոռելյացիոն մատրիցաների միջոցով բացահայտվել են զարգացած և զարգացող երկրներում տնտեսական աճի համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ փոփոխությունների կարճաժամկետ և երկարաժամկետ առանձնահատկությունները (էջ 72-75):
- Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցության չափը գնահատելու նպատակով մշակվել է պանելային շարքերով տնտեսաչափական մոդել: Առաջադրվել են երկու՝ ֆիքսված և պատահական էֆեկտներով մոդելներ, գնահատվել դրանց արժանահավատությունը և ուսումնասիրվել այդ մոդելներով տնտեսագիտական մեկնաբանություններ կատարելու նպատակահարմարությունը (էջ 101-104):
- Ավելացված արժեքի մեջ տեխնոլոգիաների մասնակցության SՀԶԿ գնահատումների հիման վրա ներդրվել է տնտեսության ճյուղերում տեխնոլոգիաների մասնակցությամբ արտադրված ավելացված արժեքի ագրեգավորման մեթոդաբանություն, որը կիրառվել է 2016թ. -ին ՀՀ համախառն թողարկման մեջ տեխնոլոգիաների մասնակցության չափը հաշվարկելու համար (էջ 106-108):
- Մշակվել է գծային տնտեսաչափական մոդել, որի օգնությամբ գնահատվել է Հայաստանի Հանրապետությունում տեխնոլոգիաների մասնակցությամբ ստեղծված ավելացված արժեքի և տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի միջև առկա փոխազդեցության չափը (էջ 113-114):

**Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:** Ներկայացված ատենախոսությունը համալիր գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վեր-

լուծություններից և ստացված գիտագործնական արդյունքներից բխող հետևությունները և եզրակացությունները, առաջադրված դրույթների հիման վրա կատարված գնահատումները տնտեսական քաղաքականության համար պատասխանատու պետական գերատեսչություններն ու մարմինները կարող են հաշվի առնել երկարաժամկետ կայուն աճին միտված տնտեսական ռազմավարությունների մշակման ժամանակ: Որպես համալիր քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմին՝ սույն ատենախոսության շրջանակներում ներկայացված գիտագործնական արդյունքների օգտագործման շահառու, առաջին հերթին, կարող է հանդիսանալ ՀՀ կառավարությունը:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տրնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնում՝ 2016թ.-ի նոյեմբերի 15-18-ին ՀՊՏՀ «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով 26-րդ գիտաժողովում ներկայացված զեկույցներում, 2017թ.-ի նոյեմբերի 23-ին Բելառուսի ազգային տեխնիկական համալսարանի «Տնտեսավարման մեխանիզմների նորացումը տնտեսական, իրավական, սոցիալական և ճարտարագիտական մոտեցումների միջոցով» խորագրով 11-րդ գիտագործնական կոնֆերանսում, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀ ՀԲ 16-03 գիտական ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտություններում: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտահայտությունն են գտել հեղինակի հրատարակած 4 և հեղինակի համահեղինակությամբ հրատարակված 4 հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 138 էջ՝ ներառյալ օգտագործված գրականությունը: Պարունակում է 17 գծապատկեր, 3 գծանկար, 14 աղյուսակ և 9 հավելված:

# ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1. Տնտեսական աճի էությունը և սահմանումները: «Տնտեսական աճ» և «տնտեսական զարգացում» հասկացությունների փոխհարաբերությունները

Ընդհանրապես, «աճը» հարաբերական եզրույթ է: Այն ներկայացնելու համար անհրաժեշտ է ընտրել հաշվարկման որևէ բազիս, որի նկատմամբ պետք է հաշվարկել այդ աճի չափը: Այս առումով բացառություն չէ նաև «տնտեսական աճ» հասկացությունը, որի հարաբերական հասկացություն լինելու վերաբերյալ հայտնի տնտեսագետ Ս. Կուզնեցն արտահայտել է հետևյալ տեսակետը. **«տնտեսական աճը հարաբերական գաղափար է, որը տեսական և գործնական հարթություններում որպես տնտեսական երևույթ ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է կենտրոնանալ հենց դրա հարաբերական լինելու հանգամանքի վրա»**<sup>3</sup>: Գոյություն ունեն տնտեսական աճի բազմաթիվ սահմանումներ և ընկալումներ: Տնտեսագիտական ԲՈՒՀ-երի ուսանողների համար Ի. Վ. Լիպսիցի կողմից տնտեսական աճին տրված է պարզագույն սահմանում, որը ձևակերպված է որպես **փարվա կտրվածքով երկրի արտադրական հզորությունների կայուն ավելացում**<sup>4</sup>: Հասկանալի է, որ սահմանումն ունի զգալի թերություններ: Դրանում համախառն թողարկման ավելացման մասին ոչինչ չի ասվում: Արտադրական հզորությունները մեծացնում են համախառն թողարկման ներուժը, սակայն վերջինիս համարժեք ավելացման համար այդ ներուժն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Այս առումով տնտեսական աճին տրամազծորեն հակառակ սահմանում է տվել Ն.Ա. Սուվորովը: Նա գտնում է, որ **փնտեսական աճը համախառն ապրանքների և ծառայությունների կայուն ավելացումն է**<sup>5</sup>: Ի տարբերություն նախորդ սահմանման՝ հեղինակը տնտեսական աճը մեկնաբանում է համախառն թողարկման փոփոխության տեսանկյունից, իսկ արտադրական հզորություններն ամբողջովին անտեսվում են: Որպես վերոնշյալ սահմանումների համակցված տարբերակ է տնտեսական աճի Մ.Վ. Սաֆրոնչուկի ձևակերպումը, համաձայն որի՝ **փնտեսական աճը որոշակի ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի ավելացումն է երկրի արտադրական հնարավոր**

<sup>3</sup> Shearer R. A., “The Concept of Economic Growth”, Blackwell publishing Ltd, U.S.A., 1961, page 506

<sup>4</sup> Липсиц И. В. “Экономика”, учебник для вузов, Москва 2006, стр. 437

<sup>5</sup> Суворов Н. А “Экономика”, Москва 2006, стр. 5



**րությունների ընդլայնման և բնակչության լրիվ զբաղվածության պայմաններում**<sup>6</sup>: Նմանատիպ սահմանում է տվել նաև Բաշկիրիայի ակադեմիայի ներկայացուցիչ Դ. Ռ. Պեսկովը: Նրա գնահատմամբ՝ **լայն իմաստով փնտրեսական աճ նշանակում է արտադրական արդյունքի և դրա վրա ազդող գործոնների որակական և քանակական փոփոխություն**<sup>7</sup>: Նկատենք, որ, ի տարբերություն նախորդ սահմանումների, Պեսկովը ընդլայնում է տնտեսական աճի սահմանումը՝ նշելով աճի վրա ազդող գործոնների ոչ միայն քանակական, այլ նաև որակական փոփոխությունների մասին: Այս առումով հետաքրքրական է նաև Ս. Կուզնեցի կողմից տնտեսական աճի ընկալումը, որի տակ նա հասկանում է<sup>8</sup>

1. Ազգային արդյունքի աճ,
2. Տեխնոլոգիական առաջընթաց,
3. Ինստիտուցիոնալ և գաղափարական փոփոխություններ:

Ըստ էության, Կուզնեցի սահմանման երկրորդ և երրորդ կետերը միտված են տնտեսական աճի որակական կողմը բացահայտելուն: Մեկ այլ մոտեցմամբ՝ տնտեսական աճը պարբերաշրջանային զարգացման տեսանկյունից սահմանվում է որպես մի կողմից ընթացիկ ժամանակահատվածի՝ նախորդի համեմատությամբ իրական ՀՆԱ աճի առաջանցիկ տեմպ, մյուս կողմից՝ որպես տնտեսական զարգացման միտում<sup>9</sup>: Տնտեսական աճի բավականին հավակնոտ սահմանում է տվել Ա. Պետրոսյանը. **«Տնտեսական աճ ասելով՝ պետք է հասկանալ այնպիսի աճ, որն ուղեկցվում է ազգային տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացմամբ, քաղաքացիների բացարձակ մեծամասնության կենսամակարդակի աճով և որը չի վտանգում գալիք սերունդների ապահով և բարեկեցիկ ապագան»**<sup>10</sup>: Նկատենք, որ տրված սահմանումը ներառում է տնտեսական աճի գրեթե բոլոր էական կողմերը և, ի տարբերություն նախորդ սահմանումների, վերջինիս արժանիքը կայանում է ապագային

<sup>6</sup> Сафрончук М. В. «Экономический рост» глава 25, Киров 2004, стр. 2

<sup>7</sup> Пескова Д. Р. «Теневая Экономика и экономический рост – особенности взаимодействия», УФА, стр. 1

<sup>8</sup> Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի պաշտոնական կայքէջում. <http://www.undp.uz/ru/download/index.php?type=publication&id=150&parent=2858&doc=99146>

<sup>9</sup> Шалапугин А.Д. «Определение экономического роста в посткризисной экономике», Челябинск 2013, стр 1

<sup>10</sup> Պետրոսյան Ա., «Տնտեսական աճի չափման այլընտրանքային միջոցները», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N2, էջ 30:

միտված մոտեցման մեջ: Ի վերջո, տնտեսական աճը պետք է բավարարի նաև սե-  
րունդների համերաշխության կարևորագույն սկզբունքին: Այսպիսով, տնտեսական աճի  
սահմանումները բազմաթիվ են և բազմաբնույթ՝ տարբեր հեղինակների կողմից վերջի-  
նիս որոշակի հատկանիշի առանձնակի շեշտադրությամբ, սակայն գրեթե բոլոր սահ-  
մանումներում ընդհանրականն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների միջև այս  
կամ այն պարամետրի (որպես կանոն՝ ՀՆԱ-ի) քանակական փոփոխությունն է:

Չնայած տնտեսական աճը կարևոր մակրոտնտեսական ցուցանիշ է, այնուա-  
մենայնիվ փորձը ցույց է տալիս, որ ՀՆԱ-ի քանակական աճը ոչ միշտ է բացահայտում  
երկրի տնտեսության զարգացման որակական կողմերը: Այսպես օրինակ՝ համաձայն  
Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների՝ 2015թ.-ին Չինաստանում տըն-  
տեսական աճը կազմել է 6.7%, սակայն նույն թվականին վերջինս մարդկային զար-  
գացման համաթվով աշխարհում զբաղեցրել է 90-րդ հորիզոնականը, նույն կերպ Ուզ-  
բեկստանում տնտեսական աճը կազմել է 8%, իսկ մարդկային զարգացման համաթվով  
զբաղեցրել է 114-րդ հորիզոնականը աշխարհի 191 երկրների մեջ<sup>11</sup>: Հյուսիսային Կալի-  
ֆորնիայի համալսարանի հետազոտող Ռ. Ա. Էսթերլին հանգում է այն եզրակացույթ-  
յան, որ **երկարաժամկետում երջանկության գործակցի և եկամուտների մակար-  
դակի միջև կոռելյացիա առկա չէ**<sup>12</sup>: Իր հերթին Ա. Մարգարյանն իրավացիորեն նկա-  
տում է, որ **զարգացման թույլ բևեռում գտնվող երկրների մի հատվածում (որոնցից է  
նաև ՀՀ-ն), բավականաչափ մեծ տնտեսական աճն ամենևին չի ուղեկցվում բնակ-  
չության ճնշող մեծամասնության կենսական վիճակի քիչ թե շատ շոշափելի բարե-  
լավմամբ**<sup>13</sup>: Ստացվում է, որ տնտեսական աճը՝ որպես մակրոտնտեսական ցուցանիշ,  
բավականին խոցելի է ոչ միայն այն պատճառով, որ լիարժեք պատկերացում չի տալիս  
բնակչության կյանքի որակի փոփոխության մասին, այլև նույնիսկ շատերի կողմից են-  
թարկվում է քննադատության որպես ոչ այնքան ցանկալի երևույթ: Տնտեսական աճի  
դեմ արտահայտվող տեսաբանները վերջինս քննադատում են ամենատարբեր դիտա-

<sup>11</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի  
պաշտոնական կայքէջերում. <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?view=chart> ,  
<http://hdr.undp.org/en/countries/profiles/UZB>

<sup>12</sup> Easterlin R. A. “Happiness and Economic Growth: The Evidence”, University of Southern California and IZA,  
Discussion paper No. 7187, January 2013, p. 11.

<sup>13</sup> Մարգարյան Ա. «Ազգային տնտեսությունը համաշխարհային եկամտի բաշխման համակարգում», 21-  
րդ դար, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, Երևան 2005, թիվ 2(8), էջ 131

կետերից՝ ծանրանալով դրա այս կամ այն բացասական կողմի վրա: Ընդհանուր առմամբ, կարծում ենք, տնտեսական աճի բացասական հետևանքները կարելի է պայմանականորեն դասակարգել 3 հիմնական խմբերում՝

1. Տնտեսական
2. Սոցիալական
3. Էկոլոգիական և բնապահպանական

Տնտեսական հետևանքները, որպես կանոն, ունեն կարճաժամկետ բնույթ: Դրանց են վերաբերում, օրինակ, ինֆլյացիոն ռիսկերի ի հայտ գալը, ընթացիկ հաշվի դեֆիցիտի առաջացման ռիսկը, նախկին հավասարակշռված վիճակից տնտեսական համակարգի դուրսբերման, տեղի ունեցող փոփոխությունների հետ կապված ռիսկերը և այլն: Տնտեսական աճն այլ հավասար պայմաններում ենթադրում է մեկ շնչին ընկնող եկամուտների ավելացում և, հետևաբար, ներմուծման նկատմամբ պահանջարկի մեծացում, ինչից էլ կարող է ածանցվել վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա դեֆիցիտային ճնշումների ռիսկը: Բացի այդ, ամբողջական պահանջարկի առաջանցիկ տեմպերով մեծացումը ամբողջական առաջարկի նկատմամբ կարող է ծնել ինֆլյացիոն ռիսկեր:

Տնտեսական աճի սոցիալական հետևանքները վերաբերում են սոցիալական լարվածության և անհավասարության առաջացմանը, ինչն ուղեկցվում է հանրության՝ երկու հակադիր խմբերի բաժանմամբ՝ կապիտալի սեփականատերեր և վարձու աշխատողներ: Ժողով Շումպետերի «ստեղծագործական ոչնչացման» գաղափարը<sup>14</sup> վերաբերում է հենց վերոնշյալ խնդրին, որն ամփոփ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. «արտադրական հարաբերությունները, առանձին ընկերությունները և երբեմն նաև անհատները կարող են զգալի վնասներ կրել տնտեսական աճի հետևանքով, ինչը ծնում է սոցիալական լարվածություն տնտեսական աճի պայմաններում»:

Տնտեսական աճի էկոլոգիական և բնապահպանական հետևանքները վերաբերում են շրջակա միջավայրի աղտոտման, գերբնակեցման, կենդանական և բուսական որոշ ցեղատեսակների վերացման և վերջապես ողջ էկոհամակարգի բնականոն գործունեության խաթարման խնդիրներին, որոնք իրենց բացասական ազդեցությունն են

<sup>14</sup> Տե՛ս Ֆորբս պարբերականի պաշտոնական կայքէջում. <http://m.forbes.ru/article.php?id=7786>

թողնում մարդու առողջության և կենսամակարդակի վրա: Քանի որ տնտեսական աճն ըստ էության ապրանքների և ծառայությունների արտադրության ավելացումն է, ապա արտադրական թափոնների և ամենատարբեր թունավոր արտանետումների ճանապարհով մեզ շրջապատող բնական միջավայրի աղտոտումն անխուսափելի է: Համաձայն Կուզնեցի կորի՝ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ավելացումն ուղեկցվում է շրջակա միջավայրի աղտոտման մեծացմամբ, սակայն եկամուտների ինչ-որ մակարդակից սկսած նշված երկու ցուցանիշների միջև փոխազդեցության ուղղությունը փոխվում է և բնակչությունն սկսում է կատարել լրացուցիչ ծախսեր՝ շրջակա միջավայրին հասցված վնասները չեզոքացնելու համար<sup>15</sup>: Կուզնեցի կորի հարաբերականորեն իրատեսական լինելու մասին վկայում է վիճակագրությունը: Այսպես՝ չնայած մեկ շնչի հաշվով արտանետված CO<sub>2</sub> գազի ծավալը զարգացած երկրներում 2013թ.-ին միջինում կազմել է մոտ 8.5 տոննա<sup>16</sup>, այնուամենայնիվ, 1960-ական թվականներից սկսած, եկամուտների մակարդակի ավելացմանը զուգընթաց այն դինամիկ կրճատվել է: Միևնույն ժամանակ զարգացող և անցումային փուլում գտնվող երկրներում այն աճել է: Չքննադատելով Ս. Կուզնեցի վերոնշյալ տեսակետը՝ այնուամենայնիվ, նկատենք, որ շրջակա միջավայրին հասցված վնասները չեզոքացնելու փորձերը երբեմն կարող են «ուշացած» բնույթ կրել, քանի որ բնության ասիմիլյացիոն պոտենցիալն ի վերջո անսահմանափակ չէ և թույլատրելի մակարդակից ավելի աղտոտման դեպքում այն այլևս հնարավոր չի լինի վերադարձնել իր նախկին՝ բնական վիճակին, ինչը կտանի բնակչության կյանքի որակի վատթարացման:

Պետք է արձանագրել, որ երկնիշ թվերով արտահայտվող տնտեսական աճ ապահովել դեռևս չի նշանակում ունենալ բարձր կենսամակարդակ և կյանքի որակ: Ուստի կարծում ենք՝ պետք է գնահատել տնտեսական աճը ոչ միայն զուտ քանակական տեսակետից, այլ նաև բացահայտել վերջինիս որակական կողմերը: Այդ առումով,

<sup>15</sup> Everett T., Ishwaran M., Ansaloni G. P., Rubin A., «Economic Growth and the Environment», Defra Evidence and Analysis Series, Paper 2, March 2010, page 17.

<sup>16</sup> Հաշվարկները կատարված են մեր կողմից ՀԲ վիճակագրական տվյալների հիման վրա: Ըստ զարգացման մակարդակի երկրների դասակարգման հիմքում ընկած է ՄԱԿ-ի մեթոդաբանությունը

Ա. Պետրոսյանի տնտեսական աճի որակի բնութագրման հիմնական մոտեցումները հանգում են հետևյալին<sup>17</sup>.

1. Աճի որակը միջճյուղային համամասնությունների աճի տեմպերի օպտիմալ մակարդակն է
2. Աճի որակը հայրենական արտադրանքի որակական բնութագրիչ է
3. Աճի որակը հայրենական արտադրանքի մրցունակությունն է
4. Աճի որակը կյանքի որակն է

Չնայած հեղինակն առանձնացնում է աճի որակի չորս հատկանիշ, այնուամենայնիվ կարելի է նկատել, որ երկրորդ և երրորդ հատկանիշներն ըստ էության մեկը մյուսին իմաստային առումով փոխարինում են: Եթե հայրենական արտադրանքը որակյալ է, բնականաբար կլինի նաև մրցունակ: Բավականին ընդգրկուն սահմանում է տրված Հ. Ի. Աղաջանյանի ղեկավարությամբ իրականացված «տնտեսական աճի որակը» վերնագրով հետազոտության մեջ. **Տնտեսական աճի որակը բարիքների արտադրության այն մակարդակն է, որ ապահովում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացումը՝ հիմքում ունենալով հոգևոր-մշակութային արժեհամակարգ**<sup>18</sup>: Աճի քանակական և որակական կողմերի համադրության առումով հետաքրքիր է վերջին տարիներին լայն տարածում ստացած «**տընտեսական զարգացում**» և «**ներառական աճ**» եզրույթների ուսումնասիրությունը:

Ինչպես «տնտեսական աճ», այնպես էլ «տնտեսական զարգացում» եզրույթը չունի ընդհանրական և միարժեք սահմանում: Ընդհանուր առմամբ, այն ներկայացվում է իբրև գործընթացների ամբողջություն, որն ապահովում է տնտեսական աճի և տնտեսական վերափոխումների միջոցով հանրության բարեկեցության միաժամանակյա բարձրացում: Կայուն տնտեսական զարգացման հայեցակարգի հիմքերը դրվել են դեռևս 1798թ-ին Մալթուսի կողմից «Ակնարկ բնակչության աճի մասին» հայտնի աշխատությամբ, որտեղ նշվում է, որ «բնակչությունն աճում է երկրաչափական, մինչ-

<sup>17</sup> Պետրոսյան Ա., «Տնտեսական աճի որակը որպես աղքատության հաղթահարման պայման», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2014թ., 1-ին համար, էջ 33-36:

<sup>18</sup> Աղաջանյան Հ. Ի. «Տնտեսական աճի որակը», ՀՊՏՀ 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2014, էջ 8

դեռ գոյության համար անհրաժեշտ ռեսուրսները՝ թվաբանական պրոգրեսիայով»<sup>19</sup>: Համաձայն Ֆինլանդիայի տնտեսագիտական դպրոցի հետազոտողներ Լ. Հափանենի և Պ. Տապիոյի՝ **«տնտեսական աճի նույնականացումը կայուն զարգացման հետ անտեղի սահմանափակում է այն միջոցների ընտրությունը, որոնցով կարելի է հասնել կայունության»**<sup>20</sup>: Ձևակերպումից պարզ է դառնում հեղինակների վերաբերմունքը կայունության հասնելու համար տնտեսական աճի սահմանափակության վերաբերյալ: Փաստորեն, նրանք, համեմատելով կայուն զարգացումը տնտեսական աճի հետ, շահարկում են տնտեսական աճի անկայուն բնույթը: Ուստի կարելի է ենթադրել, որ կայուն զարգացման տակ հեղինակները նկատի ունեն աճի ավելի համընդգրկուն ընկալում, որում առանձնակի կարևորություն է տրվում կայունությանը: Տնտեսական զարգացման համընդգրկուն սահմանները բնորոշվում են Փիրսի, Մարկանդայի և Բարբիերի կողմից: Նրանք գտնում են, որ **«տնտեսական զարգացումը ներառում է սոցիալական և տնտեսական համակարգի ստեղծումը, որոնք երաշխավորում են իրական եկամուտների աճ, կրթության մակարդակի, առողջապահության և ընդհանրապես կյանքի որակի բարելավում»**<sup>21</sup>: Իսկ տնտեսական զարգացման միջազգային խորհրդի բնորոշմամբ տնտեսական զարգացումը ենթադրում է<sup>22</sup>

1. Քաղաքականությունների խումբ, որոնք մշակվում են կառավարության կողմից ընդհանուր մակրոտնտեսական նպատակադրումներ կատարելու համար, ինչպիսիք են օրինակ՝ ինֆլյացիայի կառավարումը, զբաղվածության ապահովումը, կայուն աճը և այլն,
2. Քաղաքականությունների և ծրագրերի խումբ, որոնց նպատակը որոշակի հանրային ծառայությունների ապահովումն է (օրինակ՝ ճանապարհային շինարարություն, բժշկական ծառայությունների հասանելիություն և այլն),

<sup>19</sup> Malthus T. “An Essay on the Principle of Population”, London, 1798, printed for J. Johnsan, in St. Paul’s Church – Yard, page 4.

<sup>20</sup> Haapanen L., Tapio P., Finland Futures Research Centre, Turku School of Economics, “The role of economic growth in sustainable development from the perspective of 21st century growth critique” Finland 2016, page 3.

<sup>21</sup> Ciegis S., Ramanauskiene J., Martinkus B. “The Concept of Sustainable Development and its Use for Sustainability Scenarios”, 2009, page 29.

<sup>22</sup> International Economic Development Council's, “Economic Development Reference Guide”, 2000, page 3.

3. Քաղաքականությունների և ծրագրերի խումբ, որոնք միտված են գործարար միջավայրի բարելավմանը:

Հիմնվելով տնտեսագիտական գրականության վրա՝ որոշ տնտեսագետներ տնտեսական զարգացմանը տալիս են վերացական սահմանումներ՝ շեշտադրելով դրա դրսևորման այս կամ այն ձևը: Այդպիսի սահմանումները տնտեսական զարգացումը բնորոշում են որպես.

1. Արտադրական հզորությունների ավելացում, որոնք ընդլայնում են տնտեսական սուբյեկտների հնարավորությունները<sup>23</sup>:
2. Նախկին ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու միջոցով տնտեսական համակարգի անդամների սպառման ծավալների ավելացման և ներդրումներ կատարելու համար հնարավորությունների ստեղծում<sup>24</sup>:

Առաջին բնորոշումը վերաբերում է միայն արտադրական հզորությունների ընդլայնմանը, մինչդեռ տնտեսական զարգացումը, ինչպես արդեն նշել են, առավել համընդգրկուն հասկացություն է: Երկրորդ բնորոշման մեջ խոսվում է առկա ռեսուրսների արդյունավետության, սպառման ծավալների և ներդրումների ավելացման մասին, սակայն ռեսուրսային բազայի մեծացմանը, տնտեսական համակարգի անդամների միջև այդ ռեսուրսների բաշխմանն ու տարբերությունների համահարթեցմանը անդրադարձ չի կատարվում:

Բ. Օկունը և Ռ. Վ. Ռիկարդսոնը տնտեսական զարգացումը սահմանում են հետևյալ կերպ. **«տնտեսական զարգացումը կյանքի որակի կայուն բարելավումն է, որն արտահայտվում է ապրանքների և ծառայությունների սպառման ծավալների ավելացմամբ»**<sup>25</sup>: Նկատենք, որ ապրանքների ու ծառայությունների սպառման ծավալներն անվերջ չեն կարող ավելանալ, ուստի ինչ-որ պահից սկսած՝ կյանքի որակի բարելավումը կարող է արտահայտվել ոչ միայն սպառման, այլև նորարարական և ստեղծագործական գործունեության ավելացմամբ: Մ. Պ. Թոդարոն և Ս.Ք. Սմիթը տնտեսական զարգացումը սահմանում են որպես **բազմակողմ գործընթաց, որն իր մեջ ներա-**

<sup>23</sup> Feldman M., Hadjimichael T, Kemeny T., Lanahan L., “The Logic of Economic Development: A Definition and Model for Investment”, SAGE Publications Ltd, 2016, page 4.

<sup>24</sup> Lorenzo G. Bellu, “Development and Development Paradigms: A (Reasoned) Review of Prevailing Visions”, EasyPol, May 2011, page 3.

<sup>25</sup> Okun B. and Richardson R. W. “Economic Development: Concept and Meaning”, Washington D.C., 1962, page 230.

**ռում է սոցիալական փոփոխությունները, ինստիտուցիոնալ բարեփոխումները, տնտեսական աճը, աղքատության մակարդակի կրճատումը**<sup>26</sup>: Կարծում ենք, սահմանումը լինելով հակիրճ, ընդհանուր առմամբ բնորոշում է ուսումնասիրվող եզրույթի հասկացային բեռնվածությունը: Ա.Ա. Պոլիդուցը տնտեսական զարգացմանը իմաստալից առումով տվել է գրեթե նույնատիպ սահմանում, ինչ Թոդարոն և Սմիթը. **«Տնտեսական զարգացումը լայն հասկացություն է, որի արդյունք են հանդիսանում խորը կառուցվածքային փոփոխությունները ոչ միայն տեխնիկական և տնտեսական, այլ նաև սոցիալական ոլորտներում»**<sup>27</sup>:

Այսպիսով, տնտեսական զարգացում և տնտեսական աճ եզրույթներն ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Որպես նմանություններ կարելի է առանձնացնել հետևյալները՝

1. Թե՛ տնտեսական աճը և թե՛ տնտեսական զարգացումը շարունակական գործընթացներ են, որոնք ունեն խթանող ազդեցություն տնտեսության համար:
2. Երկուսն էլ ենթադրում են ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում:
3. Երկուսի վերջնական նպատակը կյանքի որակի և կենսապայմանների բարելավումն է:
4. Թե՛ տնտեսական աճը և թե՛ տնտեսական զարգացումը ներկայացնում են տրնտեսության մի վիճակից մյուսին անցնելու գործընթաց:

Տնտեսական զարգացման և տնտեսական աճի հիմնական տարբերությունը նրանում է, որ եթե տնտեսական աճը տնտեսական գործընթացները բնութագրում է քանակապես, ապա տնտեսական զարգացումն ավելի լայն հասկացություն է և փորձում է բացահայտել վերջինիս որակական կողմերը (օրինակ՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական փոփոխությունները, որոնք առաջանում են տնտեսական աճի արդյունքում)<sup>28</sup>: Ռումինիայի ակադեմիայի հետազոտող Ալինա Պետրոնելան նշում է, որ **տնտեսական աճը ազգային տնտեսության չափերի մեծացումն է, որն արտահայտ-**

<sup>26</sup> Todaro M. P., Smith S. C., “Economic Development”, 11th Edition, New York, 1994, page 16

<sup>27</sup> Полидуц А. А., “Природа экономического роста и факторы, на него влияющие”, Вестник, Челябинск 2015, N 11 (366), стр. 114.

<sup>28</sup> Haller A. P. “Concepts of Economic Growth and Development. Challenges of Crisis and of Knowledge”, Romania, page 68.



**վում է մակրոտնտեսական ցուցանիշների՝ առաջին հերթին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միջոցով, ինչը երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի վրա դրական ազդեցություն ունենալու համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, մինչդեռ տնտեսական զարգացումը ցույց է տալիս, թե ինչպես է ազդում այդ աճը կյանքի որակի բարելավման վրա<sup>29</sup>: Կարծում ենք, ավելորդ չի լինի նաև մեջբերել Դ. Սիյերի կարծիքը, ով տնտեսական զարգացման նպատակը համարում է **«աղքատության, սոցիալական անհավասարության և գործազրկության կրճատումը»<sup>30</sup>:****

Նկատենք, որ տնտեսական զարգացումը ենթադրում է նաև երկարաժամկետ կայունության ապահովում: Այս առումով հետաքրքիր է Քոնվեյի և Բարբիերի տեսակետը, ովքեր **«տնտեսության կայունությունը բնորոշում են որպես արտադրողականությունը պահպանելու ունակություն»<sup>31</sup>:** Իսկ Ա. Դ. Բասիագոն նշում է, որ **«տնտեսական կայունությունը ենթադրում է արտադրական համակարգ, որը ծածկում է առկա սպառման մակարդակը՝ առանց վրանգելու ապագա պահանջմունքները»<sup>32</sup>:** Բոննի համալսարանի հետազոտողներ Մենսայի և Կաստրոյի կարծիքով. **«կայունությունը գործընթացն է ուղղված կյանքի որակի բարելավմանը՝ շրջակա միջավայրի սահմանափակության պայմաններում»<sup>33</sup>:** Կայուն զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ է զբաղվել Մ. Մունասինգը: Նա գտնում է, որ **«կայուն զարգացումը ինքնին ներառում է մարդկային գործունեության բոլոր կողմերը՝ սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և ֆիզիկական»<sup>34</sup>:** Կայուն զարգացման բաղկացուցիչները Մունասինգը ներկայացնում է եռանկյունու տեսքով, որը հայտնի է «Մունասինգի եռանկյուն» անվամբ (տե՛ս գծանկար 1).

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում էջ 66

<sup>30</sup> Wayne E. “The Meaning of Economic Development”, UnitedNationsUniversity, 2006, page 3.


<sup>31</sup> Ciegis S., Ramanauskiene J., Martinkus B. “The Concept of Sustainable Development and its Use for Sustainability Scenarios”, 2009, page 29.

<sup>32</sup> Basiago A.D., “Economic, social, and environmental sustainability in development theory and urban planning practice”, Enviromentalist Vol.19.N 2, 1999, page 150.

<sup>33</sup> Mensah A. M. and Castro L. M. “Sustainable Resource Use & Sustainable Development: A Contradiction?”Germany, 2004, page 4.

<sup>34</sup> Munasinghe M., “Sustainomics: A Trans-disciplinary Framework for Making Development More Sustainable”, Colombo, Sri Lanka, 2004, page 2.

**Կայուն զարգացման հայեցակարգն ըստ Մունասինգի եռանկյունու<sup>35</sup>.**



Այսպիսով, թե՛ տնտեսական աճի և թե՛ տնտեսական զարգացման սահմանումները բազմաթիվ են ու բազմաբնույթ, սակայն ընդհանուր առմամբ այս երկու եզրույթների միջև որպես հիմնական ջրբաժան հանդես են գալիս երկույթի քանակական և որակական շեշտադրումները: Տնտեսական աճի դեպքում տնտեսական համակարգի փոփոխությունը բնութագրվում է քանակական ցուցանիշների միջոցով, մինչդեռ տնտեսական զարգացումն այդ փոփոխությունը դիտարկում է որակական տեսանկյունից: Կասկածից վեր է, որ այս եզրույթները ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են միմյանց: Դրանք կարելի է դիտարկել որպես մասի ու ամբողջի հարաբերություն, սակայն որտեղ է դրանց տարանջատման հստակ սահմանը, դժվար է ասել: Թերևս այդ է պատճառը, որ տնտեսական աճի սահմանումների մի մասի դեպքում որոշ տեսաբաններ նկատի են ունեցել նաև վերջինիս որակական փոփոխությունները՝ չփորձելով կիրառել մեկ այլ եզրույթ: Միևնույն ժամանակ տնտեսական զարգացման վերաբերյալ բազմաթիվ սահմանումներում առանձնակի ուշադրություն է դարձվում որոշակի քանակական փոփոխությունների: Հաշվի առնելով տնտեսական աճի ընկալման առավել ընդգրկուն և համապարփակ լինելու անհրաժեշտությունը՝ վերջին տարիներին շատ է խոսվում **աճի ներառականության** մասին: Մոսկվայի պետական համալսարանի դասախոս Կ. Ա. Ալեքսանդրան որպես «ներառական աճ» եզրույթի հոմանիշներ է ներկայացնում «**ընդհանուր աճ**», «**աղքատությանը միտված աճ**», «**արդարացի աճ**» եզրույթները՝ «ներառականության» տակ հասկանալով տնտեսական աճից օգուտների առավելա-

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղում

գույնս հավասարաչափ բաշխումը բնակչության տարբեր խմբերի միջև<sup>36</sup>: Չնայած «ներառական աճ» եզրույթի հստակ սահմանում գոյություն չունի, այնուամենայնիվ այն բնութագրվում է մի շարք հատկանիշներով: Որպես այդպիսի հատկանիշներ՝ Ա. Լևենկովն առանձնացնում է հետևյալները<sup>37</sup>.

1. Առավել լայն նպատակադրումներ (ոչ միայն եկամուտների կամ ՀՆԱ-ի ավելացում)
2. Մարդկային կապիտալի համապարփակ զարգացում
3. Անհավասարության և աղքատության կրճատում
4. Տնտեսական կյանքին ակտիվ մասնակցություն
5. Բնակչության լայն շերտերի կողմից օգուտների ստացում
6. Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի խնայողական օգտագործում

Իհարկե, կարծում ենք, Լևենկովի կողմից նշված հատկանիշների ցանկը բավականին համեստ է և կարելի է համալրել մի շարք նոր հատկանիշներով, որոնք կվերաբերեն նաև տեխնոլոգիական առաջադիմությանը և ինստիտուցիոնալ միջավայրին: Որպես այդպիսի հատկանիշներ, կարծում ենք, կարող են հանդիսանալ, օրինակ, տեխնոլոգիաների կլանումը և տարածումը, նորարարությունների ինտենսիվությունը, ինստիտուտների արդյունավետությունը, արտաքին ազդակներից ածանցվող և երկարաժամկետ դինամիկ փոփոխություններին դիմակայելու համար դրանց ճկունությունը և այլն:

Ա. Վ. Բազիլյուկը և Օ. Ու. Ժուլինը ներառական աճը պայմանավորում են 3 գործոնով՝ արդյունաբերական կապիտալով, մարդկային կապիտալով և բնական կապիտալով: Եվ որպես ներառական աճի վերջնական նպատակ են համարում հնարավորությունների և աշխատանքի արդյունքների հավասարաչափ բաշխումը (տե՛ս հավելված 1)<sup>38</sup>: Ինչպես Լևենկովը, Բազիլյուկն ու Ժուլինը նույնպես անտեսում են ինստիտուցիոնալ գործոնները աճի ներառականության մեջ, մինչդեռ կարծում ենք, հենց դրանք

<sup>36</sup> Казакова А. А. «Инклюзивный рост: проблема социологической концептуализации Теория и практика общественного развития, Москва 2016, стр. 1.

<sup>37</sup> Левенков А., «Инклюзивный рост: понятие, индикаторы, международный опыт», Банкайский вестник, декабрь 2015, стр. 42.

<sup>38</sup> Базилюк А. В., Жулын О.В, «Инклюзивный рост как основа социально-экономического развития», Экономика и управление на транспорте, Выпуск 2, 2016, стр. 22.

են որոշիչ վերոնշյալ 3 գործոններն արդյունավետորեն համակցելու համար: Արդյունաբերական, մարդկային և բնական կապիտալների առկայությունը, իհարկե, առանձին վերցրած կարևոր «դետալներ» են, սակայն դրանք շարժման մեջ դնելու համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, իսկ այդպիսի պայմանների պատասխանատուն ինստիտուցիոնալ միջավայրն է:

Այսպիսով, տարբեր հեղինակների կողմից տնտեսական աճին տրված սահմանումների ուսումնասիրության արդյունքում՝ կարևորելով տնտեսական աճի հատկապես որակական կողմերը, կարելի է տալ հետևյալ սահմանումը. **«Որակյալ տնտեսական աճը արդյունավետ ինստիտուցիոնալ դինամիկ փոփոխությամբ պայմանավորված արտադրական հզորությունների և համախառն թողարկման կայուն ավելացումն է, որը, ներառելով հասարակական կյանքի բոլոր ոլորտները, հեղափոխում է կյանքի որակի համահարթեցված բարելավման նպատակ»:**

## **1.2 Տնտեսական աճի տեսությունների և մոդելների էվոլյուցիան**

Մինչև 1750-ական թթ. երկրի հարստացումը տնտեսագետները պայմանավորում էին առևտրի ծավալներով, որի տեսական հիմնադրույթները մշակել են մերկանտելիստական դպրոցի հետևորդները: Դրական առևտրային հաշվեմնացորդի նպատակադրումը դրվեց հարստության ավելացման հիմքերում, և հովանավորչական մեխանիզմներով դրա կարգավորումը ստեղծեց պարարտ հող՝ տնտեսական գործընթացներին պետական միջամտության գաղափարն առաջնորդելու համար: Հարստության ավելացմանը միտված մերկանտելիստական պատկերացումները կարելի է համարել տնտեսական աճի և դրա խթանմանն ուղղված պետական միջամտության ակունքները: Հասկանալի է, որ տնտեսական աճն առաջին հերթին առնչվում է արտադրական հզորությունների ընդլայնմանը և նոր արդյունքների ստեղծմանը, որը մեծ հաշվով անտեսված է մերկանտելիստական տեսության մեջ: Իհարկե, առևտուրն ունի կարևոր նշանակություն հարստության կուտակման գործում, սակայն առևտրային ակտիվ հարաբերությունների ստեղծման համար նախևառաջ անհրաժեշտ է ունենալ մրցունակ արտադրություն, ինչն իր հերթին կախված է որոշակի գործոնների առկայությունից: Տնտեսական աճի համար այդ գործոնների բացահայտումն ու վերջինիս վրա դրանց ազդեցության օրինաչափությունների ուսումնասիրության նպատակով տնտեսագիտա-

կան տարբեր դպրոցների կողմից առաջարկված տեսությունների հիման վրա մշակվել են բազմաթիվ մոդելներ:

Տնտեսական աճի հայտնի տեսություններից է **Քեյնսյան տեսությունը**: Այն խարսխված է «արդյունավետ պահանջարկի» վրա: Քեյնսը գտնում էր, որ նույնիսկ գների ճկուն լինելու դեպքում առաջարկն ամբողջությամբ չի կարող ծածկվել պահանջարկով: Ավելին, տնտեսական աճի հիմքում նա դրել է արդյունավետ պահանջարկի մեծացումը: Այսպես՝ ագրեգավորված պահանջարկի աճը ստիպում է արտադրողներին լրացուցիչ ներդրումներ կատարել, ինչի արդյունքում ապահովվում է տեխնոլոգիական առաջադիմություն, և համախառն թողարկումն ավելանում է<sup>39</sup>: Այլ կերպ ասած՝ տնտեսական աճը Քեյնսը պայմանավորում է ներդրումներով, ինչն ի վերջո հանգեցնում է եկամուտների մեծացման: Մինևույն ժամանակ, սակայն, ներդրումների և խնայողությունների միջև կախվածությունը չի ուսումնասիրվում և ենթադրվում է, որ ներդրումների իրականացման հիմնական շարժառիթ է հանդիսանում տոկոսադրույքը: Հանգելով այն եզրակացության, որ շուկայական տնտեսական համակարգին բնորոշ են ցիկլային զարգացումները՝ նա հանդես է գալիս տնտեսական գործընթացներին պետական միջամտության գաղափարի դիրքերից: Քեյնսյան տնտեսագիտության համաձայն՝ պետական միջամտությունն անհրաժեշտ է տնտեսական վերելքներն ու վայրէջքները կամ, այսպես կոչված, գործարար ցիկլերը զսպելու համար<sup>40</sup>: Որպես Քեյնսյան աճի առավելություն է հանդիսանում տնտեսական աճի ուսումնասիրությունը գործազրկության որոշակի մակարդակի առկայության պայմաններում (ինչն ավելի իրատեսական է)<sup>41</sup>: Հաշվի առնելով շուկայի ձախողման ռիսկերը և երկարաժամկետ տնտեսական կայունության անհրաժեշտությունը՝ Քեյնսի տեսակետը, կապված տնտեսական գործընթացների պետական միջամտության անհրաժեշտության հետ, կարծում ենք, ընդունելի է՝ որոշակի վերապահումներով: Խնդիրն այն է, որ Քեյնսն ըստ էության գերազնահատում է պետության կատարելության աստիճանը և բացառում վերջինիս իռացիոնալության ռիսկը: Մինչդեռ պետությունը՝ որպես շուկան կարգավորող ինստիտուտ, ամենատար-

<sup>39</sup> Thomas I. Palley, “Growth theory in a Keynesian mode: some Keynesian foundations for new endogenous growth theory”, *Journal of Post Keynesian Economics*, 1996, Vol. 19, No. 1, page 114.

<sup>40</sup> Տե՛ս Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայքէջում.  
<https://www.imf.org/external/pubs/ft/fandd/2014/09/pdf/basics.pdf>

<sup>41</sup> Greiner A., “Models of economic growth”, Department of Business Administration and Economics, Bielefeld University, Germany, page 4.

բեր դիսկերի «հանգույց» է՝ սկսած քաղաքական դիսկերից, վերջացրած ինստիտուցիոնալ դիսկերով (կոռուպցիա, գործող օրենսդրության անկատարություն և այլն): Քեյնսյան աճի տեսությունն անտեսում է նաևարտադրական հզորությունների ազդեցությունը, ինչն էլ հանդիսանում է Հարրոդի և Դոմարի կողմից մշակված տնտեսական աճի տեսության անկյունաքարը: Այն իր մեջ պարունակում է ինչպես քեյնսյան, այնպես էլ նորդասական տեսության տարրեր: Քեյնսյան աճի հետ հիմնական ընդհանրությունն այն է, որ այն կառուցված է տնտեսական աճի ապահովման գործում ներդրումների շարժիչ ուժը լինելու տրամաբանության վրա: Հարրոդը և Դոմարը ցույց տվեցին, որ շուկայական տնտեսություններն ունեն հավասարակշռված աճի ուղի, որը, սակայն, անկայուն է և երաշխավորված աճ ապահովելու համար պետական միջամտությունը ոչ միայն անխուսափելի է, այլև անհրաժեշտ: Հենց այդ անկայունության խնդիրն էլ հանդիսանում է նորդասական և Հարրոդի ու Դոմարի կողմից մշակված տնտեսական աճի **տեսության** շփման ընդհանուր սահմանը: Լրացնելով Քեյնսյան տեսությունը՝ նրանց կողմից ներկայացված **մոդելն** աճի հիմքում դնում է **խնայողությունները** և **կապիտալի արտադրողականությունը**: Չթերագնահատելով Հարրոդ-Դոմար աճի **մոդելը**՝ այնուամենայնիվ նշենք, որ այն ունի որոշակի սահմանափակումներ, որոնք հանգում են հետևյալին<sup>42</sup>.

1. Տնտեսական աճը պայմանավորված է ներդրումների աճով, ընդ որում, այդ կախվածությունը ներկայացվում է գծային կապով,
2. Տնտեսական աճը կախված չէ աշխատուժի փոփոխությունից
3. Տեխնոլոգիական առաջադիմությունը մոդելում անտեսված է:

Ընդհանուր առմամբ, պետք է արձանագրել, որ Հարրոդ-Դոմար աճի **մոդելը** հիմնված է գծային կապերի վրա, մինչդեռ տնտեսական գործընթացների միջև կապերը ոչ միշտ է, որ ունեն գծային փոխկախվածություն: Այսպես օրինակ, որպեսզի գիտության և կրթության ոլորտում կատարված ներդրումները տնտեսական աճի վրա ունենան շոշափելի ազդեցություն, պահանջվում է տևական ժամանակահատված: Դրանք կարճաժամկետում (1-3 տարի) կարող են զուգակցվել տնտեսական աճի գրեթե զրոյական փոփոխությամբ, իսկ երկարաժամկետում (10-15 տարի)՝ ընդհակառակը,

<sup>42</sup> Sharipov I., “Contemporary Economic Growth Models and Theories: A Literature Review”, CES Working Papers-Volume VII, Issue 3, page 766.

աճի առաջանցիկ տեմպերով: Սակայն թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում այդ փոխկախվածության գծային լինելու հանգամանքը խիստ կասկածելի է:

Տնտեսական աճի ուսումնասիրությունն արժանացել է նաև **դասական** դպրոցի ուշադրությանը: Դասական դպրոցի հայտնի ներկայացուցիչներից են **Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, Թ. Մալթուսը** և այլք: Ա. Սմիթի շուկայի ինքնակարգավորման «**անտեսանելի ձեռքի**» տեսությունը հանդիսանում է ամենաքննարկված և ամենաքննադատվածներից մեկը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամերի բազմաթիվ օրինակներն արդարացնում են այդ տեսությանն ուղղված քննադատությունները: Դրանք փաստում են, որ շուկան նույնպես բախվում է իռացիոնալության խնդրին՝ ինչպես պետությունը Քեյնսի դեպքում: Այս առումով կարող ենք պնդել, որ Սմիթի և Քեյնսի տեսությունները հակադրվում են միմյանց: Ինչպես Քեյնսը, Սմիթը նույնպես գտնում էր, որ խնայողություններն ունեն ներդրումների վերածվելու պոտենցիալ, որոնց վերաբերյալ տընտեսական գործակալների կողմից կայացվող որոշումները զգալիորեն ազդում են տնտեսական աճի վրա: Ի տարբերություն Քեյնսի՝ Սմիթը տեխնոլոգիական առաջադիմությունը պայմանավորում էր աշխատանքի բաժանման արդյունքում նոր տեխնոլոգիաների հայտնագործմամբ, ինչը հանգեցնում է աշխատանքի արտադրողականության բարձրացման: Սմիթը տեխնոլոգիական առաջադիմությունը չի դիտարկում որպես տնտեսական աճի վրա ազդող առանձին գործոն և քանի որ նորարարություններն ըստ նրա ի հայտ են գալիս սոցիալական և պատմականորեն ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրի արդյունքում, ապա այն ներկայացվում է որպես արտահամակարգային (էզզոգեն) գործոն: Տնտեսական աճի **Սմիթյան մոդելի** համաձայն՝ տնտեսական աճը ձևավորվում է կապիտալի կուտակման արդյունքում շղթայական ռեակցիայով աշխատանքի արտադրողականության բարձրացման և կապիտալի ու համախառն արդյունքի հավելածի հարաբերակցության կրճատման պայմաններում: Ըստ նրա՝ երկրում կապիտալի կուտակումը հանգեցնում է շահույթի կրճատման ոչ թե սահմանային արտադրողականության անկման պատճառով, այլ որովհետև կապիտալի սեփականատերերի միջև սրվում է աշխատուժի ձեռքբերման համար մրցակցությունը, ինչը հանգեցնում է աշխատավարձերի բարձրացման: Որպես աճը խոչընդոտող գործոններ՝ Սմիթն առանձնացնում է աշխատանքի ոչ արդյունավետ առաջարկը, ռեսուրսների (հողի)

խիստ սղությունը և կապիտալի կուտակման համար բավարար մոտիվացիայի պակասը<sup>43</sup>: Նկատենք, որ, ի տարբերություն Քեյնսի, Սմիթը տնտեսական աճը բխեցնում է արդյունավետ առաջարկից: Ինչ վերաբերում է կապիտալի կուտակման մոտիվացիային, ապա այդ հարցում մեծ դերակատարում ունեն ինստիտուտները, որոնք պատասխանատու են բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման համար: Հարկ է նշել, որ դեռևս դասական դպրոցի շրջանակներում մատնանշվում էր երկրների և տարածաշրջանների տնտեսական զարգացման տարբերությունների հիմքում ընկած աշխարհագրական և պատմականորեն ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրի տարբերությունները<sup>44</sup>:

**Դ. Ռիկարդոյի** տնտեսական աճի վերաբերյալ մոտեցումն ունի վատատեսական բնույթ: Նա առանձնակի ուշադրություն է դարձնում բնական ռեսուրսների, մասնավորապես՝ հողի սահմանափակությանը, որը դիտարկվում է որպես աճը խոչընդոդող գործոն: Ըստ Ռիկարդոյի՝ չնայած կապիտալի կուտակումը նպաստում է զբաղվածության, հետևաբար նաև աշխատավարձերի մակարդակի բարձրացմանը, այնուամենայնիվ ռեսուրսների սահմանափակ լինելու պայմաններում աշխատանքի արտադրողականությունն աստիճանաբար սկսում է նվազել՝ դանդաղեցնելով տնտեսական աճի տեմպը: Նա աշխատուժը դիտարկում է, որպես արտահամակարգային՝ էզոգեն գործոն, իսկ տեխնոլոգիական առաջադիմությունը, որոշակիորեն փոխարինելով աշխատուժին, աշխատունակ բնակչության մի մասին դարձնում է գործազուրկ և վերջիններիս զբաղվածությունն ապահովելու համար նոր կապիտալ ներդրումների անհրաժեշտություն է առաջանում: Ընդ որում, որպես տեխնոլոգիական առաջադիմության հետևանք, աշխատավարձերի մակարդակն սկսում է նվազել:

Դասական դպրոցի մեկ այլ ներկայացուցչի՝ **Թոմաս Մալթուսի** կողմից ուսումնասիրվում է տեխնոլոգիական առաջադիմության, համախառն թողարկման և բնակչության թվաքանակի փոխկախվածությունները: Տեխնոլոգիական առաջադիմությունը, խթանելով աշխատանքի արտադրողականությունը, տանում է համախառն արդյունքի ավելացման, ինչն էլ իր հերթին խթանում է ծնելիությունը և նվազեցնում մահացությունը՝ նպաստելով բնակչության թվաքանակի աճին: Սակայն քանի որ ռեսուրսները

<sup>43</sup> Salvadori N. “Old and New Growth Theories: an Assessment”, Italy 2003, page 6.

<sup>44</sup> Ashraf Q. Galor O. “Malthusian Population Dynamics: Theory and Evidence”, March 26, 2008, page 4.



խիստ սահմանափակ են, ուստի երկարաժամկետում բնակչության թվաքանակի աճի ֆոնին սահմանային արտադրողականությունն ընկնում է, նվազում է նաև մեկ շնչին ընկնող եկամուտների մակարդակը<sup>45</sup>: Իր հերթին, որպեսզի բնակչության թվաքանակն աճի, տեխնոլոգիաները պետք է առնվազն համահունչ զարգանան<sup>46</sup>: Կարծում ենք, Մալթուսի հետ կարելի է չհամաձայնել տեխնոլոգիական առաջադիմության և ռեսուրսների սահմանափակության վերաբերյալ դատողությունների մասով, քանի որ տեխնոլոգիական առաջադիմությունը որոշակիորեն չեզոքացնում է այդ հիմնախնդիրը: Բացի այդ, նույն տեխնոլոգիական առաջադիմության արդյունքում բնական ռեսուրսների մի զգալի մասն արհեստականով մասսայական փոխարինումը զգալի վնաս է հասցնում շրջակա միջավայրին, վատթարացնում բնակչության կյանքի որակը և ձևավորում լրացուցիչ ծախսային բեռ՝ պատճառված վնասների փոխհատուցման համար:

Տնտեսական աճի **դասական մոդելները** կառուցված են այն ենթադրության վրա, որ կատարված խնայողություններն ամբողջությամբ վերածվում են ներդրումների: Արտադրական ֆունցիան, որի փոփոխականների հավելածի միջոցով կարելի է ներկայացնել տնտեսական աճը, ունի հետևյալ ընդհանրական տեսքը.

$$Y = f(K,L,N), \quad (1)$$

Որտեղ  $Y$ -ը համախառն արդյունքն է,  $K$ -ն կապիտալի պաշարն է,  $L$ -ը՝ աշխատուժը, իսկ  $N$ -ը՝ բնական ռեսուրսները կամ հողը: Մոդելից ակնհայտ է, որ համախառն արդյունքի աճը (տնտեսական աճը) ձևավորվում է կապիտալի, աշխատուժի և բնական ռեսուրսների աճի արդյունքում:

Երկարաժամկետ տնտեսական աճի վերաբերյալ **տեսությունները** վերակենդանացան 1950-1960 ական թթ<sup>47</sup>: Նորդասական դպրոցի շրջանակներում երկարաժամկետ տնտեսական աճն առաջին անգամ ուսումնասիրվել է **Սոլոուի** և **Սվենի** կողմից 1956թ.-ին: Ի տարբերություն դասականների՝ նրանք, որպես աճի վրա արտահամակարգային ազդող գործոններ, առանձնացնում են բնակչության թվաքանակը, աշխա-

<sup>45</sup> Vilaverde – Fernandez J., “Was Malthus Right? Economic Growth and Population Dynamics”, University of Pennsylvania 2001, page 2.

<sup>46</sup> Jones Ch. I., “The Facts of Economic Growth”, Stanford, 2016, page 7.

<sup>47</sup> Srinivasan T.N. “Long-Run Growth Theories and Empirics: Anything New?”, University of Chicago Press, 1995, page 39.

տանքի արտադրողականությունն ու կառուցվածքը: Ըստ **Սոլոուի**<sup>48</sup>՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար խնայողությունները, բնակչության թվաքանակը և տեխնոլոգիական առաջադիմությունը պետք է հավասարաչափ աճեն՝ չխախտելով համախառն ագրեգավորված արդյունքի աճի մեջ ունեցած իրենց մասնաբաժինները: Մեկ աշխատողի կողմից արտադրված համախառն արտադրանքի ժամանակային և երկրների զարգացման մակարդակների կտրվածքով տարբերությունները Սոլոուն պայմանավորում է 2 հիմնական գործոնով<sup>48</sup>

1. Մեկ աշխատողին ընկնող կապիտալազինվածության տարբերություններ
2. Աշխատուժի արդյունավետության տարբերություններ

Ընդորում, համախառն արդյունքի աճի համար մարդկային կապիտալին վերապահվում է առաջնային դերը: Կարծում ենք, **Սոլոուի մոդելի** հիմնական արժեքը կարելի է համարել աճի կարճաժամկետ և երկարաժամկետ գործոնների տարբերակումը: Այսպես, եթե կարճաժամկետում տնտեսական աճի վրա կարող են ազդել ինչպես տեխնոլոգիական առաջադիմությունը, այնպես էլ աշխատուժի արդյունավետությունն ու կապիտալազինվածության փոփոխությունը, ապա երկարաժամկետ աճի ապահովման համար միակ գործոն է հանդիսանում տեխնոլոգիական առաջադիմությունը: Սոլոուի մոդելի նմանությամբ **Ռամսեյ-Կասս-Կուպմանս մոդելում** նույնպես աշխատուժը և տեխնոլոգիական առաջադիմությունը հանդիսանում են տնտեսական աճի արտահամակարգային գործոններ: Այդ մոդելների հիմնական տարբերությունը պայմանավորված է կապիտալի կուտակման սկզբունքով: Վերջինում կապիտալի կուտակման աղբյուր են հանդիսանում տնային տնտեսությունների կողմից խնայողություններ կատարելու վերաբերյալ կայացված որոշումները: Ռամսեյ-Կասս-Կուպմանս մոդելի հիմնական արժանիքը ագրեգավորված աճը միկրոմակարդակում կայացվող որոշումներից բխեցումն է: Մոդելի առանցքային թերություն է տնային տնտեսությունների կառուցվածքի և թվաքանակի հաստատուն լինելու ենթադրությունը: Այդ խնդիրը լուծված է **Դայմոնդի մոդելում**: Այն հաշվի է առնում նաև բնակչության շարժը, որը փոփոխվում է՝ ծնելիությունից և մահացությունից կախված: Մոդելը մշակված է դիսկրետ (ընդհատ) շարքերի վրա, այսինքն՝ ընդգրկում է ընդամենը 2 ժամանակային պահ՝

<sup>48</sup> Romer D. “Advanced Macroeconomics”, Mc Graw – Hill Education, 1996, page 23.

այսպես կոչված երիտասարդների և տարեցների ժամանակային պահերը, որոնց խնայողություններ կատարելու վերաբերյալ որոշումները տարբեր են: Աշխատանքի շուկայում երիտասարդները, լինելով պակաս փորձառու, քիչ գումար են վաստակում, որը ծածկում է միայն սպառողական պահանջմունքները, և, բնականաբար, խնայողության նկատմամբ հակվածությունը լինում է ցածր: Տարիքի մեծացմանը զուգընթաց՝ նախկին երիտասարդ բնակիչները հասնում են իրենց վաստակած եկամուտների առավելագույն մակարդակին՝ կատարելով առավելագույն խնայողություններ, որից հետո խնայողությունների նկատմամբ սահմանային հակվածությունը կրկին սկսում է նվազել<sup>49</sup>: Մոդելի հիմնական բարդությունը սոցիալական բարեկեցության գնահատումն է:

Նորդասական դպրոցի հայտնի ներկայացուցիչներից **Չ. Կոբբի** և **Պ. Դուգլասի** կողմից մշակված **մոդելը** համախառն թողարկումը կախվածության մեջ է դնում երեք գործոնից՝ տեխնոլոգիաներ, կապիտալ և աշխատուժ:

$$Y = AK^{\alpha}L^{1-\alpha}(2)$$

որտեղ  $Y$ -ը համախառն թողարկումն է,  $K$ -ն՝ կապիտալը,  $L$ -ը՝ աշխատուժը,  $A$ -ն՝ տեխնոլոգիական առաջադիմությունը ( $A > 0$ ), իսկ  $\alpha$ -ն հաստատուն է, որն ընդունում է արժեքներ՝  $[0,1]$  միջակայքում: Մոդելի հիմնական թերություններից է հանդիսանում մասշտաբից կայուն հատույցը, որը երևում է բանաձևից (կապիտալի և աշխատուժի գործակիցների գումարը հավասար է 1-ի): Նկատենք նաև, որ Չ. Կոբբի և Պ. Դուգլասի կողմից արտադրական ֆունկցիայի մոդելավորման հիմքում դրված են 1899-1922թթ. ԱՄՆ վերամշակող արդյունաբերության աճի ցուցանիշները<sup>50</sup>, ինչը դարձել է քննադատությունների թիրախ: Առաջին հերթին, Կոբբ-Դուգլաս մոդելը դինամիկ բազայի վրա կառուցված ստատիկ մոդել է, ինչը, բնականաբար, վիճակագրորեն հիմնավոր չէ, մյուս կողմից, միայն վերամշակող արդյունաբերության ցուցանիշների հիման վրա արտածված մոդելը դեռևս չի կարելի համարել տնտեսական աճի մոդել, քանի որ դրա կիրառելիությունը սահմանափակվում է տնտեսության ընդամենը մեկ ճյուղով: Կոբբ-Դուգլաս մոդելի քննադատությամբ են հանդես եկել Մ. Քլարկը և Հ. Շուլցը: Քլարկը, մտահոգված լինելով ստատիկ մոդելը դինամիկ շարքերով մոտարկելու միջոցով ֆունկ-

<sup>49</sup> Schenck D. “Notes on Growth Theory, Ec750”, Boston College, Department of Economics, May, 2012, page 35.

<sup>50</sup> Hong B. T., “Cobb-Douglas Production Function”, Tan, November, 2008, page 1.

ցիայի արտաձման հանգամանքով, այնուամենայնիվ, կառուցողական մոտեցում ցուցաբերեց՝ առաջարկելով այլընտրանքային մոդել, որը հնարավորություն է տալիս գնահատել ինչպես տնտեսության ցիկլայնության ազդեցությունը համախառն արդյունքի վրա, այնպես էլ երկարաժամկետ կայուն արտադրական հարաբերությունները<sup>51</sup>: Իսկ Հենրի Շուլցն առաջարկեց իր կողմից մշակված մեթոդաբանություն՝ վիճակագրական բազայի հետ կապված վերոնշյալ խնդիրը լուծելու համար<sup>52</sup>: Իր հերթին, Հորսթ Մենդերշաուսեն կասկածի տակ է առել Կորբ-Դուգլասի տնտեսաչափական մոդելը և նշել, որ եթե նույնիսկ մոդելում արտացոլված փոփոխականների միջև գոյություն ունի փոխկախվածություն, ապա դժվար թե հնարավոր լինի հեղինակների կողմից առաջարկվող վիճակագրական շարքերի միջոցով այն գնահատել<sup>53</sup>:

Այսպիսով, պետք է փաստել, որ չնայած դասականները խոսել են տեխնոլոգիական գործոնի մասին, սակայն այն որևէ կերպ չի արտացոլվել նրանց կողմից մշակված աճի մոդելներում, քանի որ համարվել է արտահամակարգային գործոն, ինչն էլ, ըստ էության, հանդիսանում է դասական և նորդասական դպրոցների կողմից առաջարկվող աճի մոդելների նմանությունը:

**Էնդոգեն աճի տեսությունները** մշակվել են 1980-ական թվականներին, որը հիմնականում պայմանավորված է այդ ժամանակահատվածում էզոգեն աճի տեսությունների թույլ կիրառություն ունենալու հանգամանքով և առաջ քաշված նոր հարցադրումներին վերջիններիս կողմից պատասխանելու սահմանափակ հնարավորություններով, որոնցից Ջեֆրեյ Պարկերն առանձնացնում է հետևյալները<sup>54</sup>.

1. Էզոգեն աճի տեսությունները չեն պատասխանում այն հարցին, թե ինչու է տնտեսական աճի տեմպը փոփոխվում տարբեր ժամանակահատվածներում, ինչը բխում է տնտեսական աճի էզոգեն մեկնաբանության տրամաբանությունից

---

<sup>51</sup> Biddle J. E., “The Introduction of Cobb Douglas Regression and its Adoption by Agriculture”, Dept. of Economics Michigan State University, October 2010, page 8.

<sup>52</sup> Տե՛ս, նույն տեղում

<sup>53</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 14:

<sup>54</sup> Parker J., “Empirical Evidence on Economic Growth”, Economics 314 coursebook, chapter 6, 2010, page 2.

2. Էզզոգեն աճի տեսությունները հնարավորություն չեն տալիս բացահայտելու երկրների և տարածաշրջանների միջև մեկ շնչին ընկնող եկամուտների զգալի և տևական տարբերությունները
3. Նորդասական տեսաբանների կողմից մշակված մոդելները համապատասխան մեխանիզմներ չեն առաջարկում խնայողությունների և ներդրումների ազդեցությունը կայուն երկարաժամկետ աճի վրա բնութագրելու համար

Տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի էզզոգեն տեսությունների քննադատությամբ են հանդես եկել Գրոսմանը և Հելփմանը: Նրանք գտնում են, որ «էզզոգեն տեսությունները չեն բնորոշում իրական աշխարհի կայուն աճի մեխանիզմները»<sup>55</sup>: Հղում կատարելով մի շարք հեղինակների՝ Գրոսմանը և Հելփմանն ընդունում են, որ «տեխնոլոգիական փոփոխությունները երկարաժամկետում հանդես են գալիս որպես կենսամակարդակի բարձրացման շարժիչ ուժ»<sup>56</sup>: Էնդոգեն աճի տեսությունները տնտեսության երկարաժամկետ աճը պայմանավորում են ներհամակարգային գործոնների ազդեցությամբ, որի ակունքներում կանգնած են **Փ. Ռոմերը** և **Ռ. Լուկասը**: Ռոմերի կողմից մշակված աճի տեսության հիմքում ընկած է տեխնոլոգիական գործոնը, որն էնդոգեն փոփոխական է և հանդիսանում է տնտեսական գործակալների կողմից կայացված որոշումների արդյունք: Նա տնտեսության մեջ տեխնոլոգիական գործոնի իրացումը բաժանում է 3 հիմնական փուլերի<sup>57</sup>

1. Հետազոտությունների փուլ – որտեղ նախկինում կուտակված գիտելիքները, համակցվելով առկա մարդկային կապիտալին, ի հայտ են բերում նոր գիտելիքներ
2. Միջանկյալ ապրանքների արտադրության փուլ – որտեղ նոր գիտելիքներն ունեն նյութաիրային տեսք (օրինակ՝ թողարկվում են արդյունաբերական նմուշներ, ապրանքային նշաններ և այլն) և, որպես կանոն, արտոնագրվում են՝ ապահովելով գյուտի նկատմամբ դրա սեփականատիրոջ սեփականության իրավունքի իրավական պաշտպանությունը
3. Վերջնական ապրանքների արտադրության փուլ – որտեղ նախորդ փուլում ձևավորված և արտոնագրերում առարկայացած նորարարությունների ու գյուտերի,

<sup>55</sup> Grossman G.M., Helpman E., “Endogenous Innovation in the Theory of Growth”, Cambridge 1993, page 24.

<sup>56</sup> Տե՛ս, նույն տեղում

<sup>57</sup> Romer P. M. “Endogenous Technological Change”, University of Chicago, page 79

մարդկային կապիտալի և աշխատուժի համակցման միջոցով թողարկվում են վերջնական սպառման ապրանքներն ու ծառայությունները

Ռոմերի տնտեսական աճի **մոդելի** հիմքում ընկած է Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան, որից վերջինս տարբերվում է մոդելի համար կատարված ենթադրություններով: Մասնավորապես, հեղինակն առանձնացնում է մարդկային կապիտալն աշխատուժից և գտնում, որ նոր գիտելիքների ստեղծման շարժիչ ուժը հանդիսանում է մարդկային կապիտալը, իսկ աշխատուժին վերագրվում է բացառապես ֆիզիկական աշխատանք կատարելու հնարավորությունը: Գիտելիքները տարբերակվում են **մրցակցայինի** (որն առարկայանում է մարդկային կապիտալի մեջ) և **ոչ մրցակցայինի** (որը տեխնոլոգիական բաղադրիչն է և կարող է անվերջ աճել): Դրանք քանակապես չափվում են արտոնագրերի թվաքանակով: Մոդելի հիմնական թերություններից է տեխնոլոգիական առաջադիմություն ապահովելու գործում աշխատուժի և ֆիզիկական կապիտալի դերի անտեսումը նոր գիտելիքների ստեղծման մեջ, ինչը, կարծում ենք, իրատեսական չէ, հատկապես ֆիզիկական կապիտալի մասով: Պատահական չէ երկրների կողմից հսկայածավալ ֆինանսական ռեսուրսների ուղղորդումը գիտության ոլորտ, որը գալիս է հիմնավորելու վերոնշյալ պնդումը: Չնայած որպես մոդելի առավելություն կարելի է մատնանշել միկրոմակարդակից ագրեգավորման միջոցով մակրոմոդելավորումը, այնուամենայնիվ կարծում ենք, որ կատարված ենթադրությունները զգալիորեն սահմանափակում են վերջինիս գործնական կիրառության ուղիները: Որպես մոդելի հիմնական սահմանափակումներ են հանդես գալիս հետևյալները<sup>58</sup>

1. Բնակչության թվաքանակը և աշխատուժի առաջարկը հաստատուն են
2. Մարդկային կապիտալը չի փոփոխվում, այսինքն՝ ժամանակի ընթացքում ձեռքբերված գիտելիքներն ու փորձը հավասար են զրոյի
3. Նոր գիտելիքների ստեղծումը պայմանավորված է բացառապես մարդկային կապիտալով

Ի տարբերություն **Ռոմերի**՝ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի գնահատմանը՝ **Ռ. Լուկասի աճի մոդելի** հիմքում ընկած է մարդկային կապիտալը, որի

---

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղում

կուտակումը նպաստում է ինչպես աշխատուժի, այնպես էլ ֆիզիկական կապիտալի արտադրողականության բարձրացմանը: Լուկասի առաջադրած գաղափարը զերծ չի մնացել բուռն քննադատություններից: Մասնավորապես քննադատության առարկա է դարձել այն հարցը, թե ինչ ձևով է մարդկային կապիտալն ազդում տնտեսական աճի վրա<sup>59</sup>: Եթե Ռոմերի մոդելում մարդկային կապիտալի գործունեության արդյունքը այս կամ այն կերպ առարկայանում է տեխնոլոգիական գործոնի մեջ, ինչը դրսևորվում է որպես մարդկային կապիտալի գնահատման միջոց և քիչ թե շատ չափելի կամ ընկալելի դառնում, ապա մարդկային կապիտալի սահմանները, լայն իմաստով, որպես տնտեսական աճի վրա ազդող գործոն, դժվար է որոշել: Հանուն արդարության նշենք, որ Լուկասի տնտեսական աճի մոդելը ժամանակագրական առումով մի փոքր ավելի վաղ է ներկայացվել (1988թ.), քան Ռոմերի մոդելը (1990թ.), ուստի կարծում ենք՝ Ռոմերի մոդելը կարելի է ընդունել որպես Լուկասի մոդելի լրացված, փոքր-ինչ հստակեցված տարբերակ: Նկատենք, որ Լուկասի մոդելն ունի որոշակի նմանություն Սոլոուի մոդելի հետ: Ինչպես Սոլոուի, այնպես էլ Լուկասի մոդելում տնտեսական աճի կարևորագույն գործոն է հանդես գալիս աշխատուժի աճը, սակայն, ի տարբերություն Սոլոուի, Լուկասի մոդելում այն ոչ թե արտահամակարգային, տրված մեծություն է, այլ՝ ներհամակարգային: Ենթադրվում է, որ տնտեսական համակարգի անբաժան մասը կազմող անհատները կամ տնտեսական գործակալները ձգտում են առավելագույնս արդյունավետ օգտագործել իրենց ժամանակը՝ բաժանելով այն երկու մասի՝ աշխատանքային և նոր հմտությունների ձեռքբերման ժամանակի: Վերջինիս նպատակը ապագայում աշխատանքի արտադրողականության բարձրացումն է<sup>60</sup>: Լուկասի մոդելում ենթադրվում է, որ մարդկային կապիտալը գծային ֆունկցիոնալ կախվածության մեջ է ժամանակից. յուրաքանչյուր հաջորդ ժամանակային պահին կուտակված գիտելիքներն ու հմտությունները գերազանցում են նախորդ պահին կուտակված գիտելիքների ու հմտությունների մակարդակը<sup>61</sup>:

<sup>59</sup> Leeuwen Van Bas “Is Lucas Right? On the role of human capital in growth theory”, Human Capital and Economic Growth, page 155.

<sup>60</sup> Schutt F., “The importance of Human Capital for Economic Growth”, Germany 2003, page 9

<sup>61</sup> Verspagen B., “Endogenous Innovation in Neo-Classical Growth models: A Survey”, Louisiana State University Press, Journal of Macroeconomics, 14 (4), 1992, page 640.

Էնդոգեն աճի պարզագույն մոդել է համարվում 1962թ.-ին **Ֆրանկելի** կողմից մշակված **AK մոդելը**: Մոդելի հիմքում ընկած է Հարրոդ-Դոմար մոդելի քննադատությամբ, որն ըստ Ֆրանկելի մեկ գործոնի՝ կապիտալի վրա հիմնված պարզագույն մոդել է և պատկերացում չի տալիս ռեսուրսների բաշխման և եկամուտների վերաբաշխման մասին<sup>62</sup>: Ֆրանկելն անդրադարձել է նաև Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիային, որը, չնայած որոշակիորեն լուծում է ռեսուրսների բաշխման և եկամուտների վերաբաշխման խնդիրները, սակայն տնտեսական աճը կախվածության մեջ է դնում աշխատուժի աճի տեմպից, իսկ ներդրումները չեն ազդում ոչ ագրեգավորված աճի և ոչ էլ արտադրողականության փոփոխության վրա<sup>63</sup>: Ֆրանկելի AK մոդելը հանդիսանում է ագրեգավորված աճի մոդել: Մոդելում ենթադրվում է, որ զարգացած տնտեսական համակարգում գործող ձեռնարկությունները նույն կապիտալի և աշխատուժի միջոցով կարող են ավելի շատ արտադրանք թողարկել, քան թույլ զարգացած տնտեսական համակարգում գործողները, ինչի պատճառը, կարծում ենք, պայմանավորված է տեխնոլոգիական գործոնով:

Էնդոգեն աճի մեկ այլ տեսաբան **Ս. Ռեբելոն** իր արտադրական ֆունկցիայի կառուցումն սկսում է՝ արտադրության գործոնները երկու խմբի բաժանելով՝ վերարտադրվելու ունակությամբ օժտված գործոններ, որոնք ժամանակի ընթացքում կուտակվում են, և վերարտադրվելու ունակություն չունեցող գործոններ, որոնք ժամանակի ընթացքում ոչ ավելանում և ոչ էլ պակասում են<sup>64</sup>: Ընդ որում, ֆիզիկական և մարդկային կապիտալը համարվում են վերարտադրվող, իսկ հողը՝ չվերարտադրվող գործոններ: Ինչպես Լուկասի, այնպես էլ Ռեբելոյի մոդելում մարդկային կապիտալը կարող է անվերջ աճել, ինչը հանդիսանում է քննադատության առարկա: Որպես վերջինիս դեմ ուղղված հակափաստարկ՝ որոշ տեսաբաններ շեշտադրում են այն հանգամանքը, որ աշխատանքային այս կամ այն հմտությունը ձեռք է բերվում ժամանակի ընթացքում և խիստ անհատական է, ուստի այն չի կարող փոխանցվել սերնդե-

---

<sup>62</sup> Cesaratto S., “Endogenous growth theory twenty years after: a critical assessment”, University of Siena, Berlin, 2008, page 2.

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում

<sup>64</sup> Rebelo S., “Long-Run Policy Analysis and Long-Run Growth”, The Journal of Political Economy, Vol. 99, N 3, 1991, page 502.



սերունդ, և հետևաբար մարդկային կապիտալն անվերջ աճել չի կարող<sup>65</sup>: Նշենք, որ այս հակափաստարկի կողմնակիցները աշխատանքային հմտությունները տարանջատում են հանրության կողմից կուտակված գիտելիքի պաշարից, որն իհարկե կարող է սերնդից սերունդ փոխանցվել և մարդկային կապիտալն առավելապես բնորոշում են կուտակված հմտություններով: Ս.Ռեբելուն երկրների միջև տնտեսական աճի տարբերությունները պայմանավորում է կառավարությունների կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունների տարբերություններով:

Ընդհանրապես, էնդոգեն աճի **մոդելները** երկարաժամկետ տնտեսական աճը պայմանավորում են տեխնոլոգիական գործոնով և նորարարություններով՝ դրանք խթանելու համար կարևորելով հատկապես կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը: Այդ առումով էնդոգեն աճի և քեյնսյան աճի տեսությունների շփման սահմանը կարելի է համարել տնտեսական գործընթացներին **պետական միջամտության** անհրաժեշտությունը:

Հայտնի տնտեսագետ **Չ. Ջոնսը**, համադրելով 1950-1987թթ. ԱՄՆ գիտաշխատողների թվաքանակը նույն ժամանակահատվածում տնտեսական աճի հետ և կատարելով որոշակի տնտեսաչափական վերլուծություններ, կասկածի տակ դրեց էնդոգեն տեսություններում առաջադրված վերոնշյալ տեսակետը: Մինևույն ժամանակ, հիմքից չմերժելով էնդոգեն աճի **մոդելները**՝ նա մշակեց, այսպես կոչված, «**հիբրիդային**» **աճի մոդել**: Ռոմերի մոդելի նմանությամբ Ջոնսի մոդելում տնտեսությունը բաժանված է երեք հատվածի՝ վերջնական արտադրանքի թողարկման, միջանկյալ արտադրանքի թողարկման և գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական հատվածի<sup>66</sup>: Որպես մոդելի կարևորագույն արժեք՝ կարելի է առանձնացնել տեխնոլոգիական գործոնի էնդոգեն, իսկ բնակչության թվաքանակի՝ էզոգեն լինելու հանգամանքը<sup>67</sup>, որոնց միջև առկա է որոշակի փոխկապվածություն: Ինչ վերաբերում է մարդ-

<sup>65</sup> McCallum B. T., “Neoclassical vs. Endogenous Growth Analysis: An Overview”, Federal Reserve Bank of Richmond, Vol. 82/4, 1996, page 58.

<sup>66</sup> Jones Ch. I., “R&D-Based Models of Economic Growth”, The Journal of Political Economy, Vol. 103 (4), August 1995, page 767.

<sup>67</sup> Chol-Won Li “Endogenous vs. Semi-endogenous Growth in a Two-R&D-Sector Model”, University of Glasgow, January 1999, page 1.

կային կապիտալի կուտակման խնդրին, ապա այն, ի տարբերություն Լուկասի մոդելի, ունի ոչ գծային տեսք, որը նույնպես մոդելի կարևորագույն առավելություններից է:

Տնտեսական աճի **էմպիրիկ տեսությունները** հիմնված են երկարաժամկետ վիճակագրական բազաների համադրության և օրինաչափությունների բացահայտման փորձագիտական գնահատումների վրա: Որպես տնտեսական աճի վրա ազդող կարևորագույն գործոններ են առանձնացվում եկամուտների սկզբնական մակարդակը, ներդրումները, բնակչության աճը, քաղաքական կայունությունը, շուկայի անկատարությունը և ֆինանսական շուկաների զարգացումը: Էմպիրիկ աճի տեսությունն առաջին հերթին կապված է **Ն. Կալդորի** անվան հետ: Նա հավաքագրելով մոտ 50 տարվա վիճակագրական բազա «**ոճավորված» փաստերի** միջոցով ամփոփեց 20-րդ դարում աճի տեսությունների հիմնական արդյունքները, որոնք հանգում են հետևյալին<sup>68</sup>՝

1. Աշխատուժի արտադրողականությունն ուսումնասիրվող ժամանակահատվածում կայուն տեմպով աճել է
2. Մեկ աշխատողին ընկնող կապիտալազինվածության մակարդակը նույնպես կայուն տեմպով աճել է
3. Իրական տոկոսադրույքը մնացել է անփոփոխ
4. Ազգային եկամտի մեջ կապիտալի և աշխատուժի մասնաբաժինները մնացել են նույն մակարդակի վրա
5. Կապիտալի և համախառն թողարկման հարաբերակցությունը չի փոփոխվել
6. Արագ զարգացող երկրներում տնտեսական աճի տեմպն զգալիորեն տարբերվել է մյուս երկրների աճի տեմպերից

Ն. Կալդորը երկարաժամկետ տնտեսական աճի համար առանձնակի կարեւորություն է տալիս պահանջարկի գործոնին և դրա վրա ազդող էզզոգեն բաղադրիչների<sup>69</sup>, ինչը բնորոշ է դասական դպրոցի մոտեցումներին: Մեկ այլ էմպիրիկ տեսաբան **Էդվարդ Դենիսոնը** ԱՄՆ տնտեսական աճի ուսումնասիրության ժամանակ դրա վրա ազդող գործոնները դիտարկում է քանակական և որակական փոփոխությունների

<sup>68</sup> Jones Ch. I., Romer P., “The New Kaldor Facts: Ideas, Institutions, Population, and Human Capital”, American Economic Journal: Macroeconomics Vol. 2:1, 2010, page 2.

<sup>69</sup> Libanio G., Moro S., “Manufacturing Industry and Economic Growth in Latin America: A Kaldorian Approach”, Brazil, page 2.

տեսանկյունից՝ վերջինի տակ նկատի ունենալով գործոնների արտադրողականությամբ (տեսությունը): Նրա հետազոտության համաձայն՝ 1929-1982թթ. ԱՄՆ-ի 1% տնտեսական աճը 2/3 մասով պայմանավորված է եղել արտադրության գործոնների քանակական ավելացմամբ և 1/3 մասով գործոնների արտադրողականության բարձրացմամբ<sup>70</sup>: Կարելի է ենթադրել, որ գործոնների արտադրողականության փոփոխությունը պայմանավորված է տեխնոլոգիաներով, և այն դիտարկելով որպես որակական փոփոխություն՝ փաստորեն, Դենիսոնն ընդգծում է որակյալ աճի համար տեխնոլոգիաների կարևորությունը: Որպես տնտեսական աճը բնութագրող ցուցանիշ՝ Դենիսոնն ընտրել է ազգային եկամուտը, որտեղ անուղղակի հարկերը հաշվառված չեն, ինչը խոցելի է քննադատությունների համար: Երկարաժամկետ տնտեսական աճի էմպիրիկ ուսումնասիրություններում մեծ ավանդ ունի նաև **Ա. Մեդիսոնը**, ում կողմից դեռևս 1700-ական թվականներից մինչ մեր ժամանակները հավաքագրված վիճակագրությունը ցույց է տալիս, որ, տեխնոլոգիական գործոնով պայմանավորված, զարգացած երկրներում աշխատանքի արտադրողականությունը և հետևաբար տնտեսական աճի տեմպը բարձր է<sup>71</sup>:

Հաշվի առնելով տնտեսական աճը պայմանավորող գործոնները և դրանց մեջ հատկապես տեխնոլոգիական գործոնը՝ տնտեսական աճի տեսությունների և դրանց շրջանակներում առաջադրված թեզիսների վրա մշակված մոդելների էվոլյուցիան կարելի է ներկայացնել երկու հիմնական խմբում՝ էզոգեն և էնդոգեն աճի տեսություններ: Առաջին խմբին պատկանող տեսությունների շարքին են դասվում քեյնսյան և նորքեյնսյան, դասական և նորդասական տեսությունները, որոնց շրջանակներում տեխնոլոգիական առաջադիմությունը քննարկվում է տնտեսական համակարգից դուրս: Քեյնսյան դպրոցը, տնտեսական աճը պայմանավորելով ամբողջական պահանջարկով, առաջ է քաշում տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, մինչդեռ դասականներն այն պայմանավորում են ամբողջական առաջարկով և, որպես հետևանք, հանդես են գալիս ազատ շուկայական հարաբերությունների դիրքերից: Տնտեսական պատմությունը ցույց է տալիս, որ թե՛ պետությանը և թե՛ շուկային

<sup>70</sup> Parker J., “Empirical Evidence on Economic Growth”, Economics 314 coursebook, chapter 6, 2010, page 4.

<sup>71</sup> Gould D.M., Ruffin R.J., “What Determines Economic Growth?”, Economic review – Second Quarter, 1993, page 26.

բնորոշ են ձախողումները, հետևաբար դրանք երկուսն էլ բախվում են իռացիոնալության հիմնախնդրին, որին, սակայն, որևէ կերպ անդրադարձ չի կատարվել այդ դպրոցի տեսաբանների կողմից: Երկրորդ՝ էնդոգեն աճի տեսությունները տեխնոլոգիական առաջադիմությունը դիտարկում են տնտեսական համակարգի ներսում: Այս խմբին պատկանող տեսությունները տեխնոլոգիական գործոնը դնում են երկարաժամկետ տնտեսական աճի հիմքերում և նորարարությունների խթանման համար որոշակիորեն կարևորում են պետական միջամտությունը: Վերոնշյալ դասակարգումից զատ, գոյություն ունեն նաև էմպիրիկ աճի տեսություններ, որոնք էնդոգեն աճի տեսությունների նման ունեն երկարաժամկետ աճերի ուսումնասիրության կողմնորոշում, որն իրականացնում են երկարաժամկետ վիճակագրական տվյալների համեմատական վերլուծության և բացահայտված օրինաչափությունները, այսպես կոչված, «ոճավորված» փաստերով ներկայացնելու միջոցով:

### **1.3. Երկարաժամկետ տնտեսական աճիկայունության հիմնախնդիրները ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում**

Տնտեսական աճի տեսություններն ու մշակված մոդելները հանդիսանում են կոնկրետ ժամանակաշրջանում տիրապետող տնտեսագիտական մտքի ուղղակի արդյունքը: Տնտեսական պատմությունը ցույց է տալիս, որ տնտեսագիտական մտքի զարգացման մեջ բավականին ազդեցիկ դերակատարում է ունեցել, այսպես կոչված, «**մեյնսթրիմյան**» ուղղությունը: Այն տիրապետող է եղել ավելի քան երկու դար և ընգրկել է դասական ու նորդասական տնտեսագիտական տեսությունների ողջ էվոլյուցիան: «Մեյնսթրիմի» քննադատությամբ դրվեց **ժամանակակից (modern)** տնտեսագիտության սկիզբը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամերի բազմաթիվ օրինակները գալիս են հիմնավորելու նորդասական տեսությունների սահմանափակ և իրականությունից կտրված լինելու հանգամանքը: Ժամանակակից տնտեսագիտությունը քննադատեց նորդասական տեսությունների հիմք հանդիսացող մի շարք ենթադրություններն ու վերացարկումները, ինչպիսիք են օրինակ՝ կատարյալ մրցակցությու-

յունը, շուկայի ինքակարգավորման հատկությունը և այլն: Ըստ Դ. Դեքեչի՝ նորդասական տեսությունները կառուցված են ստորև ներկայացված ենթադրությունների վրա<sup>72</sup>.

1. Ռացիոնալ վարքագծի շեշտադրումը և որպես ռացիոնալ վարքագծի դրսևորում օգտակարության մաքսիմալացումը
2. Տնտեսության հավասարակշռությունը
3. Բազմաթիվ անորոշությունների անտեսումը

Տնտեսագիտական ուղղությունների էվոյուցիան ուսումնասիրող հեղինակներից Մ. Դե Վրոեն և Լ. Պենսիերոսոն՝ որպես մեյնսթրիմի քննադատներ, հիշատակում են Դ. Կոլանդերի անունը, ում գիտական հայացքները հետագայում զարգացրեցին Ռ. Հոլթը և Բ. Ռոսերը<sup>73</sup>: Ժամանակակից տնտեսագիտության մասին Կոլանդերն ասել է. «Ես միանգամայն համաձայն եմ, որ նորդասական տնտեսագիտության որոշ տեսակետներ ժամանակակից տնտեսագիտության մաս են կազմում... բայց իմ կարծիքով ժամանակակից տնտեսագիտությունը հիմնովին տարբերվում է նորդասական տնտեսագիտությունից: Ժամանակակից տնտեսագիտությունն ունի ավելի լայն աշխարհայացք...»<sup>74</sup>: Նկատենք, որ ժամանակակից տեսաբանների քննադատության հիմնական թիրախը ոչ թե դասական և նորդասական տեսությունների հիմքից մերժումն է, այլ դրանց սահմանափակումների վերացումը, որտեղ անտեսված են տնտեսական համակարգի վրա ազդող բազմաթիվ ազդակների ազդեցություններ: Կոլանդերի, Հոլթի և Ռոսերի համահեղինակությամբ հրատարակված հոդվածներից մեկում նշվում է, որ «տնտեսագիտության պատմության մեջ կան բազմաթիվ օրինակներ, երբ հին գաղափարները վերաիմաստավորվում և առավել օգտակար կիրառություն են գտնում նոր համատեքստի մեջ... Նախկինում տնտեսագիտության մեջ առանցքային համարվող գաղափարները կերպափոխվում և ավելի ընդգրկուն են դառնում, ինչը փոխում է տնտեսագիտության էությունը»<sup>75</sup>: Տնտեսագիտության ժամանակակից տեսությունները

<sup>72</sup> Dequech D. “Neoclassical, mainstream, orthodox, and heterodox economics”, Journal of Post Keynesian Economics, Vol. 30(2), 2007, page 280.

<sup>73</sup> M. De Vroey and L. Pensieroso, “The Rise of a Mainstream in Economics”, Discussion Paper 2016-26, page 1.

<sup>74</sup> Colander D., “The Death of Neoclassical Economics”, Journal of the History of Economic Thought, Volume 22, NO. 2, 2000, page 133.

<sup>75</sup> Colander D., Holt R., Rosser B., “The Changing Face of Mainstream Economics”, Middlebury college economics discussion paper NO. 03-27, November 2003, page 2-3.

մրցունակ տնտեսական համակարգ ձևավորելու հիմքում դնում են նորարարություններն ու տեխնոլոգիական փոփոխությունները, առանց որոնց երկրները չեն կարող ապահովել երկարաժամկետ կայուն տնտեսական աճ: Պատահական չէ, որ Փ. Սամուելսոնը և Վ. Նորդհաուսը, որպես ժամանակակից տնտեսագիտության առանձնահատկություն, առանձնացնում են նորարարությունների արագ տարածումն ըստ էության տնտեսության բոլոր ճյուղերում<sup>76</sup>:

Տնտեսագիտության տեսության ժամանակակից ուղղություններից է ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը: Այն տնտեսական աճի հիմքում դնում է արդյունավետ ինստիտուտների անհրաժեշտությունը, որոնք պայմանավորում են ոչ միայն նորարարություններն ու տեխնոլոգիական փոփոխությունները, այլև ստեղծված համախառն արդյունքի արդյունավետ բաշխումն ու վերաբաշխումը: Չնայած **«ինստիտուտը»**, որպես այդպիսին, հանդիսանում է ոչ միայն տնտեսագիտական, այլև սոցիոլոգիական կատեգորիա, այնուամենայնիվ պետք է ընդունել, որ այն ունի առանցքային դերակատարություն հասարակական կյանքի հատկապես տնտեսական ոլորտում: Վ. Ն. Տարասևիչն իր հոդվածներից մեկում մեջբերում է Թ. Վերլենի տեսակետը, համաձայն որի՝ **«բոլոր ինստիտուտները կարելի է այս կամ այն չափով համարել տնտեսական ինստիտուտներ»**<sup>77</sup>: Ինստիտուտը պարզագույն սահմանմամբ սոցիալական օրենքների ամբողջությունն է, որտեղ իրենց ուրույն տեղն ունեն կազմակերպությունները<sup>78</sup>: Անհրաժեշտ է ինստիտուտները տարբերել կազմակերպություններից: Ինստիտուտները հանդիսանում են խաղի կանոնները, իսկ կազմակերպությունները այդ կանոններով խաղացողները: Դ. Նորթը ինստիտուտը սահմանում է հետևյալ կերպ. **«Ինստիտուտները հասարակության մեջ գոյություն ունեցող խաղի կանոններն են կամ մարդ-կանց կողմից մշակված սահմանափակումները, որոնք պայմանավորում են մարդ-կային փոխհարաբերությունների բնույթը»**<sup>79</sup>: Ըստ էության, Նորթի տված սահմանումը

<sup>76</sup> Samuelson P.A., Nordhaus W.D., “Economics”, 16th Edition, McGraw – Hill companies, 1998, page 16.

<sup>77</sup> Тарасевич В. Н. “Что такое институт? (опыт институциональной эволюции)”, журнал институциональных исследований, №3, 2010, стр. 6.

<sup>78</sup> Hodgson G.M., “What are Institutions?”, Journal of Economic Issues No. 1, March 2006, page 8.

<sup>79</sup> Acemoglu D., Johnson S., Robinson J.A., “Institutions as a Fundamental Cause of Long-Run Growth”, Handbook of economic growth, Vol. 1A, 2005, page 388.

վերաբերում է ոչ ֆորմալ ինստիտուտներին և մասամբ է բացահայտում դրա էություն: Ինստիտուտները կարող են լինել ինչպես ոչ ֆորմալ, այնպես էլ ֆորմալ: Ինստիտուտների Ֆորմալության շեշտադրումով սահմանում է տվել Վ. Ֆ. Իսլամուտդինովը: Նա, ընդհանրացնելով մի շարք հեղինակների կողմից տրված (ինչպիսիք են օրինակ՝ Թ. Փարսոնը, Վ. Բ. Կոռնեյչուկը, Դ. Ս. Լվովը և այլք) «ինստիտուտի» սահմանումները, այն ներկայացնում է որպես **միջանձնային փոխհարաբերությունների համար ընդունված նորմերի և կանոնների ամբողջություն**<sup>80</sup>: Կարծում ենք՝ ինստիտուտի առավել ընդհանրական սահմանում կարելի է համարել հետևյալը. «**ինստիտուտները ներդրված երկարաժամկետ սոցիալական օրենքներն ու կոնվենցիաներն են, որոնք ձևավորում են սոցիալական փոխհարաբերությունները**»<sup>81</sup>: Վերջինս, կարծում ենք, կարելի է ընդունել որպես «ինստիտուտի» գոյություն ունեցող բազմաթիվ բնորոշումների այսպես կոչված «խտացված» սահմանում, որի մեջ, կարծում ենք, կարելի է կատարել փոքրիկ լրացում: Բանն այն է, որ ինստիտուտները ձևավորում են ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական փոխհարաբերություններ:

Ինչպես արդեն կարելի էր ենթադրել, լայն իմաստով ինստիտուտները դասակարգվում են երեք խմբում՝

1. Ֆորմալ ինստիտուտներ - Ֆորմալ ինստիտուտներին են վերաբերում իրավական ուժ ունեցող կարգավորման գործիքների ողջ համակարգը: Որպես այդպիսի ինստիտուտներ են երկրում գործող օրենսդրական դաշտը, նորմատիվ իրավական ակտերը, կառավարության և տարբեր գերատեսչությունների պաշտոնական որոշումները և այլն
2. Ոչ ֆորմալ ինստիտուտներ – Ոչ ֆորմալ են այն ինստիտուտները, որոնք չունեն իրավական ուժ և գործում են որպես հասարակության կողմից ընդունված «չգրված օրենքներ», ինչպիսիք են օրինակ՝ ավանդույթները, բարքերը, հասարակության կողմից ընդունված վարքականոնները և այլն
3. Հարկադրանքի մեխանիզմներ, որոնք պայանավորում են ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ ինստիտուտների անխափան գործունեությունը:

<sup>80</sup> Исламутдинов В.Ф. “Сущность и классификация институтов институциональной среды инновационной деятельности”, журнал институциональных исследований, №2, 2014, стр. 80.

<sup>81</sup> Wiggins S., Junior D., “IPPG Briefing Paper No. Three”, Manchester, July 2006, page 1

Պատմականորեն ինստիտուտները դասակարգվում են երկու խմբում<sup>82</sup>

1. Ընդհանուր ինստիտուտներ – որոնք տարածվում են հասարակության բոլոր անդամների վրա (օրինակ՝ Եվրոպայում նոտարի ինստիտուտի ձևավորումը 11-րդ դարում)
2. Մասնագիտացված ինստիտուտներ – որոնք տարածվում են հասարակության որոշ խմբերի կամ կաստաների վրա

Ոչ ֆորմալ ինստիտուտները մասնագիտացված ինստիտուտների անբաժանելի մասն են կազմում: Ոչ ֆորմալ ինստիտուտների թերզարգացածությունը տնտեսական սուբյեկտներին, սեփական իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար, ստիպում է հաստատել պայմանագրային հարաբերություններ, ինչն էլ բնականաբար հանգեցնում է լրացուցիչ ծախսերի՝ գործարքային ծախսերի իրականացմանը: Երբեմն հասարակության առանձին խմբերի կողմից ձևավորված ոչ ֆորմալ ինստիտուտներն ավելի արդյունավետ են գործում (Մադրիդյան առևտրականների օրինակ<sup>83</sup>), քան ֆորմալ ինստիտուտները, քանի որ դրանք հիմնվում են նույնատիպ շահեր հետապնդող անձանց միավորման վրա: Ոչ ֆորմալ ինստիտուտների դերը կարևոր է գործարքային ծախսերի կրճատման համար: Այս առումով, իհարկե, մասնագիտացված ինստիտուտների ձևավորումը նպաստում է հասարակության որոշ խմբերի բարեկեցության բարձրացմանը, սակայն մյուս կողմից՝ այդ խումբն աստիճանաբար սկսում է վերածվել օլիգոպոլիա հիշեցնող փակ խմբավորման, որտեղ տնտեսական այլ գործակալների մուտքը դառնում է գրեթե անհնարին: Առավել ծայրահեղ դեպքերում այդ խմբավորումները հզորա-նալով կարող են ճնշում գործադրել երկրի կառավարության վրա՝ լրացուցիչ շահեկան արտոնություններ ստանալու համար: Արդյունքում սահմանափակվում է տնտեսական սուբյեկտների միջև մրցակցությունը և նրանց մի զգալի մասը հայտնվում է «խաղից դուրս» վիճակում: Ուստի ընդհանուր ֆորմալ ինստիտուտներն այս առումով առանձ-նակի կարևորություն են ստանում: Սակայն վերջիններիս դերի մեծացումը նույնպես կարող է խնդրահարույց լինել, քանի որ այդ պարագայում մասնագիտացված ինստիտուտների շրջանակներում գործող

<sup>82</sup> Ogilive Sh., Carus A.W., “Institutions and Economic Growth in Historical Perspective”, University of Cambridge, United Kingdom, page 429.

<sup>83</sup> Մադրիդյան առևտրականների օրինակը տե՛ս նույն տեղում, էջ 408



խմբավորումները, ի պատասխան պետութայն իրականացրած քաղաքականության, կարող են պարզապես «արտահանել» իրենց կապիտալը և ձեռնարկչատիրական գործունեություն ծավալել երկրի սահմաններից դուրս: Փաստորեն, ստացվում է, որ մի ծայրահեղության դեմ պայքարելու արդյունքում կառավարությունը կարող է ընկնել մեկ այլ ծայրահեղության մեջ, սակայն ընդհանուր և մասնագիտացված ինստիտուտների օպտիմալ սահմանի որոշումը բավականին բարդ խնդիր է:

Չնայած ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը՝ որպես տնտեսագիտական ուղղություն, գոյություն է ունեցել դեռևս 1930-ական թվականներին ԱՄՆ-ում, այնուամենայնիվ այն լայն տարածում չի ստացել խիստ վերացական և մոդելավորման տեսանկյունից ոչ կիրառելի լինելու պատճառով: Այդ մասին է վկայում Գ. Մ. Հոջսոնի «հին» և «նոր» ինստիտուցիոնալ տեսությունների տարանջատումը<sup>84</sup>: Նա գտնում է, որ «հին և նոր ինստիտուցիոնալիզմի բաժանարար գիծը նոր ինստիտուցիոնալիզմի՝ մարդու ռացիոնալ վարքագծի մոդելն անհատական նախընտրությունների կորերի հետ համադրումն է»<sup>85</sup>: Կ. Մենարդը և Մ. Մ. Շիրլեն որպես նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության առանցքային հասկացություններ են ներկայացնում գործարքային ծախսերը, սեփականության իրավունքը և պայմանագրերը, որոնք ստացել են «ոսկե եռանկյուն» անվանումը<sup>86</sup>: Արդյունավետ շուկաների գոյությունը պայմանավորված է արդյունավետ ինստիտուտներով, որոնք տանում են գործարքային ծախսերի կրճատման, իսկ կատարյալ դեպքում՝ դրանց չեզոքացման: Գործարքային ծախսերը բազմաթիվ են ու բազմաբնույթ: Դրանք բնորոշ են ցանկացած տնտեսական համակարգի: Գործարքային ծախսերի պարզագույն օրինակներ են հանդիսանում հուսալի գործընկերոջ որոնման վրա կատարվող ժամանակային ծախսումները, տեղեկատվության ձեռքբերման վրա կատարվող, ինչպես նաև այլընտրանքային (օպորտունիստական) վարքագծի դրսևորումներով պայմանավորված ծախսերը, որոնք երբեմն հնարավոր չէ քանակապես չափել: Գործարքային ծախսերի առկայությունը ռեսուրսների ոչ արդ-

---

<sup>84</sup> Hodgson G.M., “The Approach of Institutional Economics” Journal of Economic Literature, March, 1998, page 166.

<sup>85</sup> Rutherford M., “Institutional Economics: Then and Now”, The Journal of Economic Perspectives, Vol.15, No.3, 2001, page 189.

<sup>86</sup> Menard C., Shiley M. M., “New Institutional Economics: From Early Institutions to a New Paradigm?”, Working Paper Number 8, September 2012.

յունավետ օգտագործման վկայությունն են, որոնք տնտեսական աճի համար խոչընդոտ են դառնում: Այս առումով, կարծում ենք, տեղին է մեջբերել Դ. Նորթի դիտարկումն այն մասին, որ **«տնտեսական զարգացման հաջողումը պայմանավորված է գործարքային ծախսերի նվազեցմանն ուղղված արդյունավետ ինստիտուտներ ձևավորելու երկրի ունակությամբ»**<sup>87</sup>: Նկատենք, որ տնտեսական աճի դասական մոդելներում նմանատիպ ծախսերն անտեսվել են, իսկ ժամանակակից ինստիտուցիոնալ տնտեսագիտությունն այդ ծախսերը քանակապես գնահատելու բավարար գործիքակազմ դեռևս չունի: Տնտեսական աճի դասական աճի մոդելներում հաշվի չեն առնվում նաև կայուն երկարաժամկետ աճի վրա ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը, մինչդեռ այն հանդիսանում է բիզնես միջավայրը պայմանավորող կարևորագույն գործոն:

Ինստիտուցիոնալիստները, կարևորելով տեխնոլոգիական փոփոխությունների դերը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում, այնուամենայնիվ այն չեն դիտարկում որպես աճի վրա ազդող անկախ գործոն, քանի որ ի վերջո տեխնոլոգիական փոփոխություններն ածանցվում են ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայրից: Երկրների միջև տեխնոլոգիական փոփոխությունների, դրանց տարածման և տնտեսական աճի տեմպի տարբերությունները պայմանավորվում է գործող ինստիտուցիոնալ միջավայրի տարբերություններով՝ կայուն երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ ինստիտուտները դիտարկելով մշտական փոփոխության մեջ: Այդ առումով Մ. Վ. Պավենկովան ասել է. **«ինստիտուտը ոչ միայն սահմանված և չփոփոխվող նորմը, կանոնը կամ օրենքն է, այլև գործունեությունն է ուղղված այդ նորմի, կանոնի և օրենքի զարգացմանը»**<sup>88</sup>: Այլ կերպ ասած՝ հեղինակն առաջ է քաշում ինստիտուտների դինամիկ փոփոխության անհրաժեշտության գաղափարը, որի հետ կարելի է համաձայնել՝ հատկապես տնտեսական աճի կայունության ապահովմանն ուղղված երկարաժամկետ ռազմավարությունների մշակման առումով: Եթե ուսումնասիրենք տնտեսական աճի վրա ինստիտուտների ազդեցությունն աշխարհագրական և ժամանակագրական կտրվածքով, ապա կնկատենք, որ նույնանման ինստիտուտները տնտեսական աճի վրա ինչպես տարբեր երկրներում, այնպես էլ

<sup>87</sup> North D. C., “Transaction Costs, Institutions, And Economic Performance”, An International Center for Economic Growth Publication, San Francisco, California, 1992, page 3.

<sup>88</sup> Павенкова М.В., «Институт и институциональность как социологические категории», Вестник СПбГУ, серия 6, 2001, №3, стр. 8.

տարբեր ժամանակաշրջաններում կարող են ունենալ միանգամայն տարբեր ազդեցություններ: Այսպես օրինակ՝ Հյուսիսային և Հարավային Կորեաները ունեն գրեթե նույն բնաշխարհագրական պայմաններն ու մշակույթը, սակայն գործող ինստիտուտներն էապես տարբեր են: Հյուսիսային Կորեայում իշխանությունը խիստ կենտրոնացված է, իսկ հարավայինում՝ ոչ<sup>89</sup>: Սակայն հարց է առաջանում, թե ինչու՞ են ինստիտուտները տարբերվում երկրների միջև: Գոյություն ունեն վերոնշյալ հարցին պատասխանող 4 հիմնական մոտեցումներ<sup>90</sup>

1. Արդյունավետ ինստիտուտների մոտեցում / Քուուզի թեորեմ – Եթե տնտեսական ինստիտուտները շահավետ են տնտեսական սուբյեկտների որոշ խմբի համար, որոնք միևնույն ժամանակ լրացուցիչ ծախսեր են առաջացնում այլ խմբի համար, ապա այդ երկու խմբերն սկսում են բանակցություններ վարել՝ գործող ինստիտուտները փոփոխելու նպատակով: Հաջող բանակցությունները հանգեցնում են համախառն ագրեգավորված արդյունքի մաքսիմալացմանը, որից հետո նշյալ խմբերն սկսում են բանակցել ձևավորված լրացուցիչ արդյունքի՝ միմյանց միջև բաշխելու խնդրի շուրջ:
2. Գաղափարախոսական մոտեցում – Տարբեր երկրներում, պայմանավորված բնակչության աշխարհընկալումներով և գաղափարախոսական տարբերություններով, ձևավորվում են միմյանցից տարբեր ինստիտուտներ
3. Պատահական ինստիտուտների մոտեցում – այս մոտեցման հիմքում ընկած է պատմական պատահույթների գաղափարը, որն անդրադառնում է առկա ինստիտուտների ձևավորման վրա:
4. Սոցիալական հակասությունների մոտեցում – այս մոտեցման համաձայն՝ տնտեսական ինստիտուտները ոչ միշտ են ձևավորվում ողջ հասարակության կարծիքը հաշվի առնելու արդյունքում: Սովորաբար դրանք ձևավորվում են իշխանության եկած քաղաքական ուժերի կողմից՝ սեփական շահերը սպասարկելու համար: Արդյունքում քաղաքական փոփոխությունները հանգեցնում են ինստիտուտների փոփոխության:

---

<sup>89</sup> Acemoglu D., Johnson S., Robison J.A., “Institutions as a Fundamental Cause of Long-Run Growth”, Handbook of economic growth, Vol. 1A, 2005, page 405.

<sup>90</sup> Տե՛ս նույն տեղում էջ 421

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում տնտեսական աճը դիտարկվում է որպես տնտեսական սուբյեկտների դիրքերի անընդհատ փոփոխություն: Նրանք, ովքեր մրցակցությունից դուրս են մղվում, ձգտում են ընդգրկվել քաղաքական գործընթացների մեջ, իշխանության գալ և վերաձևակերպել խաղի նոր՝ իրենց համար առավել նախընտրելի կանոններ: Կան իրարամերժ տեսակետներ, կապված այն հարցի շուրջ, թե որ ինստիտուտներն են առաջնային՝ քաղաքական, թե՞ տնտեսական: Քաղաքական ինստիտուտներն առաջնային համարող հայտնի տեսաբաններ են Դ. Աճեմոլլուն և Ջ. Ռոբինսոնը: գտնում են, որ **«Տնտեսական ինստիտուտները կախված են քաղաքական ինստիտուտների բնույթից և քաղաքական իշխանության բաշխումից»**<sup>91</sup>: Հասարակության մեջ հարաբերականորեն բարձր եկամուտներ ունեցող խումբն աստիճանաբար մեծացնում է իր քաղաքական ազդեցությունը, որի արդյունքում կարողանում է ազդել քաղաքական՝ իր համար առավել շահավետ ինստիտուտների ձևավորման վրա: Ստացվում է, որ տնտեսական որոշումների կայացման վրա մեծապես ազդում են քաղաքական գործընթացները, որոնք էլ, որպես կանոն, կանխորոշում են տնտեսության զարգացման վեկտորը: Այս առումով Ա. Ֆատասը և Ի. Միհովը հանդես են գալիս տնտեսական ինստիտուտների վրա քաղաքական ինստիտուտների ունեցած ազդեցության գաղափարի դիրքերից, որի հիման վրա էլ ուրվագծվում է մակրոտնտեսական քաղաքականությունը<sup>92</sup>: Տնտեսական ինստիտուտներին նախապատվություն տվող տեսաբաններից էլ. Բրաունֆելսը գտնում է, որ **«Քաղաքական ինստիտուտների վրա տնտեսական ինստիտուտների ազդեցությունը մեծ է, մինչդեռ քաղաքական ինստիտուտներն ունեն հարաբերականորեն փոքր ազդեցություն տնտեսական ինստիտուտների վրա»**<sup>93</sup>:

Տնտեսական աճի վրա ինստիտուտների ազդեցությունը գնահատելու համար Աճեմոլլուն դրանք դասակարգում է երկու խմբում<sup>94</sup>

<sup>91</sup> Acemoglu D., Robinson J., “The Role of Institutions in Growth and Development”, Washington D.C. 2008, page 1-7.

<sup>92</sup> Fatas A., Mihovl. “Policy Volatility, Institutions and Economic Growth”, France 2010, page 6

<sup>93</sup> Braunfels E., “How do Political and Economic Institutions Affect Each Other?”, Discussion paper, Norway 2014, page 2.

<sup>94</sup> Acemoglu D., “Introduction to modern economic growth: Parts 1-5”, Department of Economics, Massachusetts Institute of Technology, page 200.

1. Սեփականության իրավունքի ինստիտուտներ – որոնք ուղղված են՝ այսպես կոչված «շարքային» տնտեսական սուբյեկտների իրավունքներն առավել հզորների չարաշահումներից պաշտպանելուն
2. Պայմանագրային ինստիտուտներ – որոնք կոչված են՝ «շարքային» սուբյեկտների իրավունքները միմյանցից պաշտպանելու համար

Գոյություն ունի սերտ փոխկապվածություն սեփականության իրավունքի և պայմանագրային ինստիտուտների միջև, որը դրսևորվում է հատկապես սեփականության իրավունքները մի սուբյեկտից մյուսին փոխանցման ժամանակ: Սակայն դրանցից որն է առաջնային, դժվար է ասել: Ցանկացած պահի պետությունը կարող է միջամտել ինչպես սեփականության իրավունքի (օրինակ՝ օրենսդիր մարմինը կարող է սեփականության իրավունքի օրենսդրական փոփոխություններ կատարել), այնպես էլ պայմանագրային ինստիտուտների գործունեությանը (պետական լիազոր մարմինների կողմից կնքված պայմանագրերի չեղարկումը): Ուստի տնտեսական սուբյեկտների ակտիվությունը կախված է պետության հանդեպ ունեցած վստահությունից: Տնտեսական աճի և ինստիտուտների փոխազդեցության վերաբերյալ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հա-Ջուն Չանգի նկատառումը, ով, անդրադառնալով Դ. Աճեմօղլուի և Դ. Նորթի տարածված տեսակետին, համաձայն որի՝ ինստիտուտները հանդիսանում են տնտեսական ցուցանիշների հիմնական որոշիչները, նշում է, որ հակառակ ազդեցությունը, այն է՝ «տնտեսական զարգացման ազդեցությունը ինստիտուտների վրա, միանգամայն անտեսվում է<sup>95</sup>: Մինչդեռ, հեղինակը հիմնավորում է, որ ոչ միայն ինստիտուտներն են նպաստում տնտեսության զարգացմանը, այլև տնտեսության զարգացումն իր հերթին տանում է նոր ինստիտուտների ձևավորման»<sup>96</sup>:

Այսպիսով, ներկա դարաշրջանում ազգային տնտեսություններին ուղղված մարտահրավերները ստիպում են կարևորել տնտեսական աճի ոչ միայն և ոչ այնքան քանակական, որքան որակական կամ բովանդակային փոփոխությունները: Արագ փոփոխվող աշխարհում բազմաթիվ արտաքին և ներքին սպառնալիքներ երկրների կառավարություններին ստիպում են մշակել երկարաժամկետ կայուն և որակյալ

<sup>95</sup> Chang Ha – Joon “Institutions and economic development: theory, policy and history”, Journal of Institutional Economics, Cambridge, October 2010, page

<sup>96</sup> Տե՛ս նույն տեղում

տնտեսական աճին միտված ռազմավարություններ, իսկ դրան հասնելու լավագույն միջոցը պայմանավորված է նորարարությունների ու տեխնոլոգիաների խթանմամբ: Որպես ժամանակակից լայն տարածում գտած տնտեսագիտական ուղղություն՝ ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը, կարևորելով տնտեսական աճի վրա տեխնոլոգիաների և նորարարությունների զգալի ազդեցությունը, այնուամենայնիվ այն չի դիտարկում որպես աճը պայմանավորող առանձին գործոն, ինչպիսիք են օրինակ՝ աշխատուժը, կապիտալը և բնական ռեսուրսները: Խնդիրն ի վերջո հանգում է նրան, որ նորարարություններն ու տեխնոլոգիական փոփոխությունները պահանջում են համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի առկայություն: Ուստի, կարծում ենք, որ երկարաժամկետում կայուն և որակյալ տնտեսական աճ ունենալու համար անհրաժեշտ է կարևորել այնպիսի ինստիտուտների գոյությունը, որոնք խթանում են նորարարություններն ու տեխնոլոգիական փոփոխությունները, ընդ որում, երկարաժամկետ ռազմավարությունների մշակման ժամանակ չպետք է մոռանալ նաև ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտության մասին: Այդ խնդրի լուծման գործում, իհարկե, «առաջամարտիկի» դերակատարումը վերապահված է ինստիտուցիոնալ տնտեսագիտությանը: Իր հերթին, սակայն, ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը մի շարք խնդրահարույց հարցերին դեռևս սպառիչ պատասխաններ չի տալիս՝ սկսած հետազոտությունների իրականացման մեթոդաբանական խնդիրներից, վերջացրած նորարարությունների վրա ինստիտուտների ազդեցության մեխանիզմներով և դրանից բխող ինստիտուցիոնալ փոփոխություններով:


## ԳԼՈՒԽ 2. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

### 2.1. Գիտատեխնոլոգիական գործոնների ազդեցությունը կայուն ու երկարաժամկետ տնտեսական աճի վրա

Ներկայումս գիտական շրջանակներում լայն մասսայականություն է վայելում երկարաժամկետ «որակյալ» աճի վրա գիտատեխնիկական, տեխնոլոգիական և նորարարական գործոնների դերի ու նշանակության կարևորումը: Այս համատեքստում երկրների միջև եկամուտների համահարթեցման խնդիրը հանդիսանում է առանցքայիններից մեկը: Հատկապես խնդիրը հանգում է նրան, թե վերոնշյալ գործոններն ինչպե՞ս են նպաստում կայուն երկարաժամկետ տնտեսական աճին և, որպես հետևանք, արդյո՞ք դրանք տանում են երկրների միջև եկամուտների համահարթեցման, թե ոչ:

Գծապատկեր 1.

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ըստ երկրների զարգացման մակարդակի 1952-2016թթ.<sup>97</sup>



Գծապատկերից կարելի է նկատել, որ երկրների միջև եկամուտներն ունեն ոչ թե զուգամիտման, այլ տարամիտման ուղղություն: Փորձը ցույց է տալիս, որ զարգացած երկրները ձգտում են կենտրոնացնել համաշխարհային գիտական ողջ ներուժը, ինչն իրականացվում է ոչ միայն սեփական մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու, այլ նաև զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներից «ուղեղների» ներհոսք ապահովելու ճանապարհով: Այս կերպ զարգացած երկրները հավաքագրում են համաշխարհային «ստեղծագործական միտքը», ինչի վրա էլ խարսխում են

<sup>97</sup> Ըստ զարգացման մակարդակի երկրների դասակարգման հիմքում ընկած է ՄԱԿ-ի մեթոդաբանությունը, իսկ վիճակագրական տվյալները վերցված Մեդիսոնի վիճակագրական բազայից.


<https://www.rug.nl/ggdc/historicaldevelopment/maddison/>

երկարաժամկետ որակյալ աճին ուղղված տնտեսական քաղաքականությունը՝ միևնույն ժամանակ թույլ զարգացած երկրներին, ըստ էության, վերածելով «սեփական շահերը սպասարկող կցորդների»: Այս հարթության մեջ եկամուտների համահարթեցման խնդիրը քննարկելիս առաջ է գալիս հարցադրում՝ զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրները ինչպե՞ս պետք է սեփական տնտեսությունները բերեն նորաստեղծական և գիտելիքահենք զարգացման ուղեծիր: Իհարկե, որպես անցումային փուլում գտնվող երկիր՝ վերոնշյալ հարցադրումը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որի լուծմանը պետք է ուղղված լինի հայաստանյան տնտեսագիտական միտքը: Կայուն երկարաժամկետ աճ ապահովելու համար տնտեսական քաղաքականության պատասխանատուների կողմից մշտապես շեշտադրվում է գիտելիքահենք տնտեսության և «ազգային նորաստեղծական համակարգի» ձևավորման անհրաժեշտությունը, սակայն ինչպե՞ս կարող է ՀՀ-ն ունենալ մրցունակ նորաստեղծական համակարգ մշտապես սրվող մրցակցության պայմաններում, ինչպիսի՞նք ինստիտուցիոնալ փոփոխություններ են անհրաժեշտ դրան հասնելու համար և, ընդհանրապես, ինչպե՞ս կարող են նորարարություններն ազդել երկարաժամկետ «որակյալ» աճի կայունության վրա:

Տեխնոլոգիական երկարաժամկետ փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարգացած երկրները, որոնք ունեն հարաբերականորեն կայացած ինստիտուցիոնալ միջավայր, աչքի են ընկնում տեխնոլոգիաների փոփոխության ինտենսիվությամբ: Միևնույն ժամանակ, սակայն, զարգացող երկրներն, ի դեմս Չինաստանի, վերջին տասը տարիների ընթացքում գրանցում են զգալի հաջողություններ տեխնոլոգիական փոփոխությունների ասպարեզում: Ավելին, զարգացող երկրներում այդ փոփոխությունների երկարաժամկետ միտումը (տրենդը) ունի ավելի զառիկող թեքվածություն, ինչը խոսում է փոփոխությունների առաջանցիկ տեմպերի մասին: Ինչ վերաբերում է անցումային փուլում գտնվող երկրներին, ապա պետք է նշել, որ 1992թ.-ից սկսած տեխնոլոգիական փոփոխությունների միտումն ունի կայուն ցածր մակարդակ: Դրա մասին է վկայում ստորև ներկայացված գծապատկերը, որտեղ որպես տեխնոլոգիական փոփոխությունները բնութագրող ցուցանիշ է դիտարկվում ռեզիդենտների կողմից արտոնագրված գյուտերի քանակը:




**Ռեզիդենտների արտոնագրերի աճի տեմպի ըստ երկրների զարգացման մակարդակի<sup>98</sup>**



Ինչպես տեսնում ենք, 1992թ.ից սկսած ռեզիդենտների կողմից արտոնագրված գյուտերի քանակն աճման ամենաարագ միտումն ունի զարգացող երկրներում, իսկ զարգացածներում այն աստիճանաբար նվազում է: ՄԱԿ-ի չափորոշիչների համաձայն՝ ՀՀ-ն համարվում է անցումային տնտեսություն ունեցող երկրների շարքը, որտեղ ռեզիդենտների կողմից քննարկվող ժամանակահատվածում արտոնագրերի քանակը միջինում կազմում է տարեկան 139: Նկատենք, որ զարգացող երկրները, որտեղ մտավոր սեփականության իրավունքի պակասհուսալի պաշտպանությունը կարճաժամկետում նպաստում է տեխնոլոգիաների տարածմանը, երկարաժամկետ հաջողություններ ունենալու համար վաղ թե ուշ փորձում են ձևավորել անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգ՝ այդ խնդիրը լուծելու համար, որը մի կողմից կնվազեցնի այս խմբի երկրների՝ գյուտարար երկրներից կախվածության աստիճանը, մյուս կողմից՝ արտոնագրված գյուտերի անօրինական օգտագործման դեմ պայքարի արդյունքում կմեծանա իրենց նկատմամբ միջազգային հանրության վստահությունը, ինչը օտարերկրյա ներդրումներ ներգրավելու լավագույն միջոց է: Ըստ զարգացման մակարդակի արտոնագրերի մեջ երկրների ունեցած մասնաբաժինների դինամիկան ներկայացված է գծապատկեր 3-ում.

<sup>98</sup>Հաշվարկներում ներառված են թվով 116 երկրներ: Հաշվարկները կատարված են Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների հիման վրա, տե՛ս <https://data.worldbank.org/indicator>

**Արտոնագրերի մասնաբաժնի փոփոխությունն ըստ երկրների զարգացման մակարդակի<sup>99</sup>.**



1992թ.-ից մինչև 2015թ. զարգացած երկրների ռեզիդենտների կողմից արտոնագրված գյուտերի մասնաբաժինը դինամիկ նվազել է՝ 95%-ից հասնելով 55%-ի, իսկ զարգացող երկրներում այն, ընդհակառակը, աճել է՝ 1%-ից հասնելով 43%-ի: Նշենք, որ զարգացող երկրների արտոնագրերի մեջ «առյուծի բաժինն» ընկնում է Չինաստանին: Վերջինիս արտոնագրերի մասնաբաժինը զարգացող երկրներում արտոնագրված համախառն գյուտերի մեջ կազմում է մոտ 97%: Անցումային տնտեսություն ունեցող երկրների մասնաբաժինը, ուսումնասիրվող ժամանակահատվածում 4%-ից կրճատվել է՝ հասնելով 1%-ի: Վիճակագրությունը վկայում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո անցումային փուլում գտնվող երկրներն ինտենսիվորեն կորցնում են իրենց գիտական ներուժը, ինչը տնտեսական աճի զսպելու գործում ունի «մեղքի» իր բաժինը:

Համադրելով գծապատկեր 2-ն ու 3-ը՝ կարելի է արձանագրել, որ զարգացած երկրներից տեխնոլոգիական փոփոխությունների ալիքն աստիճանաբար անցնում է զարգացող երկրներին, ի դեմս Չինաստանի, որը երկարաժամկետում ուղեկցվում է տեխնոլոգիական փոփոխությունների և տեխնոլոգիաների տարածման համար անհրաժեշտ բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորմամբ: Ընդ որում, նշենք, որ չնայած տեխնոլոգիական փոփոխություններն ըստ էության որոշակիորեն նպաստում են տեխնոլոգիաների տարածմանը, սակայն, կարծում ենք, որ այն վերջինիս համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Բազմաթիվ ինստիտուցիոնալ տեսություն-

<sup>99</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում. <https://data.worldbank.org/indicator>

ներ հաստատում են այն թեզիսը, որ եկամուտների աճը նպաստում է երկրի բարձր տեխնոլոգիական հարմարվողականության (ադապտիվության) մեծացմանը<sup>100</sup>:

Գաղտնիք չէ, որ տեխնոլոգիական փոփոխություններն ու աշխատուժի կրթական մակարդակի բարձրացումը սերտորեն փոխկապված են: Նկատենք, որ տնտեսական աճի տեսանկյունից տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունը կարող է միանշանակ չլինել բոլոր երկրների համար: Այն երկրներում, որտեղ գոյություն ունեն գործուն ինստիտուտներ (օրինակ ուսանողական վարկային արդյունավետ ծրագրերի առկայություն, ժամանակի իրական ռեժիմով կրթության հնարավորություններ և այլն), աշխատուժն ավելի ճկուն է, կարողանում է արագ հարմարվել տեխնոլոգիական փոփոխություններին և հետևաբար հաջողում է, իսկ երկրներում, որտեղ ինստիտուցիոնալ միջավայրը բավարար չափով կայացած չէ, բնականաբար նույն շրթայական ռեակցիայի արդյունքում կարող են ձախողվել: Պատահական չէ, որ տեխնոլոգիական փոփոխությունները հաճախ պայմանավորվում են մարդկանց՝ ժառանգաբար փոխանցվող նորարարական մտքով, ինչն իր հերթին հանդիսանում է աշխատուժը բնութագրող ցուցանիշ. «Եթե նորարարական և ստեղծագործական աշխատանքների համար առկա են բավարար պայմաններ, ապա տեխնոլոգիական առաջադիմությունն ապահովված է»<sup>101</sup>: Վերոնշյալ տեսակետն են կիսում հայտնի տնտեսագետներ Ռ. Լուկասը և Էր. Ջոնսը: Մտավոր կապիտալի կուտակմամբ տեխնոլոգիական փոփոխությունների համար ինստիտուցիոնալ պայմաններն ուսումնասիրելու առումով, կարծում ենք, արժեքավոր է Սոսկիցի կողմից կապիտալիստական տնտեսական համակարգի դասակարգումը երկու հիմնական ինստիտուցիոնալ խմբերում՝ **«ազատ շուկայական»** և **«կենտրոնացված շուկայական»** համակարգեր<sup>102</sup>: Այդ դասակարգման համաձայն՝ «կենտրոնացված շուկայական» համակարգ ունեցող երկրներում, ինչպիսիք են, օրինակ՝ Գերմանիան, Շվեդիան, Ճապոնիան և այլն, գործատուները միավորվում են ասոցիացիաների մեջ և կազմավորում աշխատողների միասնական ուսուցման ու

<sup>100</sup> Nguyen Quoc Viet, Ngyuen Thi Hien, Vu Thi Quy, Vo Ngoc Qui “Institutions matter for technological changes in transition economy: Comparison between Japanese FDI and private enterprises in Vietnam” , Faculty of Development Economics, VNU, University of Economics and Business, page 3

<sup>101</sup> JOEL MOKYR, Philippe Aghion and Steven N. Durlauf, “Long-Term Economic Growth And The History of Technology”, 2005, page 4.

<sup>102</sup> Werle R. “Institutions and Systems: Analysing Technical Innovation Processes From an Institutional Perspective”, Innovation Policy and Governance in High – Tech Industries, Germany, 2012, page 31.

փորձի փոխանակման համակարգ, մինչդեռ «ազատ շուկայական» հարաբերություններ ունեցող երկրներում փորձի փոխանակման և աշխատողների որակավորման դասընթացների կազմակերպման հետ կապված փոխհարաբերությունները ձևավորվում են առանձին ընկերությունների կամ ընկերության և նրա աշխատողների միջև (օրինակ՝ ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա և այլն): Վերոնշյալ ինստիտուցիոնալ համակարգերին բնորոշ են տեխնոլոգիական փոփոխությունների սեփական օրինաչափությունները: Այսպես՝ «կենտրոնացված շուկայական» համակարգ ունեցող երկրներում, որպես կանոն, գերակշռում են «կայուն աճողական» տեխնոլոգիական, մինչդեռ «ազատ շուկայական» ինստիտուցիոնալ համակարգ ունեցողներում՝ «շրջադարձային» կամ, այսպես կոչված, «խզվածքային» տեխնոլոգիական փոփոխությունները<sup>103</sup>:

Փաստենք, որ ժամանակակից տնտեսագիտական տեսությունները խարսխված են տեխնոլոգիական գործոնով պայմանավորված կայուն երկարաժամկետ որակյալ աճի ապահովման հիմնադրույթների վրա: Որպես կանոն, նման տեսությունների հիմքում ընկած է տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ուղղակի ազդեցության կանխադրույթը: 2009-2015թթ. ռեզիդենտների կողմից արտոնագրված գյուտերի և մեկ շնչին ընկնող միջին ՀՆԱ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեխնոլոգիական գործոնը որոշակիորեն բնութագրող արտոնագրերի քանակական փոփոխության ուղղությունը ոչ միշտ է զուգակցվում տնտեսական աճը բնութագրող մեկ շնչին ընկնող միջին ՀՆԱ-ի փոփոխության հետ, ընդ որում՝ անկախ երկրի զարգացման մակարդակից (տե՛ս աղյուսակ 1):

---

<sup>103</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 32

**Ռեզիդենտների կողմից արտոնագրված գյուտերն ու մեկ շնչին ընկնող միջին  
ՀՆԱ-ն ըստ երկրների զարգացման մակարդակի<sup>104</sup>**

Տարի	Ցուցանիշ	Զարգացած	Աճ (%)	Զարգացող	Աճ (%)	Անցումային	Աճ (%)
2009	Պատենտների քանակ	1,250,687	-7%	246,694	17%	32,502	-7%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	39,596	-11%	3,379	-6%	4,392	-16%
2010	Պատենտների քանակ	1,272,111	2%	313,044	27%	36,047	11%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	40,819	3%	3,924	16%	4,866	11%
2011	Պատենտների քանակ	1,277,316	0%	436,128	39%	33,268	-8%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	44,757	10%	4,331	10%	5,842	20%
2012	Պատենտների քանակ	1,315,751	3%	556,190	28%	33,784	2%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	43,252	-3%	4,554	5%	5,951	2%
2013	Պատենտների քանակ	1,323,861	1%	728,961	31%	35,861	6%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	44,223	2%	4,633	2%	6,384	7%
2014	Պատենտների քանակ	1,306,587	-1%	825,997	13%	29,933	-17%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	44,573	1%	4,632	0%	6,194	-3%
2015	Պատենտների քանակ	1,279,254	-2%	994,283	20%	34,253	14%
	Շնչին ընկնող ՀՆԱ (միջին)	39,324	-12%	4,252	-8%	4,846	-22%

Ինչպես տեսնում ենք, զարգացող երկրներում 2015թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ ռեզիդենտների կողմից պատենտավորված գյուտերի քանակն աճել է 20%-ով, այն դեպքում, երբ մեկ շնչին ընկնող միջին ՀՆԱ-ն նույն ժամանակահատվածի համար 8%-ով կրճատվել է: Մինչույն ժամանակ անցումային փուլում գտնվող երկրներում 2011թ.-ին 2010թ.-ի համեմատությամբ պատենտավորված գյուտերի քանակը կրճատվել է 8%-ով, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ աճել 20%-ով:

<sup>104</sup> 2015թ. -ից հետո արտոնագրերի թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Ենթադրվող օրինաչափությունից շեղումները վերցված են շրջանակի մեջ

Հետաքրքրության համար նշենք, որ ԵԱՏՄ շրջանակներում 2009-2014թթ. պատենտավորված գյուտերի քանակը Բելառուսում դինամիկ կրճատվել է (1,753-ից հասնելով 652-ի)՝ շնչին ընկնող ՀՆԱ-ի դինամիկ բարձրացման ֆոնին (5,176-ից հասել է 8,025 դոլարի), և միայն 2015թ-ին փոփոխությունների ենթադրվող ուղղությունը պահապանվել է՝ միաժամանակ կրճատվել է թե՛ պատենտների քանակը և թե՛ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ կազմելով համապատասխանաբար 543 և 5,740 դոլար: Ուշագրավ է նաև Ռուսաստանի և Ղազախստանի համեմատությունը, որտեղ մեկ շնչին ընկնող երկրների ՀՆԱ-ն մոտ է 10 հազ. դոլարի սահմանին (2015թ.), իսկ պատենտների քանակները զգալիորեն տարբեր են. կազմում են համապատասխանաբար 24,072 և 1,742<sup>105</sup>: Հետաքրքրության համար նշենք, որ ՀՀ-ում 2015/2014թթ. թե՛ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն և թե՛ ռեզիդենտների կողմից պատենտավորված գյուտերը կրճատվել են համապատասխանաբար -9.4%-ով և -6.6%-ով:

Համեմատական ուսումնասիրության արդյունքում ստացվում է, որ

- **Առաջին.** որպեսզի տնտեսական աճի վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունը լինի միանշանակ անհրաժեշտ է ձևավորել համապատասխան ինստիտուցիոնալ միջավայր,
- **Երկրորդ.** տեխնոլոգիական գործոնի ազդեցությունը տնտեսական աճի վրա պետք է բխեցնել երկրում գործող արդյունավետ ինստիտուտներից

Ս. Կուզնեցը տնտեսական աճի և տեխնոլոգիական փոփոխությունների մասին հայտնել է տեսակետ, համաձայն որի՝ **«Տեխնոլոգիական փոփոխությունը տնտեսական աճին նպաստող պոտենցիալ է, որն անհրաժեշտ բայց դեռևս ոչ բավարար պայման է: Տնտեսական աճի վրա ազդող իրական գործոն դառնալու համար վերջինս ինստիտուցիոնալ և գաղափարական ճշգրտում է պահանջում»**<sup>106</sup>: Տեխնոլոգիական գիտելիքները խթանելու համար անհրաժեշտ են բարենպաստ պայմաններ, ինչպիսիք են օրինակ՝ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, երկրում գործող ուսումնական հաստատությունների որակը, գիտելիքի նկատմամբ մասնավոր և պետական հատվածի պահանջարկը և այլն: 1760-1830 թթ. արևմտյան

<sup>105</sup> Աղյուսակը կազմված է ՀԲ վիճակագրական տվյալների հիման վրա, իսկ երկրների դասակարգումն ըստ զարգացածության մակարդակի համապատասխանում է ՄԱԿ-ի դասակարգմանը

<sup>106</sup> Syrquin M., “Kuznets and Modern Economic Growth Fifty Years Later” University of Miami՝ May 2005, page 7

Եվրոպան հանդիսանում է գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված տնտեսական աճի ապահովման վառ ապացույցը: Կա տարածված տեսակետ, համաձայն որի՝ արդյունաբերական հեղաշրջման հենասյունը հանդիսանում է Մեծ Բրիտանիան, որով էլ, ըստ էության, պայմանավորվում է վերջինիս տնտեսական զարգացումը: Իհարկե, տեխնոլոգիական փոփոխությունները նշանակալի ազդեցություն ունեցան Մեծ Բրիտանիայի զարգացման համար, սակայն պետք է նշել, որ այն, ընդհանուր առմամբ, պայմանավորված էր երեք հիմնական գործոնով<sup>107</sup>՝

1. Ինստիտուցիոնալ զարգացած և ճկուն համակարգի առկայություն (Մեծ Բրիտանիան 18-րդ դարի կեսերին ուներ բավականին առողջ ֆինանսական համակարգ, չկային սակագնային սահմանափակումներ, աչքի էր ընկնում զարգացած ենթակառուցվածքներով, սեփականության իրավունքների պաշտպանվածության հստակ սահմանված մեխանիզմներով և այլն)
2. Բրիտանացի ձեռներեցների կողմից նորարարությունների և գյուտերի նկատմամբ դրսևորվող մեծ ձգտումն ու պատրաստակամությունը
3. Ռազմաքաղաքական կայունությունը – Երկրին հաջողվում էր խուսանավել այդ ժամանակաշրջանում լայն տարածում գտած քաղաքական և ռազմական հեղաշրջումներից (Օրինակ՝ Ֆրանսիայում Նապոլեոնի գլխավորությամբ հեղափոխություն էր իրականացվում)

Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել Մեծ Բրիտանիայի և Հայաստանի հանրապետության միջև, ապա կարող ենք արձանագրել, որ վերոնշյալ բոլոր գործոնների առումով ՀՀ-ում մոտավորապես հակառակ պատկերն է տիրում: Առաջին գործոնի մասով նշենք, որ չնայած ՀՀ-ում սակագնային սահմանափակումների օրինակներն ըստ էության շատ չեն, այնուամենայնիվ մյուս ինստիտուտների արդյունավետության մասով ՀՀ-ն կաղում է: Նկատենք, որ չնայած ՀՀ Կենտրոնական բանկին հաջողվում է ֆինանսական շուկաների խիստ վերահսկողության միջոցով պահպանել կայունություն, այնուամենայնիվ վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը, բնականաբար, չի կարելի համեմատել ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլև եվրոպական մի շարք երկրների համապատասխան ցուցանիշի հետ: Նույն կերպ չի կարելի պնդել, որ ՀՀ-ն

<sup>107</sup> JOEL MOKYR, Philippe Aghion and Steven N. Durlauf, “Long-Term Economic Growth AndThe History of Technology“, 2005, page 14.

ունի զարգացած ենթակառուցվածքներ: Երկրորդ գործոնի մասով, կարծում ենք, միանգամայն իրավացի կլինի պնդել, որ ՀՀ ձեռներեցների կողմից գյուտերի և նորարարությունների նկատմամբ առանձնակի մոտիվացիա չի նկատվում: Դա առաջին հերթին պայմանավորված է շուկայի մենաշնորհային բնույթով: ՀՀ-ում երրորդ գործոնի պայմանը, մեր համոզմամբ, նույնպես բավարարված չէ: Ճիշտ է, ներկայում ՀՀ-ն հարևան երկրի հետ փաստացի չի պատերազմում, սակայն դրա տեղի ունենալու ռիսկը զրոյական չէ:

Ջոել Մոկուրը տնտեսական աճի վրա տեխնոլոգիաների զարգացման ազդեցության համար կարևորում է հետևյալ ինստիտուտների առկայությունը<sup>108</sup>

1. Ինստիտուտներ, որոնք ձևավորում են բարենպաստ միջավայր հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար
2. Ինստիտուտներ, որոնք ապահովում է նորարարական գիտելիքներ ստեղծողների և արտադրական գործունեություն իրականացնողների միջև փոխկապվածությունը
3. Ինստիտուտներ, որոնք ստեղծում են խթաններ նորարարական գործունեությանը զբաղվող մարդկանց համար և ապահովում վերջիններիս շահերը

Օհայո նահանգում տեղակայված ԱՄՆ դաշնային պահուստային բանկի գլխավոր տնօրեն Լ. Ջ. Մեսթերն անդրադարձ է կատարում արտադրողականության բարձրացման և տնտեսական աճի վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության վերաբերյալ Բարրի Էյչենգրիի տեսակետին, ով այդ կապը բնութագրելու համար վերջինս դիտարկում է երկու տեսանկյունից՝ **տեխնոլոգիաների կիրառելիության շրջանակների և տեխնոլոգիաների հարմարեցման շրջանակների**<sup>109</sup>. «Այն տեխնոլոգիաները, որոնք ունեն կիրառելիության նեղ շրջանակներ տնտեսական աճի վրա թողնում են փոքր ազդեցություն, քանի որ դրանք կիրառվում են համեմատաբար նեղ ոլորտներում արտադրողականության բարձրացման համար: Տեխնոլոգիաները, որոնք հնարավոր է հարմարեցնել տնտեսության համեմատաբար ավելի լայն ոլորտներում

<sup>108</sup> Տե'ս նույն տեղում, էջ 51

<sup>109</sup> Mester J. L., “Long-Run Economic Growth”, New York 2015, page 11.



արտադրողականությունը խթանելու համար, բնականաբար տնտեսական աճի վրա ունեն զգալի ազդեցություն»<sup>110</sup>:

Այսպիսով՝ մակրոմակարդակում որպես «որակյալ» տնտեսական աճի վերջնական նպատակ պետք է հանդիսանա եկամուտների կայուն և չհամակենտրոնացված աճի պայմաններում կենսամակարդակի բարձրացումը: Եկամուտների ավելացման աղբյուրը հնարավորինս մեծ ավելացված արժեքով արտադրանքի թողարկումն ու իրացումն է, որի լավագույն ճանապարհը նորարարություններն ու նորամուծական տեխնոլոգիաներն են, որոնք, սակայն, ծնում են զգալի ռիսկեր ոչ միայն աճի կայունության, այլև եկամուտների անհամաչափ բաշխման առումով: Բացի այդ, տեխնոլոգիական գործոնի վրա հիմնված տնտեսություն կառուցելու ճանապարհին զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրները, որպես կանոն, բախվում են կարևորագույն երկրնորանքի՝ որդեգրել նմանակման (իմիտացիոն), թե՛ նորարարական (ինովացիոն) քաղաքականություն: Թե՛ նմանակման և թե՛ նորարարական քաղաքականությունները կարող են որակյալ երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար ստեղծել ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ պարունակել որոշակի ռիսկեր: Ընդհանրապես, ռիսկերի տեսանկյունից նմանակման քաղաքականությունը պակաս ռիսկային է համարվում, քան նորարարական քաղաքականությունը, սակայն նոր շուկաների և հետևաբար, նոր հնարավորությունների ստեղծման առումով առաջինն ավելի համեստ պոտենցիալ ունի, քան վերջինը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարգացած երկրներն առավելապես հակված են նորարարական քաղաքականության իրականացմանը, որի հենքը այդ երկրներում զարգացած ֆինանսական համակարգի, վենչուրային հիմնադրամների, «ուղեղների ներգրավման» քաղաքականության և, ընդհանրապես, կայացած ու գործուն ինստիտուտների առկայությունն է: Միևնույն ժամանակ, սակայն, նույն զարգացած երկրները չեն հրաժարվում նմանակման քաղաքականությունից, հատկապես տնտեսության այն ոլորտները խթանելու համար, որոնք պակաս մրցունակ են: Արևմուտքի զարգացած երկրներում պատենտավորված գյուտերի պատմությունը ցույց է տալիս, որ մտավոր սեփականության պաշտպանությունն իրականացվում է ընտրանքային ձևով՝ հաշվի առնելով սեփական

---

<sup>110</sup> Տե՛ս նույն տեղում

արդյունաբերության զարգացման ռազմավարությունը: Այսպես օրինակ՝ Շվեյցարիայում ժամացույցների արտադրությունը պաշտպանելու համար խստացվեցին այդ ոլորտում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանը վերաբերող օրենքները, մինչդեռ ժամանակ, սակայն, քիմիական արդյունաբերության ոլորտում որևէ շրջադարձային քայլ չձեռնարկվեց, քանի որ Շվեյցարիան այդ ասպարեզում ոչ թե նորարար էր, այլ նմանակող<sup>111</sup>: Նույն կերպ, 1850-1870-ական թվականներին, երբ Գերմանիայում արդյունաբերությունն սկսեց առաջանցիկ տեմպերով զարգանալ, խոշոր արտադրողները, ի դեմս «Սիմենս» ընկերության, սկսեցին մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված քարոզչություն իրականացնել, և արդյունքում 1877թ.-ին ընդունվեց արտոնագրերի վերաբերյալ առաջին օրենքը<sup>112</sup>: Այս համատեքստում, կարծում ենք, արևմուտքի ջանքերը, ի դեմս ԱՄՆ-ի և ԵՄ-ի, ուղղված մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը, ոչ միայն սեփական երկրում, այլև երկրի սահմաններից դուրս վկայում է զարգացած երկրներում տնտեսական ռազմավարության մեջ շեշտադրված նորարարական քաղաքականության իրականացման մասին:

Կանադացի պրոֆեսոր Ժ. Նիոսին առաջ է քաշում տեսակետ, համաձայն որի՝ տնտեսական զարգացման հիմքերը դրվում են մեծամասամբ նմանակման քաղաքականության շնորհիվ, ընդ որում, նմանակում են ոչ միայն զարգացող երկրները զարգացած երկրներից, այլ նաև զարգացած երկրները միմյանցից<sup>113</sup>: Զարգացող երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ զարգացող շուկաներին հիմնականում բնորոշ է նմանակման քաղաքականությունը, որը պայմանավորված է ինչպես նվազագույն ռիսկերով, այնպես էլ անհրաժեշտ փորձի և գիտելիքների, այսպես կոչված, «**նախասկզբնական կուտակման**» անհրաժեշտությամբ: Զարգացող երկրների կողմից նմանակման քաղաքականության իրականացման խթան են հանդիսանում մտավոր սեփականության պաշտպանության հարաբերականորեն թերզագացած ինստիտուտները: Այնուամենայնիվ, նմանակման քաղաքականությունը չի սահմանափակվում միայն մտավոր սեփականության իրավունքի խախտ-

<sup>111</sup> Sharma R., Saxena K., “Strengthening the Patent Regime: Benefits for Developing Countries – A Survey”, Journal of Intellectual Property Rights, Vol 17, March 2012 pp. 122-132.

<sup>112</sup> Suthersanen U., “UNCTAD-ICTSD Project on IPRs and Sustainable Development”, London 2006, page 15

<sup>113</sup> Niosi J., “Innovation and Development through Imitation (In Praise of Imitation)”, Australia 2012, page 3.

ման ճանապարհով նորարարությունների յուրացմամբ: Նմանակում կարող է տեղի ունենալ նաև օրինական ճանապարհով, երբ նորարար ընկերության արտադրական տեխնոլոգիան այս կամ այն կերպ հասանելի է դառնում նմանակող ընկերությանը և վերջինս նույնատիպ արտադրություն է հիմնում ոչ թե նորարար արտադրողի, այլ սեփական ապրանքային նշանով<sup>114</sup>: Նմանակման քաղաքականության հարուստ փորձ ունի Չինաստանը, ինչը, կարծում ենք, կարելի է համարել ՀՀ-ի համար տեխնոլոգիական գործոնի ազդեցությամբ երկարաժամկետ որակյալ և կայուն տնտեսական աճ ապահովելու ամփոփ օրինակ: Չնայած տնտեսությունների ծավալներով, ներուժով, տնտեսական աճի տեմպերով և ինստիտուցիոնալ միջավայրի առանձնահատկություններով երկու երկրների միջև գալի տարբերություններին, այնուամենայնիվ, կարծում ենք, հարաբերակցության մեջ դիտարկելու դեպքում Չինաստանն առավել նախընտրելի օրինակ է Հայաստանի համար, քան արևմտյան եվրոպայի երկրների մեծ մասը: Դրա մասին են փաստում մի շարք ցուցանիշներ: Այսպես, օրինակ, համաձայն համաշխարհային տնտեսական ֆորումի՝ 2017թ.-ին ներառական զարգացման համաթիվը ՀՀ-ում կազմել է 3.7, Չինաստանում՝ 4.4, իսկ եվրոպական երկրների մեծ մասում՝ 5-ից բարձր<sup>115</sup>: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ՀՀ-ում կազմում է 3,615 դոլար, Չինաստանում՝ 8,123 դոլար, իսկ ԵՄ երկրներում միջինում՝ 32,242 դոլար<sup>116</sup>: Նույն կերպ, մարդկային զարգացման համաթիվը Հայաստանում կազմում է 0.743, Չինաստանում՝ 0.738, իսկ ԵՄ երկրների մեծ մասում 0.8-ից բարձր է<sup>117</sup>:

Տեխնոլոգիական գործոնով պայմանավորված տնտեսական աճի պատմությունը Չինաստանում սկսվում է 1949թ.-ից, որը Վե Բսիեն և Սթիվեն Ուայթը բաժանվում են 5 փուլի<sup>118</sup>: Դրանցից առաջին 4-ի ընթացքում տնտեսական քաղաքականությունը խարսխվում է նմանակման և միայն վերջին 5-րդ փուլում՝ նորարարական քաղաքա-

---

<sup>114</sup> Brondoni M.S., “Innovation and Imitation: Corporate Strategies for Global Competition” Symphony Emerging Issues In Management, N 1, page 12.

<sup>115</sup> Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայքէջում.  
[http://www3.weforum.org/docs/WEF\\_Forum\\_IncGrwth\\_2017.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2017.pdf)

<sup>116</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում.  
<https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD>

<sup>117</sup> Տե՛ս ՄԱԿ զարգացման ծրագրի պաշտոնական կայքէջում.  
<http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi>

<sup>118</sup> Wei Xie, White S., “From Imitation to Creation? The Critical Yet Uncertain Paradigm Shift for Chinese Firms”, Journal of Technology Management in China, Vol.1, N 3, pp. 1-15.

կանության վրա<sup>119</sup>: Չինաստանի փորձը ցույց է տալիս, որ մոտ 50 տարվա տևողություն ունեցող «նմանակման» փուլում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված ինստիտուտների ձևավորման առումով էական քայլեր չեն կատարվել և միայն տնտեսության զարգացման վեկտորը դեպի «նորարարական» քաղաքականությունն ուղղելուց հետո տրվեց ինստիտուցիոնալ բարեփոխումների մեկնարկը, ինչի վառ ապացույցը 2001թ.-ին Չինաստանի անդամակցությունն էր ԱՀԿ-ին<sup>120</sup>: Այդ կերպ, Չինաստանը փորձում է տնտեսական զարգացման նոր փուլ թևակոխել՝ ձևավորելով «ազգային նորաստեղծական համակարգ» և նմանակող երկրից աստիճանաբար վերածվել նորարար երկրի: Ֆրիմանը ազգային նորաստեղծական համակարգը բնութագրում է որպես հանրային և մասնավոր հատվածների ինստիտուտների համակարգ, որոնք ստեղծում, ներմուծում, ձևափոխում կամ կլանում են նորարար տեխնոլոգիաները<sup>121</sup>: Իսկ Նելսոնը կարծում է, որ «ազգային նորաստեղծական համակարգը» ինստիտուտների, քաղաքականությունների և փորձի համախումբն է, որը պայմանավորում է երկրի կամ առանձին ճյուղի նորարարություններ ստեղծելու հնարավորությունները<sup>122</sup>: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ազգային նորաստեղծական համակարգի» ստեղծման հիմքերը, որպես կանոն, դրվում են նմանակման փուլում՝ անկախ երկրի զարգացման մակարդակից: Զարգացած երկրներում գործուն «ազգային նորաստեղծական համակարգերի» առկայությունը և տեխնոլոգիական գործոնով պայմանավորված որակյալ աճի ռազմավարությունները վկայում են նմանակման փուլում ձեռքբերված ինստիտուցիոնալ հաջողությունների մասին: Զարգացող երկրների զգալի մասն այժմ գտնվում է նմանակման փուլում, որի տևողության կամ այդ փուլը հաջողությամբ հաղթահարելու վերաբերյալ կանխատեսումներ կատարելը բավականին ռիսկային է: Ս. Մ. Բրոնդոնին գտնում է, որ բաց շուկայական տնտեսական համակարգերում, որտեղ առկա է սուր մրցակցություն, նորարարական քաղաքականությունը ստորադասվում է և ձեռնարկությունները, ծախսերը նվազագույնի հասցնելու և միաժամանակ մրցակցությունից դուրս չմղվելու համար, գերադասում են նմանակ-

<sup>119</sup> Տե՛ս նույն տեղում

<sup>120</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 11

<sup>121</sup> Werle R. “Institutions and Systems: Analysing Technical Innovation Processes From an Institutional Perspective”, Innovation Policy and Governance in High – Tech Industries, Germany, 2012, page 25.

<sup>122</sup> Տե՛ս նույն տեղում

ման քաղաքականությունը<sup>123</sup>: Ստացվում է, որ վերջիններս մի կողմից շահագրգռված չեն մտավոր սեփականության պաշտպանության օրենսդրական բարեփոխումների իրականացման գործում, մյուս կողմից, սակայն, որոշակիորեն ենթարկվում են զարգացած երկրների կողմից ուղղակի կամ անուղղակի ձևով խրախուսվող շուկաների ազատականացման ու օրենսդրական բարեփոխումների իրականացման ազդեցությանը: Արդյունքում, չնայած զարգացող երկրներում պարբերաբար կատարելագործվում է օրենսդրական դաշտը, այնուամենայնիվ վերահսկողական մեխանիզմները շարունակում են թերզագացած մնալ՝ հանգեցնելով մտավոր սեփականության իրավունքի խախտումների և դրա ապօրինի յուրացումների ու կրկնօրինակումների, որոնց օրինակները բազմաթիվ են: Այս առումով տեղին է նշել Յ. Գորոդնիչենկոյի, Ժ. Սվեժնարի և Ք. Թերրելի պնդումը, համաձայն որի՝ զարգացող տնտեսական համակարգերում գործող ընկերություններն առավելապես հակված են նմանակման և հարմարվողական, քան թե նորարարական քաղաքականությանը<sup>124</sup>: Իր հերթին Վ. Մ. Պոլտերովիչը նկատում է, որ «զարգացող երկրների մեծամասնությունը «ազգային նորաստեղծական համակարգի» ստեղծման ճանապարհին ձախողվում են հենց նմանակման փուլում, որի հիմնական պատճառն անհրաժեշտ ինստիտուտների, այսպես կոչված, «փոխպատվաստման» գործում անհաջողություններն են»<sup>125</sup>: Կարծում ենք, զարգացող երկրներում նմանակման քաղաքականության էվոլյուցիոն զարգացման տեսանկյունից հեղինակի կողմից ստորև ներկայացված քայլերի հաջորդականությունն ընդհանուր առմամբ ընդունելի են<sup>126</sup>.

1. Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում
2. Պետական մասնակցությամբ տեղեկատվական և հետազոտական կենտրոնների ստեղծում
3. Խոշոր մասնավոր ընկերություններում հետազոտական բաժանմունքների ստեղծման խթանում

<sup>123</sup> Brondoni M.S., “Innovation and Imitation: Corporate Strategies for Global Competition” Symphony Emerging Issues In Management, N 1, page 1.

<sup>124</sup> Gorodnichenka Y., Svejnar J., Terrel K., “Globalization and Innovation in Emerging Markets”, Germany 2008page 7.

<sup>125</sup> Полтерович В.М., “Проблема Формирования Национальной Инновационной Системы», Экономика и математические методы, №2, 2009, стр. 13

<sup>126</sup> Տե՛ս նույն տեղում

Մասնավոր ընկերություններում հետազոտական բաժանմունքների խթանման տիպային օրինակ է 1976թ. -ին էլեկտրոնային տեխնոլոգիաների կորեական ինստիտուտի ստեղծումը, որից ընդամենը 8 տարի անց երկրի խոշոր ընկերությունները կուտակեցին գիտահետազոտական մեծ ներուժ, ինչն արտադրությունը պարբերաբար սեփական ուժերով նորացնելու հնարավորություն ընձեռեց<sup>127</sup>:

## **2.2. Ինստիտուցիոնալ միջավայրի դերը երկարաժամկետ աճը խթանող տեխնոլոգիական գործոնի զարգացման մեջ**


Նախորդ գլխում անդրադարձանք տնտեսական աճի քանակական և որակական փոխհարաբերություններին և, որպես որակյալ աճի տարբերակման միջոց, առանձնացրեցինք «ներառական աճ» և «տնտեսական զարգացում» եզրույթները: Ներառական աճը քանակապես չափելու համար Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից մշակվել է ներառական զարգացման համաթիվը (Inclusive Development Index), որը բաղկացած մի խումբ ցուցանիշներից: Այն հանդիսանում է ՀՆԱ-ի այլընտրանքային ցուցանիշ և պատկերացում է տալիս տնտեսության զարգացման մակարդակի մասին: Համաթիվը հաշվարկվում է թվով 103 երկրի համար և արժեքներ է ընդունում 1-ից (ցածր) 7 (բարձր) միջակայքում<sup>128</sup>: Չնայած ՀՆԱ աճը ներառական զարգացման համաթիվի հաշվարկման մեջ ունի որոշակի մասնակցություն, այնուամենայնիվ վերջինիս ազդեցությունը ցուցանիշի վրա բավականին թույլ է: Այդ է փաստում թվով 103 երկրների համար 2012-2016թթ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ և ներառական զարգացման համաթիվի միջև վերջին 5 տարվա ընթացքում միջինացված ցուցանիշների միջև կոռելյացիոն կապի գրեթե աննշան մակարդակը (կազմում է 0. 2)<sup>129</sup>: Ավելին, քննարկվող ժամանակահատվածում նույն ցուցանիշներն ունեն մոտավորապես հակադարձ միտումներ (տե'ս գծապատկեր 4).

<sup>127</sup> UNIDO, Industrial Development Report, 2005, page 51

<sup>128</sup> “The Inclusive Development Index 2018”, World Economic Forum, page 2

<sup>129</sup> Հաշվարկվել է մեր կողմից

**Մեկ շնչին ընկնող ՀՆԱ և ներառական զարգացման համաթվի  
2012-2016թթ. միտումները<sup>130</sup>.**



Գծապատկերը ցույց է տալիս, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճը ոչ միշտ է զուգակցվում ներառական զարգացման համաթվի դրական կամ նույնարժեք փոփոխությամբ: Այսպես օրինակ՝ ՀՀ-ում վերջին 5 տարիների ընթացքում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճել է տարեկան միջինում 0.6%-ով<sup>131</sup>, այն դեպքում, երբ ներառական զարգացման համաթիվը կրճատվել է -1.9%-ով<sup>132</sup>: Նույն կերպ, վերոնշյալ ցուցանիշները Չինաստանում փոփոխվել են, համապատասխանաբար՝ 7.7%-ով և 1.7%-ով, իսկ ԱՄՆ-ում՝ 3%-ով և 0.7%-ով<sup>133</sup>: Ակնհայտ է դառնում, որ մեծ տնտեսական աճերը անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար պայման են տնտեսության մեջ որակական փոփոխություններ առաջացնելու համար:

Տնտեսական աճի և տնտեսական զարգացման փոխհարաբերությունները գնահատելու համար ուսումնասիրենք մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և մարդկային զարգացման համաթվի միջև կոռելյացիոն կապը (տե՛ս գծապատկեր 5): Մարդկային զարգացման համաթվի (որը հաշվարկվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից) և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միջև գոյություն ունեցող ֆունկցիոնալ կախվածությունը ներկայացվում է  $Y = 73,359e^{6,9764x}$  բանաձևով: Նշենք, որ կոռելյացիոն կապը գնահատվել է ոչ գծային եղանակով և փաստում է, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճն ուղեկցվում է մարդկային

<sup>130</sup> Գծապատկերը կառուցված է Համաշխարհային բանկի և համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրատարակվող վիճակագրական տվյալների բազայի հիման վրա

<sup>131</sup> Հաշվարկվել է մեր կողմից ՀԲ վիճակագրության հիման վրա


<sup>132</sup> Inclusive Development Index 2017, pp. 65-69

<sup>133</sup> Տե՛ս նույն տեղում

զարգացման համաթվի աճով: Այլ կերպ ասած՝ բնակչության եկամուտների ավելացումը տանում է կենսամակարդակի բարձրացման<sup>134</sup>:

Գծապատկեր 5.

**Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և մարդկային զարգացման համաթվի կոռելյացիա**




Գծապատկեր 5-ը վկայում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և մարդկային զարգացման համաթվի միջև կոռելյացվածության զգալի մակարդակի մասին, որը կազմում է 0.87: Իհարկե, մի կողմից եկամուտների մակարդակի բարձրացումը նպաստում է սպառողական պահանջարկի և կենսամակարդակի բարձրացմանը, սակայն մյուս կողմից, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն չի կարող պատկերացում տալ «խաղից դուրս» վիճակում հայտնված սուբյեկտների եկամուտների և հետևաբար նաև կյանքի որակի ու կենսամակարդակի մասին: Նորարարությունները ծնում են ռիսկեր եկամուտների անհամաչափ բաշխման առումով, ինչը չի տեղավորվում «որակյալ» աճի տրամաբանության մեջ: Չնայած մակրոմակարդակում նորարարություններով և տեխնոլոգիական գործոնով պայմանավորված երկրի ՀՆԱ-ն կարող է աճել, սակայն միկրոմակարդակում նույն նորարարությունները կարող են «խաղից դուրս մղել» այդ ասպարեզում պակաս հաջողակ տնտեսական գործակալներին՝ հանգեցնելով եկամուտների խիստ համակենտրոնացման: Վերոնշյալ խնդիրն ուսումնասիրելու նպատակով գնահատվել է նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և Զինի ճշգրտված գործակցի միջև փոխկախվածությունը<sup>135</sup> (տե՛ս գծապատկեր 6):

<sup>134</sup> Կապը գնահատվել է Էկզել ծրագրային փաթեթի միջոցով: Ընտրանքը կատարվել է զարգացածության տարբեր մակարդակներ ունեցող թվով 80 երկրների շրջանակներում

<sup>135</sup> Զինի ճշգրտված գործակցից հաշվարկված է որպես Զինի գործակցի և մարդկային զարգացման համաթվի հարաբերություն: Հաշվարկման մեթոդաբանությանը կարելի է ծանոթանալ հետևյալ



**Ջինի ճշգրտված գործակցի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի կոռելյացիա**

Գծապատկերից կարելի է նկատել, որ եկամուտների համակենտրոնացման բարձր աստիճան ունեցող երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն փոքր է և հակառակը: Այսպես օրինակ՝ Բելառուսի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2015թ.-ին կազմել է 5,949 դոլար, իսկ Ջինի ճշգրտված գործակցիցը՝ 0.335, Ռուսաստանում, համապատասխանաբար՝ 9,329 դոլար և 0.468, Ղազախստանում՝ 10,509 դոլար և 0,338: Համեմատության համար նշենք, որ վերոնշյալ ցուցանիշները Սուդանի համար կազմել են 2,513 դոլար և 0,975, իսկ օրինակ Նորվեգիայի համար՝ 74,521 դոլար և 0,273:


Եկամուտների համակենտրոնացման խնդիրը լուծելու առումով ամենևին պատահական չէ զարգացած երկրների կողմից նորարարական գործընթացների մեջ փոքր և միջին ձեռնարկությունների ընդգրկման կարևորումը, ինչը հետապնդում է եկամուտների համահարթեցման նպատակ: Ռուսաստանի ազգային տնտեսության ակադեմիայի ձեռնարկությունների կառավարման ամբիոնի ասպիրանտ Ալ. Կոմիսարովը նշվում է, որ արևմուտքի զարգացած երկրներում ինովացիոն քաղաքականության շրջանակներում առաջնայնությունը տրվում է փոքր և միջին ձեռնարկություններին, որոնց գիտական հայտնագործություններն օգտագործվում են խոշոր ընկերությունների կողմից արտադրության կազմակերպման գործընթացում՝ այդպիսով նպաստելով ընդհանուր տնտեսության արդյունավետության բարձրացմանը<sup>136</sup>: Փոքր և միջին ձեռնարկությունները մի կողմից հանդիսանում են եկամուտների խիստ համակենտրոնացմանը

հոդվածում. Т.В. Меркулова “Экономический рост и неравенство: институциональный аспект и эмпирический анализ”.

<sup>136</sup> Комиссаров А.Г. “Инновационное развитие: роль малого бизнеса и государства”, Российское предпринимательство, № 2, 2011, стр. 2

հակազդող և միջին սոցիալական խավի ձևավորման միջոց, մյուս կողմից, սակայն, խոցելի են ցնցումային զարգացումների նկատմամբ և ունեն պետության աջակցության կարիքը: Այս առումով հետաքրքրական է Ս. Տալեգետայի կողմից ՓՄՁ ինովացիոն խոչընդոտների վերաբերյալ ստորև ներկայացված գծանկարը<sup>137</sup>.

Գծանկար 2.



Որպես մշտապես սրվող մրցակցության պայմաններում ՓՄՁ գործունեության կարևորագույն երաշխիք է հանդիսանում վերջիններիս մրցունակությունը: Այն գնահատելու համար Գերմանիայի «Վերակառուցման վարկային կազմակերպությունը» (KfW) պարբերաբար հրապարակում է տարեկան հաշվետվություններ, որտեղ թվով տասը երկրների համար (ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող) հաշվարկվում է ՓՄՁ միջազգային մրցունակության ցուցանիշ: Այդ ցուցանիշի հիմքում դրված է **բիզնես ներկայացվածությունը և ինստիտուցիոնալ միջավայրը (Location performance)**, որոնք իրենց հերթին բնորոշվում են մի շարք ենթացուցանիշներով<sup>138</sup>.

<sup>137</sup> Talegeta S., “Innovation and Barriers to Innovation: Small and Medium Enterprises in Addis Ababa”, Journal of Small Business and Entrepreneurship Development, March 2014, Vol.2, No.1, page 94.


<sup>138</sup> Abel – Koch J., “KfW Competitiveness Indicator 2016”, Bpifrance, France 2015, page 2

**ՓՄՁ միջազգային մրցունակության ցուցանիշ**

<b>Բիզնես ներկայացվածություն</b>	<b>Ինստիտուցիոնալ միջավայր</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Գին</li> <li>• Որակ</li> <li>• Ինովացիոն մակարդակ</li> <li>• Տեղեկացվածություն</li> <li>• Առաքման հաճախականություն</li> <li>• Մատուցված ծառայություն</li> <li>• Անձնակազմ և նյութաձախս</li> <li>• Էներգետիկ արդյունավետություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բյուրոկրատիա</li> <li>• Կոռուպցիա</li> <li>• Սոցիալ-քաղաքական կայունություն</li> <li>• Ենթակառուցվածքներ</li> <li>• Հարկեր և տուրքեր</li> <li>• Էներգետիկ ռեսուրսների գներ</li> <li>• Անհրաժեշտ հմտություններ</li> <li>• Ֆինանսական խոչընդոտներ</li> <li>• Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված օրենսդրություն</li> </ul>

Ցուցանիշն արժեքներ է ընդունում [1-5] միջակայքում, ընդ որում, որքան այն մոտ է 1-ին այնքան ՓՄՁ միջազգային մրցունակությունը ցածր է և, ընդհակառակը, որքան մոտ է 5-ին, մրցունակությունը բարձր է: 2016թ.-ին աշխարհի տասը երկրներում գործող ՓՄՁ (կատարված ընտրանքում ներառված են թվով ավելի քան 2,200 ՓՄՁ-եր) միջազգային մրցունակության ցուցանիշը ամփոփ տեսքով ներկայացված է ստորև (տե՛ս աղյուսակ 3)<sup>139</sup>:

**ՓՄՁ մրցունակությունն ըստ երկրների**



Հետազոտությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ տասը երկրներից ամենամրցունակ ՓՄՁ-ները գտնվում են Գերմանիայում, որի ցուցանիշը կազմում է 3.38 միա-

<sup>139</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 11

վոր: Նկատենք, որ չնայած գերմանական ՓՄՁ-երը ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ցուցանիշներով (կոռուպցիա – 3.81, սոցիալ-քաղաքական կայունություն – 3.50, ենթակառուցվածքներ – 3.47 և այլն<sup>140</sup>) ուսումնասիրվող երկրների շարքում առաջատար են, այնուամենայնիվ բիզնեսի ներկայացվածության տեսանկյունից զիջում են ամերիկյան ՓՄՁ-երին: Իսպանիան, Չինաստանը և Իտալիան ունեն միջանկյալ դիրք (համապատասխանաբար 3.20, 3.17 և 3.05), իսկ Ռուսաստանը, Ճապոնիան և Բրազիլիան գտնվում են հետնապահի դիրքերում, որոնց համար մրցունակության ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 3.04, 2.97 և 2.96: Ինչ վերաբերում է զարգացող երկրներին, ապա պետք է փաստել, որ վերջիններս թե՛ ՓՄՁ նորարարական և թե՛ ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման մակարդակով զիջում են զարգացած երկրներին: Այսպես օրինակ՝ Ռուսաստանում ՓՄՁ-երի նորարարական մակարդակը բնութագրող ցուցանիշը 2016թ.-ին կազմել է 3.07, իսկ ինստիտուցիոնալ միջավայրի միջինացված ցուցանիշը՝ 2.91<sup>141</sup>:

Արդյունաբերական հեղաշրջումից հետո բազմաթիվ տնտեսագետներ որպես երկարաժամկետ տնտեսական աճը խթանող կարևորագույն գործոն առանձնացրեցին տեխնոլոգիական փոփոխությունները: Ներկայումս մեծ մասսայականություն է վայելում տնտեսական աճի վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության ուսումնասիրությունը, որը թերևս հանդես է գալիս որպես աճի խթանման առանցքային գործոն: Այն սահմանվում է որպես **ապրանքների և ծառայությունների արտադրության, առևտրայնացման և շուկա դուրսբերման տեխնոլոգիայի բարելավում (այդ թվում նաև ձեռնարկությունների կազմակերպումը)**<sup>142</sup>: Անհրաժեշտ է տեխնոլոգիաների փոփոխությունը տարբերել տեխնոլոգիաների տարածումից (դիֆուզիա), որոնք տարբեր հասկացություններ են: Տեխնոլոգիաների տարածումը դրանց դինամիկ յուրացման հետևանքն է: Այն բնութագրվում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում տեխնոլոգիաները յուրացնողների կողմից դրանց կուտակմամբ<sup>143</sup>: Տեխնոլոգիական փոփոխությունների բարձր տեմպը դեռևս չի նշանակում տեխնոլոգիաների լայնա-

<sup>140</sup> Տե՛ս հավելված 2

<sup>141</sup> Տե՛ս հավելված 2

<sup>142</sup> The World Bank “Global Economic Prospects: Technology and Technological Diffusion in The Developing World”, 2008, page 51.

<sup>143</sup> Comin, Mestieri M., “Technology Diffusion, Measurement, Causes and Consequences”, May 2013, page 3.

մասշտաբ տարածում և օգտագործում: Համաձայն Ֆրանսիայի էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերության նախարարության կողմից կատարված հետազոտության՝ տեխնոլոգիաների տարածումը պայմանավորված է հետազոտական և զարգացման ինստիտուտների արդյունավետ գործունեությամբ, նորարարությունների և կապիտալ ռիսկերի ֆինանսավորմամբ, իսկ ահա սեփականության իրավունքի պաշտպանությունը կա՛մ էական ազդեցություն չի թողնում, կա՛մ նույնիսկ կաշկանդում է տեխնոլոգիաների տարածմանը<sup>144</sup>: Վերոնշյալի վառ օրինակ է հանդիսանում Չինաստանը, որը, չնայած միջազգային մի շարք կառույցների և համաձայնագրերի անդամակցության (այդ թվում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը) շրջանակներում կատարելագործում է մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության առնչվող օրենսդրությունը, սակայն արդյունքներն այնքան էլ հուսադրող չեն, քանի որ օրենքների կիրառության մեխանիզմները ոչ արդյունավետ են գործում, ինչը, կարծում ենք, հանդիսանում է Չինաստանում տեխնոլոգիաների տարածման «գրավականը»: Մտավոր սեփականության իրավունքի միության կողմից հրապարակվող հաշվետվության համաձայն՝ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համաթիվը Չինաստանում 0-ից 10 գնահատման համակարգում 2016թ.-ին կազմել է 5.4, ընդ որում՝ 2007թ.-ի համեմատությամբ այն աճել է ընդամենը 0.9 միավորով<sup>145</sup> չնայած մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում երկրի միջազգային ակտիվ համագործակցության ջանքերին: Համեմատության համար նշենք, որ նույն ցուցանիշը Սինգապուրում և Ճապոնիայում կազմում է 8.1, Հարավային Կորեայում՝ 6.1, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում համապատասխանաբար՝ 4.2, 4.6 և 4.1<sup>146</sup>: Այսպիսով, տեխնոլոգիաների տարածումը նպաստում է մրցունակ արտադրության թողարկմանը և հետևաբար նաև տնտեսական աճին: Տեխնոլոգիաների տարածումը խթանող ինստիտուտներից առանձակի կարևորվում են հետազոտական կենտրոնների, զարգացման հիմնադրամների և այնպիսի ֆինանսական ինստիտուտների առկայությունը, որոնք իրենց ուսերին կվերցնեն բարձր ռիսկայնություն ունեցող կապիտալ ներդրումների ֆինանսավորման բեռը: Ինչ վերա-

<sup>144</sup> Boulhol H., "Technology differences, institutions and economic growth: a conditional convergence", February 2004, page 24.


<sup>145</sup> Տե՛ս նույն տեղում

<sup>146</sup> The International Property Rights Index 2015

բերում է մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանը, ապա պետք է փաստել, որ կարճաժամկետում դրա ցածր իրավապաշտպանության մակարդակը դրական ազդեցություն կարող է ունենալ երկրի՝ բարձր տեխնոլոգիական արտադրության ձևավորման և զարգացման գործում՝ չնայած իրավաբանորեն անընդունելի լինելուն: Երկարաժամկետում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ցածր մակարդակը բնականաբար ապակառուցողական է և կարող է հանգեցնել երկրի կառավարության նկատմամբ անվստահության մթնոլորտի ձևավորմանը: Ուստի, կայուն երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության պատշաճ մակարդակը, կարծում ենք, այլընտրանք չունի: Աշխատանքի շրջանակներում տնտեսական աճի վրա ինստիտուցիոնալ միջավայրի և դրանից ածանցվող տեխնոլոգիական գործոնի ազդեցության վերլուծությունը կատարված է ստորև ներկայացված գծանկարի համաձայն.

Գծանկար 3.

**Ինստիտուցիոնալ միջավայրի և տեխնոլոգիական գործոնի ազդեցությունը տնտեսական աճի վրա**



**Ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը տնտեսական աճի վրա.**

Աճի ներառականությունը, հատկապես երկարաժամկետ կայունության տեսանկյունից, ենթադրում է որոշակի ինստիտուցիոնալ փոփոխություններ: Այս համատեքստում կարևոր է ոչ այնքան կոնկրետ պահի դրությամբ արդյունավետ ինստիտուտների առկայությունը, որքան ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունը և հարմարվողականությունը նոր հնարավորություններին: Ինստիտուտների դինամիկ փոփոխությունները կայուն տնտեսական աճի տեսանկյունից մեկնաբանելու համար մեր կողմից կատարվել են երկրների ինստիտուցիոնալ միջավայրը բնորոշող համա-

թվերի և ՀՆԱ աճի տեմպի միջև կոռելյացիոն գնահատումներ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածով՝ խնդիրը առանձին-առանձին դիտարկելով զարգացման բարձր և ցածր մակարդակ ունեցող երկրների համար (տե՛ս աղյուսակներ 4-7):

**Հաշվարկին մասնակցող ցուցանիշների ընտրանքը և աղբյուրները.**

Տնտեսական աճի ցուցանիշները վերցված են Համաշխարհային բանկի տվյալների բազայից: Հաշվարկին մասնակցում են աշխարհի թվով 123 երկրներ, որոնցից 35-ը դասակարգված են զարգացած երկրների, իսկ 88-ը՝ զարգացողների շարքում: Երկրներն ըստ զարգացածության դասակարգված են ՄԱԿ-ի չափանիշներին համապատասխան, որոնց ընտրության տրամաբանական առանցքը վիճակագրական բազաների առավելագույնս համադրելի լինելու հանգամանքն է: Հաշվարկին մասնակցող համաթվերի մեթոդաբանությունը և աղբյուրները ներկայացված են ստորև.

- ✓ **Կոռուպցիայի դեմ պայքարի համաթիվ** – վիճակագրական տվյալները վերցված են «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» կողմից հրապարակվող բազայից: Համաթիվը տատանվում է [0, 100] միջակայքում, ընդ որում, որքան այն մոտ է զրոյի, այնքան երկրում կոռուպցիայի մակարդակը բարձր է և հակառակը<sup>147</sup>:
- ✓ **Մամուլի ազատության համաթիվ** – վիճակագրական տվյալները վերցված են «Լրագրողներ առանց սահմանների» (RWB) միջազգային կազմակերպության կողմից հրապարակվող տվյալների բազայից: Համաթիվը խարսխված է յոթ հիմնասյունների վրա.
  1. Բազմակարծություն
  2. Լրատվամիջոցների անկախություն
  3. Տեղեկատվական միջավայր, որտեղ իրացվում է տեղեկատվությունը
  4. Ոլորտը կարգավորող օրենսդրություն
  5. Տեղեկատվության ձևավորման և մատակարարման վրա ազդող գործընթացների և ինստիտուտների թափանցիկություն
  6. Ենթակառուցվածքներ
  7. Լրագրողների նկատմամբ բռնություն և չարաշահումներ

---

<sup>147</sup> Տե՛ս Թրանսփարենսի Ինթերնեյշնլ կազմակերպության պաշտոնական կայքէջում.  
<https://www.transparency.org/cpi2015/>

Համաթիվն արժեքներ է ընդունում [0, 100] միջակայքում: Որքան վերջինս մոտ է գրոյի, այնքան մամուլի գործունեությունը համարվում է ազատական և հակառակը<sup>148</sup>:

- ✓ **Օրենքի գերակայություն** - վիճակագրական տվյալները վերցված են տնտեսական համագործակցության և զարգացման կազմապերպության կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների բազայից: Համաթիվը տատանվում է [0, 100] միջակայքում: Համաթիվի գրոյին ձգտելը բնութագրում է երկրում օրենքի գերակայության բարձր մակարդակը և հակառակը<sup>149</sup>:
- ✓ **Մտավոր սեփականության պաշտպանության համաթիվ** – հաշվարկվում և հրապարակվում է սեփականության իրավունքի պաշտպանության միջազգային միության կողմից: Համաթիվը հաշվի է առնում ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանունակությունը: Այն հաշվարկվում է թվով 125 երկրի համար և արժեքներ է ընդունում [0, 10] միջակայքում: Համաթիվի գրոյին ձգտելը վկայում է սեփականության իրավունքների ցածր իրավապաշտպանության մասին և հակառակը<sup>150</sup>:

Աղյուսակ 4.

**Կարճաժամկետ հատվածում զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների ներառական տնտեսական աճի գնահատման մատրիցա<sup>151</sup>**

	<i>ՀՆԱ աճի տեմպ</i>	<i>Կոռեյացիայի դեմ պայքար</i>	<i>Մամուլի ազատություն</i>	<i>Օրենքի գերակայություն</i>	<i>Սեփականության պաշտպանություն</i>
ՀՆԱ աճի տեմպ	1.00				
Կոռեյացիայի դեմ պայքար	0.08	1.00			
Մամուլի ազատություն	0.20	(0.40)	1.00		
Օրենքի գերակայություն	(0.09)	(0.97)	0.42	1.00	
Սեփականության պաշտպանություն	0.03	0.94	(0.34)	(0.91)	1.00

Զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներում կարճաժամկետ կտրվածքով տնտեսական աճի վրա բացասաբար ազդող գործոն է հանդիսանում **օրենքի գերակայությունը**, որի կոռեյացիայի գործակիցը, սակայն, զգալիորեն փոքր է և կազմում է -0.09: Տեսականորեն այն կարելի է հիմնավորել հետևյալ կերպ: Քանի որ

<sup>148</sup> Տե՛ս հետևյալ կայքէջում. <https://rsf.org/en/detailed-methodology>

<sup>149</sup> Տե՛ս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության պաշտոնական կայքէջում. [http://www.oecd-ilibrary.org/development/states-of-fragility-2015\\_9789264227699-en](http://www.oecd-ilibrary.org/development/states-of-fragility-2015_9789264227699-en)

<sup>150</sup> Տե՛ս հետևյալ կայքէջում. <http://s3.amazonaws.com/ipri2016/IPRI+2016+Full+Report.pdf>

<sup>151</sup> Կոռեյացիայի հաշվարկը կատարվել է թվով 124 երկրների ցուցանիշների հիման վրա, որոնց մեջ կան ինչպես զարգացած երկրներ (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա և այլն), այնպես էլ զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներ (Նիգերիա, Չադ, Բանգլադեշ և այլն):



զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները հարաբերականորեն մոտ են զարգացած շուկայական հարաբերություններ ունենալուն, տնտեսական սուբյեկտների շահերը գտնվում են միմյանցից հիերարխիկ կառուցողական փոխկախվածության մեջ և գործում են շուկայական ինքնակարգավորման մեխանիզմները, ուստի շուկայական հարաբերություններին պետական միջամտությունն ու պետության կողմից պարտադրվող օրենքի գերակայությունը վերաժվում է տնտեսական աճը խոչընդոտող գործոնի: Այսպես օրինակ՝ բարձր զարգացման մակարդակ ունեցող երկրներում կյանքի բարձր որակ ապահովելուն ուղղված սոցիալական քաղաքականությունն իր ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն է թողնում հարկային քաղաքականության վրա, ինչի արդյունքում ի հայտ են գալիս կապիտալի «փախուստի» միտումներ՝ հանգեցնելով տնտեսական աճի տեմպի անկման:

Աղյուսակ 5.

**Կարճաժամկետ հատվածում զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների ներառական տնտեսական աճի գնահատման մատրիցա<sup>152</sup>**

	<i>ՀՆԱ աճի տեմպ</i>	<i>Կոռուպցիայի դեմ պայքար</i>	<i>Մամուլի ազատություն</i>	<i>Օրենքի գերակայություն</i>	<i>Սեփականության պաշտպանություն</i>
ՀՆԱ աճի տեմպ	1.00				
Կոռուպցիայի դեմ պայքար	(0.19)	1.00			
Մամուլի ազատություն	0.19	(0.40)	1.00		
Օրենքի գերակայություն	0.16	(0.92)	0.41	1.00	
Սեփականության պաշտպանություն	(0.12)	0.87	(0.27)	(0.86)	1.00

Զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում ՀՆԱ աճի վրա բացասաբար ազդող գործոններ են հանդիսանում կոռուպցիայի դեմ պայքարը և սեփականության իրավունքի պաշտպանությունը, որոնց կոռեկցիայի գործակիցները, ըստ մեր հաշվարկների, կազմում են համապատասխանաբար՝ -0.19 և -0.12 (աղյուսակ 5): Վերոնշյալի տեսական հիմնավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի կողմից, չնայած զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների կառավարությունների՝ կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերին, այնուամենայնիվ այն, որպես այդպիսին, կարճաժամկետում հնարավոր չէ վերացնել, քանի որ պահանջվում է երկարատև հետևողական քաղաքականության իրականացում, մյուս կողմից, կոռուպցիոն ռիսկերի

<sup>152</sup> Կոռեկցիայի հաշվարկը կատարվել է թվով 124 երկրների ցուցանիշների հիման վրա, որոնց մեջ կան ինչպես զարգացած երկրներ (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա և այլն), այնպես էլ զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներ (Նիգերիա, Չադ, Բանգլադեշ և այլն):

առկայությունը դառնում է «գրավիչ նախապայման» զարգացած երկրներից «փախչող» կապիտալի ներդրման համար՝ հատկապես հարկերից խուսափելու առումով: Հատկա- նշական է, որ ՀՆԱ աճի տեմպի և սեփականության իրավունքի պաշտպանության միջև կարճաժամկետում նույնպես առկա է բացասական կոռելյացիա: Մեր համոզմամբ, դա տեղավորվում է կարճաժամկետում կոռուպցիայի դեմ պայքարի՝ ՀՆԱ-ի աճի խթանման տրամաբանության մեջ: Փաստորեն, պետք է արձանագրել, որ զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում կոռուպցիոն ռիսկերն ու սեփականության իրավունքի պաշտպանության ցածր մակարդակը նպաստում են կարճաժամկետ տնտեսական աճին:

Երկարաժամկետում օրենքի գերակայությունը հանդիսանում է խոչընդոտող գործոն ինչպես զարգացման բարձր, այնպես էլ ցածր մակարդակ ունեցող երկրների համար: Սա թերևս հիմնավորվում է այն հանգամանքով, որ կառավարության կողմից հետևողականորեն իրականացվող տնտեսական բարեփոխումները երկարաժամ- կետում ի վերջո ձևավորում են շուկայի ինքնակարգավորման բարձր մակարդակ, որին պետական միջամտության բարձր աստիճանն աստիճանաբար վերածվում է կայուն երկարաժամկետ աճի խոչընդոտի: Թերևս դրանով էլ պայմանավորված է ՀՆԱ աճի տեմպի և օրենքի գերակայության միջև բացասական կոռելյացիան, որը կազմում է -0.39 զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների համար և -0.17՝ զարգացման բարձր մակարդակ ունեցողների համար (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6.

**Երկարաժամկետ հատվածում զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների ներառական տնտեսական աճի գնահատման մատրիցա<sup>153</sup>**

	<i>ՀՆԱ աճի տեմպ</i>	<i>Կոռուպցիայի դեմ պայքար</i>	<i>Մամուլի ազատություն</i>	<i>Օրենքի գերակայություն</i>	<i>Սեփականության պաշտպանություն</i>
ՀՆԱ աճի տեմպ	1.00				
Կոռուպցիայի դեմ պայքար	0.19	1.00			
Մամուլի ազատություն	0.43	(0.40)	1.00		
Օրենքի գերակայություն	(0.17)	(0.97)	0.42	1.00	
Սեփականության պաշտպանություն	0.20	0.94	(0.34)	(0.91)	1.00

<sup>153</sup> Կոռելյացիայի հաշվարկը կատարվել է թվով 124 երկրների ցուցանիշների հիման վրա, որոնց մեջ կան ինչպես զարգացած երկրներ (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա և այլն), այնպես էլ զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներ (Նիգերիա, Չադ, Բանգլադեշ և այլն):

Իր հերթին, երկարաժամկետում ՀՆԱ աճի տեմպի և կոռուպցիայի մակարդակի միջև առկա է դրական կոռելյացիա: Այլ կերպ ասած՝ կայուն երկարաժամկետ աճի ապահովման համար անհրաժեշտ են կոռուպցիայի դեմ պայքարի, սեփականության իրավունքի պաշտպանության և մամուլի ազատությունն ապահովող գործուն ինստիտուտների առկայություն (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7.

**Երկարաժամկետ հատվածում զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների ներառական տնտեսական աճի գնահատման մատրիցան<sup>154</sup>**

	ՀՆԱ աճի տեմպ	Կոռուպցիայի դեմ պայքար	Մամուլի ազատություն	Օրենքի գերակայություն	Սեփականության պաշտպանություն
ՀՆԱ աճի տեմպ	1.00				
Կոռուպցիայի դեմ պայքար	0.30	1.00			
Մամուլի ազատություն	0.17	(0.40)	1.00		
Օրենքի գերակայություն	(0.39)	(0.92)	0.41	1.00	
Սեփականության պաշտպանություն	0.45	0.87	(0.27)	(0.86)	1.00

**Ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը սեփնուլոգիական գործոնի վրա.**

Տեխնոլոգիական գործոնի վրա ինստիտուցիոնալ միջավայրի ազդեցությունը գնահատելու համար փորձենք վերլուծել Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից պարբերաբար հրապարակվող համաշխարհային մրցունակության համաթվի բացվածքն ըստ 12 հիմնասյունների, որոնք արժեքներ կարող են ընդունել [1-7] միջակայքում<sup>155</sup>

1. Ինստիտուտներ
2. Ենթակառուցվածքներ
3. Մակրոտնտեսական միջավայր
4. Առողջապահություն և հիմնական կրթություն
5. Բարձրագույն կրթություն և վերապատրաստում
6. Ապրանքային շուկայի արդյունավետություն
7. Աշխատանքի շուկայի արդյունավետություն
8. Ֆինանսական շուկայի զարգացում
9. Տեխնոլոգիական պատրաստվածություն

<sup>154</sup> Կոռելյացիայի հաշվարկը կատարվել է թվով 124 երկրների ցուցանիշների հիման վրա, որոնց մեջ կան ինչպես զարգացած երկրներ (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա և այլն), այնպես էլ զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներ (Նիգերիա, Չադ, Բանգլադեշ և այլն):


<sup>155</sup> Klaus Schwab, “The Global Competitiveness Report 2016-2017”, World Economic Forum

- 10. Ներքին շուկայի մեծություն
- 11. Գործարարության բարդություն
- 12. Ինովացիա

Թվով 138 երկրների համար հաշվարկված ինստիտուտների որակը (սեփականության իրավունքների պաշտպանություն, դատական ատյանների անկախություն, կորպորատիվ մշակույթ և այլն) և ինովացիոն մակարդակը (գիտահետազոտական ինստիտուտների որակ, գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսեր, ԲՈՒՀ-արդյունաբերություն կապ և այլն) բնութագրող ենթահամաթվերի համադրությունը ներկայացված է գծապատկեր 7-ում<sup>156</sup>:

Գծապատկեր 7.

**Ինստիտուցիոնալ միջավայրը և ինովացիոն մակարդակը բնութագրող ենթահամաթվեր**



Գծապատկեր 7-ից կարելի է նկատել, որ ինստիտուտների որակը բնութագրող ենթահամաթվերն անկախ երկրների զարգացման մակարդակից գերազանցում են նորարարական ենթահամաթվերը, ինչը գալիս է հիմնավորելու վերոշարադրյալում ներկայացված տեսակետը, համաձայն որի՝ նորարարությունները, հետևաբար նաև տեխնոլոգիական փոփոխություններն ածանցվում են բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրից: Բացի այդ, երկրում գործող ինստիտուտների որակական գերազանցությունը առկա նորարարական մակարդակի նկատմամբ հանդիսանում է յուրահատուկ «լոկոմոտիվ», որն իր հետևից «քաշում-բարձրացնում» է երկրի նորարարական ներուժը: Նշենք նաև, որ քննարկվող ենթահամաթվերի միջև առկա է բավականին

<sup>156</sup> Տվյալների բազայում ներկայացված է 152 երկիր, որոնցից 14-ի մասով տեղեկատվությունը հասանելի չէ: Ուստի կատարված հետազոտությունն իրականացվել է թվով 138 երկրի համար: Վիճակագրական բազան կարելի է ներբեռնել հետևյալ կայքէջից.  
<http://reports.weforum.org/global-competitiveness-index/downloads/>

ուժեղ դրական կոռելյացիա, որը կազմում է 0. 84<sup>157</sup>: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Համաշխարհային բիզնես դպրոցի (INSEAD), «Ադելո Գրուպի» և «Մարդկային կապիտալի առաջնորդության» ինստիտուտի կողմից համատեղ մշակված «ուղեղների» ներգրավման համաշխարհային մրցունակության համաթվի ուսումնասիրությունը: Այն ցույց է տալիս, թե որքանով է այս կամ այն երկիրը գրավիչ տաղանդավոր մարդկանց ներգրավելու համար: Համաթիվը տատանվում է [0-100] միջակայքում: Որքան երկրի ցուցանիշը մոտ է 100-ի, այնքան տվյալ երկրում գործող ինստիտուտները արդյունավետ են և «ուղեղների» ներգրավման համար գրավիչ, և ընդհակառակը, 0-ին մոտենալով, նվազում է գրավչության աստիճանը: Բնականաբար, «ուղեղների» ներգրավման համար առավել գրավիչ են զարգացած երկրները, ինչպիսիք են օրինակ՝ Շվեյցարիան (74.55), Սինգապուրը (74.09), Մեծ Բրիտանիան (69.40), ԱՄՆ (69.34) և այլն, իսկ հետնապահի դիրքերում են զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրները: Համեմատության համար նշենք, որնախկին ԽՍՀՄ երկրներից Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Ռուսաստանում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 42.84, 42.76, 42.10 և 45.03<sup>158</sup>:

### **2.3. ՀՀ տնտեսական աճի փուլային ուսումնասիրություն**

ՀՀ տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսային բազան ձևավորվել է դեռևս ԽՍՀՄ կազմում գտնվելու տարիներին: Գաղտնիք չէ, որ ԽՍՀՄ կազմում ՀՀ-ն աչքի է ընկել ոչ միայն զարգացած քիմիական արդյունաբերությամբ, ոգելից խմիչքների, հանքային ջրերի արտադրությամբ, բարձրագույն կրթություն ունեցող որակյալ աշխատուժով, այլ նաև բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկմամբ, որը կազմել է ՀՆԱ-ի մոտ 20%-ը<sup>159</sup>: «Ի Վի Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության կողմից հրապարակված հետազոտություններից մեկում Հայաստանը, նույնիսկ ներկայացվել է որպես ԽՍՀՄ կազմում գործող «Սիլիկոնյան հարթավայր»<sup>160</sup>: Ընդհանուր առմամբ, կարծում ենք, անկախության ձեռքբերումից հետո տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված որակյալ տնտեսական աճ ապահովելու

<sup>157</sup> Հաշվարկվել է մեր կողմից Էկզել ծրագրային փաթեթի օգնությամբ

<sup>158</sup> Bruno Lanvin, Paul Evans, “The Global Talent Competitiveness Index 2017”, page 13

<sup>159</sup> Волошин В.И., Якушкин В.С., “Социально-Экономическое развитие постсоветских стран: Итоги двадцатилетия”, Российская академия наук, Москва 2012, стр. 191.

<sup>160</sup> “Armenia: Diaspora Assisted Growth”, EV Consalting, page 3

համար Հայաստանն ունեցել է բավարար չափով մեկնարկային բազա, որը, սակայն, հետխորհրդային տնտեսական ցնցումների կամ, այսպես կոչված, «շուկային թերապիայի» միջով անցնելու արդյունքում զգալիորեն խարխլվել է: Տնտեսական աճի առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով 1990-ական թթ.-ից մինչ մեր օրերն ընկած ժամանակահատվածը պայմանականորեն բաժանենք 4 փուլի՝

1. Հետխորհրդային փուլ (1990-1995թթ.)
2. Վերականգնողական աճի փուլ (1996-2000թթ.)
3. Երկնիշ տնտեսական աճի փուլ (2001-2009թթ.)
4. Հետճգնաժամային փուլ (2010թ.-ից սկսած)

#### Հետխորհրդային փուլ.

Տնտեսական աճի հետխորհրդային փուլը բնորոշվում է կենտրոնացված պլանային տնտեսական համակարգից ազատ շուկայական համակարգին անցման բուռն գործընթացներով: Ազատ շուկայական համակարգի համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի բացակայության պայմաններում պետական սեփականության մի զգալի հատվածի մասնավորեցումը կաթվածահար արեց ողջ տնտեսական համակարգը, և ՀՀ-ն հայտնվեց, այսպես կոչված, «ինստիտուցիոնալ ծուղակի» մեջ, ինչը դարձավ ոչ միայն տնտեսական աճի կասեցման, այլև նույնիսկ տնտեսական անկման պատճառ: Այս առումով տեղին է Ա. Մարգարյանի տեսակետը, համաձայն որի՝ «մեկ անգամ ընկնելով ինստիտուցիոնալ ծուղակի մեջ՝ համակարգն ընտրում է զարգացման անարդյունավետ ճանապարհ, ընդ որում, ժամանակի ընթացքում անցումն առավել արդյունավետ հետագծի կարող է ռացիոնալ չլինել»<sup>161</sup>: «Ծուղակում» հայտնված տնտեսական համակարգի խեղաթյուրման (դեֆորմացիայի) մասին են վկայում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ներկայացված են աղյուսակ 8-ում<sup>162</sup>.

<sup>161</sup> Մարգարյան Ա. «Տնտեսության արդիականացման տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ գործոնների փոխհարաբերությունների հարցի շուրջ», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N2, Երևան 2011, էջ 8

<sup>162</sup> Վիճակագրությունը տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում.  
<https://data.worldbank.org/indicator>

**Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1990-1995թթ**

<b>Ցուցանիշ</b>	<b>1990</b>	<b>1991</b>	<b>1992</b>	<b>1993</b>	<b>1994</b>	<b>1995</b>
ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	2,256	2,068	1,272	1,201	1,315	1,468
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	637	589	369	357	400	456
Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հաշվեմնացորդ (մլն ԱՄՆ դոլար)	-	-	-	-67.7	-103.8	-220.6
ինֆլյացիա	-	-	-	-	3,373 %	176 %
Գործազրկություն	-	-	1.8 %	5.3 %	6.6 %	6.7 %
Խնայողությունների մասնաբաժինը	-	-	-	-7 %	-2 %	-7 %

Աղյուսակից կարելի է տեսնել, որ անկախությանն անմիջապես հաջորդող 6 տարիների ընթացքում մակրոտնտեսական ցուցանիշները վատթարացել են՝ ՀՆԱ-ն կրճատվել է՝ 2,256 մլն դոլարից 1995թ-ին հասնելով 1,468 մլն դոլարի, մեծացել է գործազրկությունը, ինֆլյացիայի մակարդակը հասել է նույնիսկ մինչև 3,373 %-ի (1994թ-ին), իսկ ազգային եկամտի մեջ բնակչության խնայողությունների մասնաբաժինն արտահայտվել է բացասական տոկոսներով, և եթե այս ֆոնին ավելացնենք նաև արտագաղթի բարձր տեմպերն ու արտաքին ռազմաքաղաքական գործոններով պայմանավորված անբարենպաստ ազդակները, ապա պատկերը կդառնա ամբողջական: Նման պայմաններում, բնականաբար, ավելորդ կլինեի մտածել կայուն տնտեսական աճի ապահովման գործում տեխնոլոգիական գործոնի և դրա կայացման համար անհրաժեշտ ինստիտուտների ձևավորման մասին:

**Վերականգնողական աճի փուլ.**

1996-ական թթ.-ից սկսած, նկատվեց տնտեսական աճի հարաբերական կայունացում՝ միջինում տարեկան 4%-ից 6%-ի շրջակայքում<sup>163</sup>: ՀՀ ԿԲ-ին հաջողվեց զգալիորեն զսպել գնաճը, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն դրսևորեց աճման միտումներ՝ 1996թ.-ին 503-ից 2000-ին հասնելով 1,911 ԱՄՆ դոլարի (գրեթե նույն մակարդակին, ինչ 1990թ.-ին էր), թեև ոչ էական ծավալներով, այնուամենայնիվ արտահանման մեջ բարձր տեխնոլոգիական արտադրանքը 2000թ-ին կազմել է մոտ 4 մլն ԱՄՆ դոլար,

<sup>163</sup> Հաշվարկվել է մեր կողմից ՀԲ վիճակագրական տվյալների հիման վրա


իսկ ազգային եկամտի մեջ բնակչության խնայողությունների մասնաբաժինը քննարկվող ժամանակահատվածում սկսեց տատանվել 0%-ից 3%-ի միջակայքում<sup>164</sup>:

Երկնիշ տնտեսական աճի փուլ.

ՀՀ տնտեսական աճի առանձնահատկությունները բացահայտելու առումով առանձնակի կարևորություն պետք է տալ երրորդ՝ երկնիշ տնտեսական աճի փուլի ուսումնասիրությանը, քանի որ այս փուլում ցնցումային զարգացումները հաղթահարելուց հետո սկսեցին նշմարվել զարգացման որոշակի օրինաչափություններ: 2001-2008թթ. ՀՆԱ տարեկան աճը կազմել է առնվազն 11%-13%: Տնտեսական անկում գրանցվել է միայն 2009թ.-ին (նախորդ տարվա համեմատ անկումը կազմել է մոտ 12%), որը հիմնականում պայմանավորվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: Չնայած այս փուլում ՀՆԱ-ն աճել է երկնիշ թվերով, այնուամենայնիվ եթե իրականացնենք աճի գործոնային վերլուծություն, կտեսնենք, որ այն հիմնականում պայմանավորված է շինարարության, ստացված տրանսֆերտների և ծառայությունների աճով, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտում թողարկման ծավալները դինամիկ կրճատվել են (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8.

**ՀՆԱ աճի վրա ազդող հիմնական գործոնները 2000-2009թթ.**



Համաձայն գծապատկեր 8-ի՝ 2000թ-ին ՀՆԱ-ն 1,031 մլրդ դրամից աճել է՝ 2008թ.-ին հասնելով 3,568 մլրդ դրամի, ընդ որում, նույն ժամանակահատվածում շինարարությունն աճել է՝ 101 մլրդ դրամից հասնելով 858 մլրդ դրամի (մասնաբաժինը

<sup>164</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում.  
<http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM&view=chart>



ՀՆԱ-ի մեջ 2008թ.-ին կազմել է 24%), արտերկրից ստացված դրամական փոխանցումները՝ 98 մլրդ դրամից 582 մլրդ դրամի (մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ 2008թ. -ին կազմել է 16%), իսկ ծառայությունները՝ 179 մլրդ դրամից 698 մլրդ դրամի (մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ 2008թ. -ին կազմել է 20%)<sup>165</sup>: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ տնտեսական աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են եղել շինարարական, այսպես կոչված, «բումով» և արտերկրից ստացված տրանսֆերտներով: Իհարկե, տնտեսական աճը, առավել ևս երկնիշ տեմպերով, մի կողմից ողջունելի է, սակայն, մյուս կողմից, այն պետք է ունենա երկարաժամկետ հեռանկարներ, որի երաշխիքը, տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված, մրցունակ արտադրանքի թողարկումն է, ինչն ամենևին բնորոշ չէ քննարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճին: Ասվածը հիմնավորելու համար բավական է նշել, որ ՀՀ արտահանման մեջ բարձր տեխնոլոգիական արտադրանքի ծավալն առավելագույնին հասել է 2008թ.-ին, որն ընդամենը կազմել է 6.5 մլն ԱՄՆ դոլար կամ արտահանման մոտ 0.61%-ը, ռեզիդենտների կողմից պատենտավորված գյուտերը չեն գերազանցել 226-ը (2008թ.), իսկ ոչ ռեզիդենտների կողմից պատենտավորվածները՝ 15-ը (2001թ)<sup>166</sup>: Տնտեսության մրցունակությունը բնութագրող Համաշխարհային մրցունակության համաթիվը 2006-2009թթ. միջինում կազմել է 3.74, որը, չնայած միջինից փոքր-ինչ բարձր ցուցանիշ է, սակայն, եթե ուսումնասիրենք ըստ 12 հենասյուների մրցունակության համաթվի բացվածքը, ապա կտեսնենք, որ այդ ցուցանիշը պայմանավորված է ընդամենը 3 հենասյուների հարաբերականորեն բարձր ցուցանիշով՝ «առողջապահություն և հիմնական կրթություն», «մակրոտնտեսական միջավայր» և «աշխատանքի շուկայի արդյունավետություն», համապատասխանաբար՝ 5.47, 4.68 և 4.55, մինչդեռ «ինստիտուտների», «ենթակառուցվածքների», «տեխնոլոգիական պատրաստվածության» և «ինովացիաների» մասով ցուցանիշները զգալիորեն ցածր են, համապատասխանաբար՝ 3.45, 2.79, 2.64 և 2.82<sup>167</sup>: Այս առումով, կարծում ենք, կարելի է համա-

<sup>165</sup> ՀՆԱ-ի մեջ շինարարության, գյուղատնտեսության, արդյունաբերության, ծառայությունների և ստացված տրանսֆերտների մասնաբաժինները հաշվարկված են մեր կողմից՝ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների հիման վրա: Տես՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում. <http://armstat.am/am/?nid=586>

<sup>166</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում.

<https://data.worldbank.org/indicator/IP.PAT.NRES>

<sup>167</sup> Տե՛ս հավելված 3

ծայնել Հ. Ի. Աղաջանյանի ղեկավարությամբ «Տնտեսական աճի որակը» թեմայով իրականացված հետազոտության շրջանակներում ՀՆԱ-ի վրաշինարարության շուկային փոփոխության ազդեցության արդյունքում ներկայացված եզրահանգման հետ, համա-  
ծայն որի՝ «2001-2008 թթ. Ընթացքում ՀՀ տնտեսական երկնիշ աճը, ըստ էության, որակյալ տնտեսական աճ չի կարող համարվել, քանի որ առաջացել է կառուցվածքային էական կախվածություն տնտեսության մեկ ճյուղից, ընդ որում՝ բնույթով անկայուն»<sup>168</sup>: Ի լրումն վերոնշյալի՝ կարծում ենք, տեղին է մեջբերել նաև Ա. Եղիազարյանի տեսակետը, ըստ որի՝ «շինարարության զարգացումն ունի թույլ զարգացած տնտեսություններին բնորոշ առանձնահատկություններ: Հատկանշական է, որ շինարարական աշխատանքների մեծ մասն ուղղվել է ոչ թե վերամշակող արտադրական հզորությունների, այլ բնակարանային և ենթակառուցվածքների (տրանսպորտ, էներգետիկա և այլն) շինարարությանը»<sup>169</sup>: Տնտեսական աճի որակական կողմի վրա շեշտադրություն կատարելով՝ Լ. Կարապետյանը հաշվարկել է, այսպես կոչված, «տնտեսության ոլորտային առաձգականության» գործակից (ցույց է տալիս, թե ինչպես է տնտեսական աճը արձագանքում տնտեսության կառուցվածքային փոփոխություններին), որը նույնպես ցույց է տալիս տնտեսական աճի բարձր առաձգականությունը շինարարության և ծառայությունների նկատմամբ: Հեղինակը մասնավորապես նշում է. «Ստացվում է, որ եթե մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճի նկատմամբ առաձգական ոլորտներ էին համարվում շինարարությունն ու ծառայությունները, ապա հետճգնաժամային զարգացումները էականորեն փոխել են տնտեսական զարգացման որակը: Տնտեսական աճի նկատմամբ առավել առաձգական է դարձել գյուղատնտեսության ոլորտը, զգալիորեն բարելավվել է արդյունաբերության ցուցանիշը, իսկ շինարարության ոլորտում իրավիճակը շարունակաբար վատթարացել է»<sup>170</sup>:

<sup>168</sup> «Տնտեսական աճի որակը», ՀՊՏՀ 2012-2013 ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, էջ 67

<sup>169</sup> Եղիազարյան Ա. «Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը (հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ)», 21-րդ դար, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, Երևան 2014, թիվ 3(55), էջ 52

<sup>170</sup> Կարապետյան Լ. «ՀՀ-ում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման հիմնահարցի շուրջ», Բանբեր Երևանի համալսարանի, Երևան 2017, № 2 (23), էջ 71-72

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել երկնիշ տնտեսական աճի փուլի հիմնական առանձնահատկությունները, ապա պետք է նշել, որ այն հիմնականում ուներ ավելի քանակական, քան թե որակական, ավելի կարճաժամկետ, քան թե երկարաժամկետ, ավելի անկայուն և ոչ մրցունակ, քան թե կայուն և մրցունակ զարգացման հիմքեր: Նշենք նաև, որ այս փուլում, չնայած տնտեսական աճը չի կարելի պայմանավորել տեխնոլոգիական բաղադրիչով և տնտեսության մրցունակության բարձրացմամբ, տեխնոլոգիական փոփոխությունների համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման ուղղությամբ որոշակի քայլեր, այնուամենայնիվ իրականացվել են: Մասնավորապես, 2002թ.-ին հիմնադրվեց Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ), որի նպատակը նորարարությունների զարգացման համար նպաստավոր միջավայր ստեղծելու և տեխնոլոգիաների կատարելագործման միջոցով ՀՀ-ում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի աճին աջակցություն ցուցաբերելն է<sup>171</sup>: ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին ինովացիոն գործունեությանն առնչվող մի շարք որոշումներ, որոնցից են «2005-2010թթ. Ինովացիոն համակարգի ձևավորման ծրագրի մասին», «Ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատելու մասին», «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» որոշումները: ՀՀ կառավարության 2005թ. -ի հունվարի 20-ի N2 նիստի արձանագրային որոշմամբ ընդունվեց նաև «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության մասին» հայեցակարգը, իսկ արդեն 2006թ.-ին ուժի մեջ մտավ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության» մասին ՀՀ օրենքը<sup>172</sup>:

#### Հետզնաժամային փուլ.

Նորարարությունների խթանման և տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված մրցունակ տնտեսություն ձևավորելու համար հետզնաժամային փուլում շարունակում են իրականացվել որոշակի ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք հիմնականում ունեն ֆորմալ բնույթ, ինչպիսին է, օրինակ, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի N6 արձանագրային որոշմամբ ընդունված «Ինովացիոն տնտե-

<sup>171</sup> Տե՛ս Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի պաշտոնական կայքէջում.

<http://www.eif.am/arm/about/>

<sup>172</sup> Տե՛ս նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի պաշտոնական կայքէջում.

<http://www.innovcentre.am/hy/article/55>


սության ձևավորման մեկնարկային ռազմավարության» մասին հայեցակարգը, որտեղ ներկայացված է մինչև 2020թ. «նորարարության ազգային համակարգի ձևավորման» ռազմավարական հորիզոնները<sup>173</sup>: ՀՀ կառավարության 2014թ.-ի մարտի 27 N442-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» համաձայն՝ 2000թ.-ին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ-ում գերակա ճյուղ հայտարարելուց ի վեր ՀՀ կառավարության մասնակցությամբ իրականացվել են մի շարք նախաձեռնություններ, ինչպիսիք են օրինակ՝ 2007թ.-ին National Instruments կորպորացիայի կողմից ճարտարագիտական և գիտահետազոտական գրասենյակի հիմնումը Երևանում, 2008թ.-ին Գյումրու տեխնոպարկում D-Link International կազմակերպության ծրագրային մշակումների տարածաշրջանային լաբորատորիայի հիմնումը, 2011թ.-ին ՀՀ կառավարության և Մայքրոսոֆթ կորպորացիայի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի բացումը Երևանում և այլն<sup>174</sup>: Չնայած այս առումով որոշակի ֆորմալ ինստիտուտների առկայությանը, այնուամենայնիվ 2010թ.-ից սկսած տնտեսության մրցունակության բարձրացման և որակյալ տնտեսական աճի ապահովման ուղղությամբ շոշափելի արդյունքներ դեռևս չեն գրանցվել: Դրա մասին է վկայում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, որը 2016թ.-ին կազմել է 3,606 ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 2008թ.-ին հասել էր իր պիկային ցուցանիշին և կազմել 4,010 ԱՄՆ դոլար: Իհարկե, հետճգնաժամային 2010թ.-ից ի վեր, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ՀՀ-ում աճել է, սակայն այդ ցուցանիշի աճման վրա զգալի ազդեցություն է ունեցել արտագաղթի բարձր տեմպերը (տե՛ս գծապատկեր 9):

---

<sup>173</sup> Տե՛ս Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ. [http://www.arlis.am/Annexes%5C3%5Cqax6\\_11hav.pdf](http://www.arlis.am/Annexes%5C3%5Cqax6_11hav.pdf)

<sup>174</sup> ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N442-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», էջ 61

**ՀՆԱ (հազ. ԱՄՆ դոլար) և բնակչության թվաքանակի դինամիկան 1990-2016թթ.**



Գծապատկերից կարելի է տեսնել, որ 1990-ական թվականներից սկսած մինչև 2016թ. բնակչության թվաքանակը կրճատվել է մոտ 613 հազ.-ով, ինչը, բնականաբար, զգալիորեն ազդել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի վրա: Ավելին, եթե իրականացնենք գիտական վերացարկում և չեզոքացնենք արտագաղթի ազդեցությունը՝ ընդունելով բնակչության թվաքանակը ճիշտ նույնքան, որքան կազմել է 1990թ.-ին (3,538 հազ. մարդ)<sup>175</sup>, ապա 2016թ.-ին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կկազմի 2,981 ԱՄՆ դոլար<sup>176</sup>: Ստացվում է, որ արտագաղթի ազդեցությունը չեզոքացնելու պարագայում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն զգալիորեն նվազում է: Իհարկե, մի կողմից կատարված վերացարկումը կարելի է քննադատել՝ որպես թեզիս առաջ քաշելով այն տեսակետը, որ բնակչության թվաքանակի անփոփոխ մնալու պարագայում ՀՆԱ բացարձակ ցուցանիշը կարող էր ավելի մեծ լինել, քանի որ ավելի մեծ մարդկային կապիտալով հնարավոր կլինեին ավելի մեծ ՀՆԱ ստեղծել, սակայն, մյուս կողմից, որպես հակափաստարկ կարող է հանդիսանալ «երկնիշ տնտեսական» աճի նախադեպը, որն, այնուամենայնիվ, ապահովվել է չդադարող արտագաղթի պայմաններում: Բացի այդ, ՀՆԱ-ի ստեղծումը պայմանավորված է ոչ թե բնակչության թվաքանակով, այլ աշխատուժի ծավալով, իսկ գործազրկության մակարդակը ՀՀ-ում տարբեր գնահատականներով 1990-ական թվականներից սկսած 16%-ից պակաս չի եղել: «Կոմպասս» գիտահետազոտական,

<sup>175</sup> Ըստ ՀԲ վիճակագրական տվյալների

<sup>176</sup> Հաշվարկը կատարվել է մեր կողմից: 2016թ. -ի ՀՆԱ-ն բաժանվել է 1990թ. -ին բնակչության թվաքանակին, ընդ որում ՀՆԱ-ն արտահայտված է ընթացիկ գներով և ներառում է արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը

կրթական և խորհրդատվական կենտրոնի կողմից 2017թ.-ի փետրվարին իրականացված հետազոտության համաձայն՝ 2016թ.-ի առաջին երեք եռամսյակներին 2015թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՆԱ 0.41 տոկոսային կետով հավելաճի վրա դրական ազդեցություն են ունեցել «արդյունաբերություն» և «առևտուր և ծառայություններ» ոլորտները, համապատասխանաբար՝ 0.4 և 2.6 տոկոսային կետով, մինչդեռ «գյուղատնտեսության», «շինարարության» և «արտադրանքի հարկերի, ավելացված արժեքի և ՖՄԱԶԾ (ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ)» ազդեցություններն ունեցել են բացասական ազդեցություն, համապատասխանաբար՝ -0.54, -0.85 և -1.2 տոկոսային կետով<sup>177</sup>: Միևնույն ժամանակ, համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների, 2016թ.-ին ՀՆԱ-ի մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեցել է «առևտուր և ծառայություններ» ոլորտը՝ 49%, այնուհետև գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, համապատասխանաբար՝ 16% և 17%, իսկ շինարարության մասնաբաժինն ունի դինամիկ կրճատման միտում՝ 2016թ.-ին կազմելով 8%<sup>178</sup>: Նշենք նաև, որ 2016թ.-ին «տեղեկատվության, կապի» և «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության» ծառայությունների մասնաբաժինը մատուցված համախառն ծառայությունների մեջ կազմել է, համապատասխանաբար՝ 17.6% և 5.3%, որոնք այս կամ այն չափով առնչվում են տխնոլոգիական բաղադրիչի հետ<sup>179</sup>: Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա պետք է նշել, որ այս ոլորտում տեխնոլոգիական բաղադրիչի մասնակցությամբ արտադրանքի թողարկումն ընդհանուր արդյունաբերության մեջ կազմում է մոտ 2.4%, ինչը, կարծում ենք, բավականին ցածր ցուցանիշ է:

ՀՀ տնտեսական աճի որակական կողմերը և փոփոխությունների դինամիկան բացահայտելու համար ուսումնասիրվել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ միջին ցուցանիշի, մարդկային զարգացման միջին համաթվի և Ջինի գործակցի փոփոխությունները՝ ըստ առանձնացված փուլերի: Համապատասխան ցուցանիշների մասով հաշվարկվել են նաև ճկունության գործակիցներ (տե՛ս աղյուսակ 9): Հաշվարկները կատարված են Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից հրապարակվող

<sup>177</sup> Կոմպասս կենտրոն «Տնտեսական վիճակը Հայաստանում: Հնարավորություններն ու մարտահրավերները 2017թ. », Հայաստան, փետրվար 2017, էջ 5

<sup>178</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ 2017թ. տարեգիրք, Ազգային հաշիվների համակարգ, էջ 255

<sup>179</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում. <http://armstat.am/am/?nid=586>

մարդկային զարգացման համաթվի վերաբերյալ հաշվետվության հիման վրա<sup>180</sup>: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ մարդկային զարգացման համաթվի ճկունության գործակիցը հաշվարկված է հետևյալ բանաձևով.

$$\text{Միջին գործակից (ՄՋՀ)} = \left\{ \sum_{n=1}^N \left( \frac{(U\mathcal{R}\mathcal{Z}_{n+1} - U\mathcal{R}\mathcal{Z}_n)}{\frac{(U\mathcal{R}\mathcal{Z}_{n+1} + U\mathcal{R}\mathcal{Z}_n)}{2}} \right) / \left( \frac{(Z\mathcal{L}U_{n+1} - Z\mathcal{L}U_n)}{\frac{(Z\mathcal{L}U_{n+1} + Z\mathcal{L}U_n)}{2}} \right) \right\} / N \quad (3)$$

Որտեղ ՄՋՀ-ն մարդկային զարգացման համաթիվն է:

Եկամուտների համակենտրոնացման նկատմամբ շնչին ընկնող ՀՆԱ ճկունության միջին գործակիցը հաշվարկված է հետևյալ բանաձևով.

$$\text{Միջին գործակից (ՀՆԱ)} = \left\{ \sum_{n=1}^N \left( \frac{(Z\mathcal{L}U_{n+1} - Z\mathcal{L}U_n)}{\frac{(Z\mathcal{L}U_{n+1} + Z\mathcal{L}U_n)}{2}} \right) / \left( \frac{(R\mathcal{G}_{n+1} - R\mathcal{G}_n)}{\frac{(R\mathcal{G}_{n+1} + R\mathcal{G}_n)}{2}} \right) \right\} / N \quad (4)$$

որտեղ ՋԳ-ն Ջինի գործակիցն է:

Աղյուսակ 9.

**ՀՀ տնտեսական աճի որակական փոփոխություններն ըստ փուլերի.**

<b>Ցուցանիշ</b>	<b>Արժեք</b>	<b>1990-1995</b>	<b>1996-2000</b>	<b>2001-2009</b>	<b>2010-2016</b>
Մեկ շնչին ընկնող միջին ՀՆԱ	ԱՄՆ դոլար	469	571	1,949	3,641
	Տարեկան աճի/անկման տեմպ(ժամանակահատվածի մեծեն)	-6%	6%	20%	3%
Մարդկային զարգացման միջին համաթիվ	Ժամանակահատվածի միջին համաթիվ	0.61	0.63	0.69	0.74
	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ նկատմամբ ճկունության միջին գործակից	0.094	0.279	0.063	0.089
Ջինի գործակից	Ժամանակահատվածի միջին գործակից	-	40.2	33.71	30.91
	Եկամուտների համակենտրոնացման նկատմամբ շնչին ընկնող ՀՆԱ ճկունության միջին գործակից	-	0.025	4.823	6.006

Աղյուսակից կարելի է նկատել, որ տնտեսական աճի բոլոր փուլերում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մեկ տոկոսային կետով փոփոխության նկատմամբ մարդկային զարգացման համաթիվն ունի ճկունության ցածր աստիճան, քանի որ ճկունության միջին

<sup>180</sup> Մարդկային արգացման համաթիվը հաշվարկված է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, իսկ Ջինի գործակիցը համաշխարհային բանկի կողմից: Վիճակագրական տվյալները և գործակիցների հաշվարկման մեթոդաբանությունը կարելի է տեսնել հետևյալ պաշտոնական կայքերում. <http://data.worldbank.org/indicator/SI.POV.GINI?view=chart> , <http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi>

գործակիցները բոլոր չորս փուլերում էլ մեկից փոքր են եղել: Հատկապես հետաքրքրական է երկնիշ տնտեսական աճի փուլը, որի դեպքում տնտեսական աճի տարեկան միջին տեմպն ամենաբարձրն է (20%), իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ մարդկային զարգացման համաթվի ճկունության միջին գործակիցը՝ ամենացածրը (0.063): Ինչ վերաբերում է եկամուտների համակենտրոնացման նկատմամբ մեկ շնչին ընկնող ՀՆԱ ճկունությանը, ապա պետք է նշել, որ տնտեսական աճի երրորդ և չորրորդ փուլերում այն ունի բարձր ճկունություն և կազմել է, համապատասխանաբար՝ 4.823 և 6.006: Այսինքն՝ մեկ տոկոսային կետով Ջինի գործակցի նվազումը կամ նույնն է թե եկամուտների համակենտրոնացվածության փոքրացումը երկնիշ տնտեսական աճի փուլում հանգեցրել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի՝ միջինում 4.823, իսկ հետճգնաժամային փուլում՝ 6.006 տոկոսային կետով ավելացման: Հիմնվելով վերոնշյալ վերլուծության արդյունքների վրա՝ պետք է արձանագրել, որ ՀՀ տնտեսական աճը գրեթե բոլոր փուլերում առանձնապես աչքի չի ընկել բարձր որակական հատկանիշներով: Չնայած վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ-ում եկամուտների համակենտրոնացվածությունն աստիճանաբար նվազել է, այնուամենայնիվ, կարծում ենք, այն շարունակում է էական մնալ: Եկամուտների համակենտրոնացման խնդրից այս կամ այն չափով ածանցված աղքատությունը նույնպես ունի կրճատման միտում, սակայն դեռևս շարունակում է զգալի լինել: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2004թ.-ից սկսած աղքատության մակարդակը երկրում դինամիկ կրճատվել է՝ 54%-ից 2016թ.-ին հասնելով 31%-ի<sup>181</sup>:

ՀՀ տնտեսական աճի փուլային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1995թ.-ից սկսած մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, որպես կանոն, դինամիկ աճել է, ինչը կայուն զարգացման տպավորություն է ստեղծում: Սակայն երկարաժամկետ, որակյալ և կայուն աճի տեսանկյունից կարևոր է ոչ այնքան ՀՆԱ քանակական աճը, որքան այն, թե ինչ գործոններով է պայմանավորված այդ աճը, արդյոք այդ գործոններն ունեն երկարաժամկետ կայուն հեռանկարներ, թե ոչ և, ընդհանրապես, ինչպես է այդ աճն անդրադարձել բնակչության կենսամակարդակի ու կյանքի որակի վրա: Եթե փորձենք ըստ վերոնշյալ հարցադրումների ամփոփել ՀՆԱ աճի փուլային առանձնահատկություն-

<sup>181</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում. <http://armstat.am/file/doc/99506313.pdf>



ները, ապա առաջին երկու փուլերի ընթացքում նախ տնտեսական անկումը, ապա վերականգնողական աճը կարելի է պայմանավորել պլանային տնտեսական համակարգից ազատ շուկայական տնտեսավարմանն անցնելու ինստիտուցիոնալ փոխակերպումներով (տրանսֆորմացիա), այնուհետև ինստիտուցիոնալ հարմարվողականությամբ, որոնք, ըստ էության, արտաքին ազդակների ազդեցության արդյունք են: 2014թ.-ի ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի կողմից հրատարակված «Նորարարական ներկայացվածություն» հաշվետվության համաձայն՝ 1990-ական թվականներից մինչև 2000թ.-ի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում ՀՀ տնտեսության մեջ գերակշռել են, այսպես կոչված, «գոյատևման» ռազմավարությունները՝ նկատի ունենալով ավանդական տնտեսական կապերի վերացումը<sup>182</sup>: Երրորդ փուլում տնտեսական բուռն աճը, ինչպես արդեն փաստվեց, պայմանավորված էր շինարարության, արտ-երկրից ստացվող դրամական փոխանցումների և ծառայությունների գործոններով, որոնցից առաջին երկուսը երկարաժամկետ հեռանկար չունեցող, բնույթով անկայուն գործոններ են և չեն բխում տնտեսության մրցունակության բարձրացման հեռա-նկարից: Ինչ վերաբերում է վերջին՝ չորրորդ փուլին, ապա պետք է նշել, որ նախ տնտեսական աճն աչքի է ընկել չափավոր տեմպերով, և հետո այն ապահովվել է «արդյունաբերության» և «առևտրի ու ծառայությունների» ոլորտներում, որոնցից, սա-կայն, և ոչ մեկում տեխնոլոգիական բաղադրիչը էական չափով մասնակցություն չի ունեցել: Այսպիսով, պետք է նշել, որ ՀՀ-ում նորարարությունների խթանումն ու տեխ-նոլոգիական բաղադրիչով պայմանավորված մրցունակ արտադրանքի թողարկումն այլընտրանք չունի, քանի որ դրանք նախ ավելացված մեծ արժեք և համաշխարհային եկամուտների մեջ առավել մեծ մասնաբաժին ունենալու հնարավորություն են ընձեռում, ապա մրցունակ տնտեսության ձևավորման և երկարաժամկետ որակյալ աճի ապահովման գործում ունեն մեծ դերակատարություն: ՀՀ մրցունակությունը և նորա-րարական պոտենցիալը գնահատելու համար ուսումնասիրենք թվով 152 երկրի համար համաշխարհային


---

<sup>182</sup> “Innovation Performance Review of Armenia”, United Nations Economic Commission for Europe, New York and Geneva, 2014, page 10

տնտեսական ֆորումի կողմից հաշվարկված գլոբալ մրցունակության համաթվի բացվածքը (տե՛ս գծապատկեր 10)<sup>183</sup>

Գծապատկեր 10.

**ՀՀ մրցունակությունն ըստ 12 հենասյունների 2016-2017թթ.**



Գծապատկեր 10-ից երևում է, որ առավելագույն և նվազագույն ցուցանիշների համեմատությամբ ՀՀ մրցունակությունը բնութագրող ենթահամաթվերն ընդհանուր առմամբ զբաղեցնում են միջանկյալ դիրքեր: Միջինից բարձր ցուցանիշներ են գրանցվել «առողջապահություն և հիմնական կրթություն», «բարձրագույն կրթություն և վերապատրաստում», «ապրանքային շուկայի արդյունավետություն» և «աշխատանքի շուկայի արդյունավետություն» հենասյունների մասով, մինչդեռ մյուս հենասյուններով ՀՀ ցուցանիշները միջինից ցածր են: Հատկապես միջինից հարաբերականորեն ցածր ցուցանիշներով աչքի են ընկնում «ներքին շուկայի ծավալ», «ինովացիաներ», «ենթակառուցվածքներ» և «գործարարության բարդություն» հենասյունները, որոնց շեղումը միջինից կազմում է համապատասխանաբար՝ 1.49, 0.78, 0.44 և 0.43: Ինչպես արդեն 2.1 ենթազխում կատարված միջազգային փորձի ուսումնասիրությունից գիտենք, զարգացող երկրներում նմանակման և նորարարական քաղաքականությունների ընտրության հարցում, մի շարք հանգամանքներով պայմանավորված, գերադասվում է նմանակման քաղաքականությունը՝ իհարկե, երկարաժամկետ հեռանկարում այն ինովացիոն քաղաքականության փոխարկելու ձգտում ունենալով: Նմանակման քաղաքականություն իրականացնելու համար կարևոր է երկրի տեխնոլոգիաների կլանման և տարածման ներուժը, որի մասին պատկերացում է տալիս 9-րդ՝ «տեխնոլոգիական

<sup>183</sup> Գծապատկերը կառուցված է համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող հաշվետվության հիման վրա: Աճման կարգով խմբավորվել են աշխարհի թվով 152 երկրների համար առավելագույն և նվազագույն ենթահամաթվերը և հաշվարկվել է դրանց թվաբանական միջինը, որի հետ էլ համեմատվել են ՀՀ ցուցանիշները:

պատրաստվածություն» հենասյունը: Այդ ցուցանիշը ՀՀ-ում միջինից ցածր է 0.16-ով և կազմում է 4.01<sup>184</sup>:

Երկրի նորարարական ներուժը պայմանավորում են ինչպես որակյալ մարդկային կապիտալի առկայությունն ու դրա վերարտադրությունը, այնպես էլ գիտահետազոտական և նախագծային-փորձարարական աշխատանքների իրականացման նպատակով կատարվող ներդրումները, անհրաժեշտ ենթակառուցվածքների և ինստիտուտների ստեղծումը: Այս առումով Կ. Գրիգորյանը նշում է, որ «օտարերկրյա ուղղակի ներդրումները հանդիսանում են կապիտալի ներգրավման կարևորագույն աղբյուր, ստեղծում են հնարավորություններ արտասահմանյան վերջին տեխնոլոգիաներին ծանոթանալու, բարձրակարգ ղեկավարներ և մասնագետներ ներգրավելու, արտահանման ծավալները մեծացնելու համար, կառավարության սոցիալ-տնտեսական ծրագրերի իրացման համար»<sup>185</sup>:

Ակնհայտ է, որ գիտելիքահենք տնտեսություն կառուցելն անհնար է առանց համապատասխան գիտահետազոտական բազայի առկայության: Գ. Վարդանյանի համոզմամբ, չնայած 1995թ.-ի համեմատ ՀՀ-ն գրանցել է որոշակի հաջողություններ գիտելիքահենք տնտեսության համաթվի (ԳՏՀ), կրթության և նորաստեղծության համաթվերի մասով, այնուամենայնիվ գիտելիքահենք տնտեսության տեսանկյունից ավելի շատ մտահոգիչ տարրեր կան, քան հուսադրող<sup>186</sup>: Այսպես օրինակ, համաձայն ՀՀ ԱՎԾ 2017թ. տարեգրքում արտացոլված տվյալների՝ 2016թ.-ին հետազոտություններ և մշակումներ կատարող թվով 69 կազմակերպություններում աշխատողների թվաքանակը 2012թ.-ին 5.598 մարդուց դինամիկ կրճատվել է՝ 2015թ.-ին կազմելով ընդամենը 4.881 մարդ: Չնայած 2012թ.-ին հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը 9.713.2 մլն դրամից աճել են՝ 2016թ.-ին հասնելով 11.074.4 մլն դրամի, այնուամենայնիվ դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ շարունակում է աննշան մնալ և կազմում է ընդամենը 0.21%, որից 78%-ը բաժին է ընկնում բյուջետային

<sup>184</sup> GlobalCompetitivenessIndex

<sup>185</sup> Григорян К.Г., ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ МЕЖДУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ, Сборник статей международной научно-практической конференции, Краснодар 2015, стр. 99

<sup>186</sup> Վարդանյան Գ. , «Գիտելիքահենք տնտեսություն: Հնարավորություններ և մարտահրավերներ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2008, էջ 182

ռեսուրսներին<sup>187</sup>: Համեմատության համար նշենք, որ զարգացած երկրներում այս ցուցանիշը հիմնականում գերազանցում է 2.5%-ը, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից ամենաբարձրը կազմել է Ռուսաստանում՝ 1.13%<sup>188</sup>: Հատկանշական է, որ «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության» և «կրթության» ոլորտներում միջին անվանական աշխատավարձերը 2016թ.-ին կազմել են համապատասխանաբար 201,544 դրամ և 184,411 դրամ, ինչը բավականին ցածր ցուցանիշ է: Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների մասնաբաժինը կազմում է մոտ 29%, որից 59%-ը գործազուրկ է, ինչը խոսում է որակյալ մասնագիտական ռեսուրսների առկայության մասին, որի մի զգալի մասը չի օգտագործվում: 2015թ.-ին ասպիրանտուրայում սովորողների թվաքանակը կազմել է 1,202, որի մեջ 38%-ը բաժին է ընկել բնագիտական և տեխնիկական, իսկ 62%-ը հասարակագիտական մասնագիտություններին: Եթե հաշվի առնենք տեխնոլոգիական փոփոխությունների գործում բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների անմիջական ազդեցությունը, ապա կարելի է մատնանշել մասնագիտությունների կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը՝ հօգուտ բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների՝ իհարկե, չանտեսելով նաև հասարակական գիտությունների դերակատարությունը, հատկապես՝ գիտական գիտելիքների առևտրայնացման համար ինստիտուցիոնալ արդյունավետ հարթակի մշակման և ներդրման կանոնադրույն խնդրի լուծման նպատակով: Դատելով վիճակագրությունից՝ պետք է արձանագրել նաև, որ ՀՀ-ում նորարարությունները խթանելու համար կատարվող ներդրումները ոչ միայն բավարար չեն, այլև դրանց «առյուծի բաժինն» ընկնում է պետական ֆինանսավորման աղբյուրներին: Իրականում, հետազոտությունների և մշակումների ֆինանսավորումը, պայմանավորված մեծ անորոշություններով և կատարված ներդրումների հետզնման բարձր ռիսկի առկայությամբ, ներդրողների համար այնքան էլ գրավիչ չէ: Այս առումով տեղին է մեջբերել Հ. Ս. Ավետիսյանի տեսակետը, համաձայն որի՝ «Ինովացիաների ռիսկայնության բարձր աստիճանը այս ոլորտի ֆինանսավորման գործընթացներում առաջացնում է ներդրումային բարձր զգոնություն, որի հետևանքով, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի վկայությամբ»

<sup>187</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ 2016թ. -ի տարեգիրք. <http://armstat.am/am/?nid=586&year=2016>

<sup>188</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում. <https://data.worldbank.org/indicator>

յամբ, ինովացիաների ֆինանսավորման համար ստեղծվել են հատուկ ֆինանսական գործիքներ և ինստիտուտներ»<sup>189</sup>: Մյուս կողմից, սակայն, մտահոգիչ է գործարար միջավայրի պասիվությունն այդ հարցում, որն ըստ էության հանդիսանում է մրցունակ տնտեսության շարժիչ ուժը: Իհարկե, նման պասիվ վարքագծի համար բարձր ռիսկերի առկայությունը չպետք է դարձնել, այսպես կոչված, «քավության նոխազ»: Դրանում «մեղքի իր բաժինը» կարող է ունենալ նաև թե՛ պետական պատասխանատու կառույցների, և թե՛ մասնավոր հատվածի շահառուների կողմից մշակվող նորարարական ծրագրերի ու ռազմավարությունների ոչ հստակ և ներդրողների համար պակաս համոզիչ լինելու հանգամանքը: Լ. Սարգսյանի «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմները» վերնագրով հոդվածում նույնիսկ առաջարկվում է «նորաստեղծական կենտրոնների գործունեության արդյունավետությունը գնահատելու համար հիմնվել դրանց սեփական դրամական միջոցներ հայթայթելու ունակության վրա»<sup>190</sup>: «Հայաստանի հանրապետության տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում» թեմայով ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական հետազոտությունը փաստում է, որ «ՀՀ ազգային նորաստեղծական համակարգի՝ տեխնոլոգիաների ստեղծման և փոխանցման գոյություն ունեցող հիմնական սուբյեկտները գործում են միմյանցից մեկուսացված (կրթություն, հետազոտություններ և մշակումներ իրականացնող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական հաստատություններ, մասնավոր հատված), իսկ մի շարք առանցքային ինստիտուտներ կամ չկան (տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ), կամ սաղմնային վիճակում են (տեխնոպարկեր, գերազանցության կենտրոններ, վենչուրային հիմնադրամներ): Կամ էլ դրանք կան, սակայն դրանց տնօրինած ֆինանսական ռեսուրսները և, համապատասխանաբար, գործունեության մասշտաբն ու ապահոված արդյունքն առայժմ էական տեղաշարժ չեն առաջացնում համապատասխան ոլորտներում»<sup>191</sup>: Իսկ

<sup>189</sup> Ավետիսյան Հ. «Ինովացիոն ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ և կառուցակարգեր», Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1 ., Երևան 2009, էջ 135

<sup>190</sup> Սարգսյան Լ. «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմները», Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան 2016, էջ 88

<sup>191</sup> ՀՊՏՀ 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն «Հայաստանի Հանրապետության տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում», էջ 17

Ջոնսոն Բորնել համալսարանի, համաշխարհային բիզնես դպրոցի և մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից 2015թ.-ին հրատարակված համաշխարհային նորարարական համաթվի մասին զեկույցում նշվում է, որ «համալսարանների և արդյունաբերության միջև թույլ կապը խոչընդոտում է ՀՀ նորարարական ներկայացվածությանը»<sup>192</sup>: Նույն զեկույցի 2017թ.-ին նորացված տարբերակում համաշխարհային նորարարական համաթիվը ՀՀ-ում [0-100] միջակայքում կազմել է 35.65 և թվով 127 երկրների շարքում զբաղեցրել է 59-րդ հորիզոնականը<sup>193</sup>, այն դեպքում, երբ 2015թ.-ին կազմել է 37.31 և զբաղեցրել 61-րդ հորիզոնականը: Ինստիտուցիոնալ փոփոխությունների առումով հետաքրքրական է նաև գերմանական «Բի-Թի-Այ» կազմակերպության կողմից հաշվարկված կարգավիճակի համաթիվը, որն իր հերթին հանդիսանում է քաղաքական և տնտեսական փոխակերպման համաթվերի միջին թվաբանականը: Դրանք պատկերացում են տալիս զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում քաղաքական և տնտեսական փոփոխությունների մասին: Համաձայն 2016թ.-ի հաշվետվության՝ քաղաքական և տնտեսական փոխակերպումների համաթվերը [0-10] միջակայքում կազմել են 5.23 և 5.89, որոնցով 129 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցրել է համապատասխանաբար՝ 74-րդ և 56-րդ հորիզոնականները<sup>194</sup>: ՀՀ-ում տեխնոլոգիական փոփոխությունները գնահատելու համար կատարվել է SWOT վերլուծություն՝ մի շարք հեղինակների և կազմակերպությունների կողմից արդեն իսկ կատարված SWOT վերլուծությունների և սույն աշխատանքի շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքների համախմբման և փոխլրացման միջոցով<sup>195</sup>:

---

<sup>192</sup> Dutta S., Lanvin B., Wunsch-Vincent S., “The Global Innovation Index 2015”, Geneva, Switzerland 2015, page 73.

<sup>193</sup> Dutta S., Lanvin B., Wunsch-Vincent S., “ The Global Innovation Index 2017”, Geneva, Switzerland and New Delhi 2017, page 20.

<sup>194</sup> “Armenia Country Report”, BTI 2016, page 1

<sup>195</sup> Arzumanyan T., Abovyan M., “Country Report Armenia” supported by the European Commission under the grant agreement N609532, Yerevan 2014,, page 27., Արևելյան գործընկերության երկրներ 2016թ. հաշվետվություն «Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում», էջ 4: Մարգարյան Ա. «Հայաստանի Հանրապետության տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում», ՀՊՏՀ 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2014, էջ 19:

**ՀՀ-ում տեխնոլոգիական փոփոխությունների SWOT վերլուծություն**

<p><b>Ուժեղ կողմեր.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Խորհրդային տարիներից ժառանգված գիտահետազոտական ինստիտուտների և ենթակառուցվածքների առկայություն</li> <li>- Ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական փոփոխությունների դրական դինամիկա (շնչին ընկնող ՀՆԱ-ի աճ, գործարար միջավայրի բարելավում, տեխնոլոգիաների խթանման համար պետական գերատեսչությունների կողմից ռազմավարությունների մշակում և այլն)</li> <li>- Երկրում առկա բարձր ձեռնարկչատիրական ակտիվություն, բարձրագույն կրթություն ունեցող որակյալ աշխատուժի առկայություն</li> </ul>	<p><b>Թույլ կողմեր.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Հետազոտությունների և մշակումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սղություն: Մասնավոր հատվածի կողմից նորարարություններին ուղղված ներդրումների պասիվություն</li> <li>- Արտահանման մեջ և, ընդհանրապես, տնտեսական աճի ապահովման գործում տեխնոլոգիական բաղադրիչի գրեթե աննշան մասնակցություն</li> <li>- Գիտություն – արդյունաբերություն կապի, ինչպես նաև հիմնարար հետազոտությունների նյութականացման և առևտրայնացման անբավարար մակարդակ</li> <li>- Գիտահետազոտական գործունեության համար առկա նյութատեխնիկական ռեսուրսների բարոյական և ֆիզիկական մաշվածություն</li> </ul>
<p><b>Հնարավորություններ.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Արտասահմանում ՀՀ-ն ներկայացնելու, ինչպես նաև նոր գիտելիքների, փորձի և ֆինանսական միջոցներ ստանալու համար մեծ սփյուռքի առկայություն</li> <li>- ՀՆԱ կառուցվածքում ծառայությունների մեծ մասնաբաժին, տեղեկատվության և կապի դինամիկ զարգացող շուկայի առկայություն (2015թ.-ին մատուցված համախառն ծառայությունների 19%-ը բաժին է ընկել SS ոլորտին)</li> <li>- ԵՄ և ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ համագործակցության ընդլայնում</li> </ul>	<p><b>Սպառնալիքներ.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Գործազրկության բարձր մակարդակ՝ հատկապես բարձր որակավորում ունեցող կադրերի շրջանակներում: Արտագաղթի չդադարող տեմպեր</li> <li>- Ձեռնարկությունների կողմից տեխնոլոգիաների կլանման ոչ բավարարմակարգակ (Գլոբալ մրցունակության համաթվի մաս կազմող տեխնոլոգիաների կլանման համաթիվը 2015-2016թթ. ՀՀ-ն զբաղեցրել է աշխարհում 113-րդ տեղը)</li> <li>- Փոքր ներքին շուկայի առկայություն, արտաքին աշխարհաքաղաքական անբարենպաստ պայմաններից ածանցվող բացասական ազդակներ</li> </ul>

### **ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԻՆՈՎԱՑԻՈՆ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

#### **3.1. ՀՀ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցության գնահատումը**

Տնտեսական աճի փուլային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսական աճերը հիմնականում ունեցել են կա՛մ վերականգնողական բնույթ, կա՛մ գրանցվել են երկարաժամկետ հեռանկար չունեցող, անկայուն և ոչ մրցունակ այնպիսի ճյուղերի հաշվին, ինչպիսիք են, օրինակ, շինարարությունը և արտերկրից ստացված տրանսֆերտները: Բնականաբար, երկարաժամկետ կայուն աճի ռազմավարությունը չի կարելի կառուցել նման անկայուն և ոչ մրցունակ գործոնների վրա: Երկարաժամկետում կայուն և որակյալ տնտեսական աճ ապահովելու գործում հաջողաճ երկրների փորձը ցույց է տալիս, որ նորարարություններն ու տեխնոլոգիական փոփոխություններն են այն հիմնական գործոնները, որոնց վրա կարելի է կառուցել մրցունակ տնտեսական համակարգ: ՀՀ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցությունը գնահատելու համար սույն աշխատանքի շրջանակներում որպես տեխնոլոգիական գործոնը բնութագրող ցուցանիշ է ընտրվել համաշխարհային նորաստեղծական համաթվով (Global Innovation Index) առանձին երկրների (մեր դեպքում ՀՀ-ի) զբաղեցրած հորիզոնականը: Համաթվի փոխարեն երկրի զբաղեցրած դիրքի՝ որպես անկախ փոփոխականի ընտրությունը պայմանավորված է բոլոր «խաղացող» երկրների դիրքերի միաժամանակյա փոփոխության դինամիկան հաշվի առնելու անհրաժեշտությամբ: Ի հարկե, բացի համաշխարհային նորարարական համաթվից, կան նորարարությունների գնահատման այլ համաթվեր նույնպես, որոնք ունեն հաշվարկման իրենց մեթոդաբանությունը, ինչպիսիք են, օրինակ՝ «ուղեղների» ներգրավման մրցունակության համաթիվը, համաշխարհային մրցունակության համաթիվը (որոշակիորեն անդրադարձել ենք երկրորդ գլխում), որոնց հիմնական ընդհանրությունը կլաստերային ցուցանիշներ լինելու հանգամանք է: Ինչ վերաբերում է համաշխարհային նորաստեղծական համաթվի ընտրությանը, ապա վերջինս հիմնավորվում է ստորև ներկայացված 3 հիմնական նպատակադրումով.



- ✓ Հնարավորինս երկար և համադրելի պանելային շարքերի ապահովում՝ ինչպես երկրների ցանկի, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակահատվածի կտրվածքով – ժամանակահատվածի առումով թե՛ համաշխարհային նորարարական համաթվի և թե՛ «ուղեղների» ներգրավման մրցունակության համաթվի շարքերը հասանելի են 2013թ.-ից սկսած, սակայն առաջինի (2013թ. -ին՝ 142, 2017թ. -ին՝ 127 երկիր) դեպքում համադրելի երկրների ցանկն ավելի մեծ է՝ երկրորդի (2013թ. -ին 103, 2017թ. -ին՝ 118 երկիր) համեմատությամբ
- ✓ Մեթոդաբանության կայունություն և նվազագույն ռիսկերի առկայություն – մասնավորապես «ուղեղների» ներգրավման մրցունակության համաթվի մեթոդաբանական հիմնական ռիսկերն են ժամանակագրական շարքերից բացակայող տվյալների կանխատեսման, դրանց կարգավորման, ագրեգավորման բանաձևի անորոշության, կլաստերներին տրված կշիռների հետ կապված ռիսկերը<sup>196</sup>: Պետք է նկատի ունենալ նաև, որ մինչև 2013թ.-ը և 2013թ.-ից հետո Համաշխարհային նորարարական համաթվի արժեքների միջակայքը փոփոխվել է. նախկինում այն տատանվում էր [1,7] միջակայքում, 2013թ.-ից սկսած՝ [1,100], իսկ Համաշխարհային մրցունակության համաթիվը տատանվում է [1,7] միջակայքում:
- ✓ Տնտեսական աճի վրա նորարարությունների հնարավորինս ուղղակի ազդեցության ուսումնասիրություն, նորարարությունների վրա անուղղակի և երկրորդային ազդեցությունների հնարավորինս բացառում: Ի տարբերություն համաշխարհային նորարարական համաթվի՝ համաշխարհային մրցունակության համաթիվն իր մեջ ընդգրկում է նաև այնպիսի կլաստերային ցուցանիշներ, որոնք առնչվում են ներքին շուկայի ծավալներին, հիմնական կրթությանը, ապրանքային շուկաներին և այլն, որոնք չնայած ազդում են նորարարությունների վրա, սակայն այդ ազդեցությունները, կարծում ենք, ունեն միջնորդավորված բնույթ: Բացի այդ, նորարարություններին և տեխնոլոգիաներին առնչվող ցուցանիշները կազմում են համաշխարհային մրցունակության համաթվի ընդամենը մի մասը:


<sup>196</sup> Lanvin B., Evans P., “The Global Talent Competitiveness Index 2013” Novus media Solutions Ltd Singapore 2013, page 90.

Ինչպես արդեն նշեցինք, համաշխարհային նորարարական համաթիվը կլաստերային ցուցանիշ է և իր մեջ ընդգրկում է նորարարությունների խթանման (Innovation Input Sub-Index) և նորարարական արդյունքի (Innovation Output Sub-Index) ենթացուցանիշները, որոնք էլ իրենց հերթին հաշվարկվում են մի շարք ենթացուցանիշների հիման վրա<sup>197</sup>: Ընդ որում, համաթվի հաշվարկին մասնակցում են ոչ միայն բուն տեխնոլոգիաները, այլև ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ցուցանիշներ:

Ընդհանրապես, ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծություններից և դատողություններից կարելի էր ենթադրել, որ տնտեսական աճի և համաշխարհային նորաստեղծական համաթվի միջև պետք է գոյություն ունենար որոշակի փոխկապվածություն, ընդ որում՝ դրական ուղղությամբ: Եվ իսկապես, եթե համաշխարհային նորաստեղծական համաթվի և ՀՆԱ աճի փոխկապվածությունը ներկայացնելու համար Դեկարտյան կոորդինատային հարթությունը բաժանենք 4 քառորդակի (ինչպես ցույց է տրված գծապատկեր 11-ում), որտեղ արեւմտյան առանցքի վրա ներկայացված է համաշխարհային նորաստեղծական համաթվով 120 համադրելի երկրների ցանկում այդ երկրների զբաղեցրած հորիզոնականի փոփոխությունը՝ նախորդ տարվա համեմատությամբ, իսկ օրդինատների առանցքի վրա՝ ՀՆԱ աճը, ապա վերնոշյալ ենթադրությունը կհիմնավորվի:

Գծապատկեր 11.

**Համաշխարհային նորաստեղծական համաթվով երկրի զբաղեցրած հորիզոնականի և ՀՆԱ աճի փոխկապվածությունը**



Գծապատկեր 11-ից ակնհայտ է դառնում, որ երկրի զբաղեցրած հորիզոնականով առաջադիմության և ՀՆԱ աճի միջև գոյություն ունի վերընթաց միտում

<sup>197</sup> Տե՛ս նույն տեղում

(գծապատկերում այդ միտումը (տրենդը) կարմիր գույնով ներկված ուղիղն է): Որքան երկիրն առաջադիմում է համաշխարհային նորաստեղծական համաթվով, այնքան աճում է նաև ՀՆԱ-ն և հակառակը: Հասկանալի է, որ վերոնշյալ միտումը կարող է որոշ երկրների մասով միանշանակ չլինել, ինչը հատկապես բնութագրական է զարգացման ցածր մակարդակ ունցող երկրներին, ի դեմս աֆրիկյան երկրների, որտեղ հիմնականում գերիշխող են աշխատուժի վրա խարսխված տնտեսության հանքահումքային և գյուղատնտեսական ճյուղերը, որոնք դեռևս հեռու են տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված կայուն տնտեսական աճի ուղուց: Ընդհանուր օրինաչափությունից շեղման օրինակներ են հանդիսանում Սենեգալը, Մոնտենեգրոն և այլն, որոնք համաշխարհային զարգացման համաթվով նախորդ տարվա համեմատությամբ իջել են համապատասխանաբար -22 և -10 հորիզոնականով, սակայն գրանցել են 6.65% և 2.50% տնտեսական աճ: Իսկ ահա ԱՄՆ-ի, Չինաստանի և մի շարք այլ զարգացած ու զարգացող երկրների դեպքում պահպանվել է ընդհանուր օրինաչափությունը՝ ԱՄՆ-ը 1 հորիզոնականով բարելավել է իր դիրքը և գրանցել 1.62% աճ, իսկ Չինաստանն իր դիրքերը բարելավել է 4 հորիզոնականով և գրանցել 6.70% աճ: Ընդհանուր օրինաչափությունից չեն շեղվել նաև Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, որոնց դեպքում հորիզոնականի փոփոխությամբ և տնտեսական աճով պայմանավորված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 1 և 0.20%, 9 և 2.74%, 2 և 1.19%<sup>198</sup>:


Ինչպես արդեն նախորդ գլխում քննարկվել է, չնայած նորարարությունների խթանման և տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված մրցունակ տնտեսություն ձևավորելու համար ՀՀ-ում դեռևս 2000-ական թվականներից մեկնարկել և մինչ օրս էլ շարունակում են իրականացվել որոշակի ինստիտուցիոնալ փոփոխություններ, այնուամենայնիվ դրանք հիմնականում ունեն ֆորմալ բնույթ: Այդ են փաստում համաշխարհային նորարարական համաթվի կլաստերային ենթահամաթվերը, որոնք 2017թ.-ին գրեթե համընկնում են 2013թ.-ի ցուցանիշների հետ՝ փոքր բացառություններով, ինչը վկայում է տեխնոլոգիական փոփոխությունների գրեթե աննշան դինամիկայի մասին (գծապատկեր 12):

<sup>198</sup> Տե՛ս The Global Innovation Index. <https://www.globalinnovationindex.org/about-gii>

**Համաշխարհային նորարարական համաթվի կլաստերային փոփոխությունը ՀՀ-ում**

**Ըստ համաթվի**

**Ըստ զբաղեցրած հորիզոնականի**



Գծապատկեր 12-ից կարելի է նկատել, որ համաշխարհային նորաստեղծական համաթվով 2017թ.-ին 2013թ.-ի համեմատությամբ ՀՀ-ում գրանցվել է առաջընթաց ենթակառուցվածքների մասով, իսկ գիտության և մարդկային կապիտալի մասով ցուցանիշներն անկում են ապրել: Նկատենք, որ գիտության և մարդկային կապիտալի ցուցանիշի անկումը զգալիորեն ազդել է նաև ՀՀ զբաղեցրած հորիզոնականի վրա: Այսպես, եթե 2013թ.-ին ՀՀ-ն վերոնշյալ ցուցանիշով զբաղեցրել է 71-րդ հորիզոնականը, ապա 2017թ.-ին իջել է 103-րդ հորիզոնական, ընդ որում, թվով 120 երկրների շարքում ամենամեծ անկումը գրանցվել է հենց ՀՀ-ում՝ -32 կետով: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում նույնիսկ աֆրիկյան մի շարք երկրներ բարելավել են իրենց դիրքերը համապատասխանաբար 52 կետով (Սենեգալ), 42 կետով (Հարավաֆրիկյան Հանրապետություն), 31 կետով (Նիգերիա) և այլն: Նախկին ԽՍՀՄ երկրներից Տաջիկստանը բարելավել է իր դիրքերը 29 կետով, Ռուսաստանը՝ 10 կետով, Վրաստանը՝ 8 կետով, իսկ հարևան Ադրբեջանի դիրքերը չնայած նույնպես իջել են (-14 կետով), այնուամենայնիվ այդ անկումը ՀՀ համեմատությամբ զգալիորեն «համեստ» է<sup>199</sup>: Ենթակառուցվածքներում փոփոխությունների մասով պետք է արձանագրել, որ ՀՀ-ն, թե՛ ըստ համաթվի և թե՛ ըստ երկրի զբաղեցրած հորիզոնականի, որոշակի առաջընթաց է գրանցել: Չնայած դրան, այնուամենայնիվ կարելի է պնդել, որ ենթակառուցվածքների զարգացման տեմպերը

<sup>199</sup> The Global Innovation Index. <https://www.globalinnovationindex.org/about-gii>

բավարար չեն, քանի որ համաթիվն աճել է երկրի զբաղեցրած հորիզոնականի համեմատությամբ առաջանցիկ տեմպով: Այսինքն, չնայած համաթվի դրական փոփոխությանը, այնուամենայնիվ մրցակից երկրների համեմատ համաթվի աճը բավականին ցածր է եղել: Մյուս համաթվերի մասով, ինչպես կարելի է տեսնել գծապատկերից, 5 տարվա ընթացքում շոշափելի փոփոխություններ չեն արձանագրվել:

«Ն տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցությունը գնահատելու համար սույն աշխատանքում մշակվել է պանելային շարքերի վրա հիմնված մոդել:

**Հեղազոտության նպատակը:** Էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ ուսումնասիրել նորարարական զարգացումը նկարագրող գործոնների ազդեցությունը տնտեսական աճի վրա և դրա հիման վրա կատարել տնտեսական աճի մակարդակի վերաբերյալ սցենարային կանխատեսումներ:

**Հեղազոտությունում ներառված գործոնները.** Կախյալ կամ բացատրվող փոփոխական է դիտարկվել տնտեսական աճը (EG): Վերջինս իրենից ներկայացնում է ՀՆԱ շուկայական գներով աճի տեմպը (%)<sup>200</sup>: Տնտեսական աճի վրա ազդում են մեծ թվով գործոններ, սակայն, ելնելով հետազոտության նպատակից, մեր կողմից առանձնացվել են երկրի նորարարական գործունեությունը բնորոշող հետևյալ գործոնները. knowledge workers (KW), Innovation linkages (IL), Knowledge absorption (KA), Knowledge creation (KC), Knowledge impact (KI), Knowledge diffusion (KD), Intangible assets (IA), Creative goods and services (CGAS), Online creativity (OC)<sup>201</sup>: Գործոնների ընտրության հիմքում դրվել է բացատրող փոփոխականի հետ ունեցած մասնակի կոռելյացիայի 0.6 գործակցից բարձր կապ ունենալու սկզբունքը: Այս գործոնները նկարագրվել են երկրի ունեցած դիրքով (Rank): Մասնավորապես դիտարկվել է տվյալ ցուցանիշի մասով երկրի ունեցած տեղը յուրաքանչյուր տարում: Ենթադրվում է, որ որքան առաջընթաց է արձանագրել երկիրը, այնքան դրականորեն են փոփոխվել տվյալ գործոնի ցուցանիշները: Առանձնացված բացատրող փոփոխականներն իրենց հերթին ներկայացնում են այլ ցուցանիշների խումբ: Այդ ցուցանիշներից ցանկացածի փոփոխության դեպքում կարող է փոխվել գործոնը և հետևաբար, երկրի ունեցած դիրքը՝ կոնկրետ այդ

<sup>200</sup> Համշխարհային բանկի պաշտոնական կայքէջ. <http://www.worldbank.org/>

<sup>201</sup> The Global Innovation Index. <https://www.globalinnovationindex.org/>

գործոնի մասով: Տվյալ գործոնների դիրքային եղանակով ներկայացումը հետաքրքիր է նրանով, որ ոչ միայն հնարավոր է տեսնել գործոնի փոփոխության անմիջական ազդեցությունը, այլ նաև երկրի տվյալ գործոնի մասով ունեցած դիրքի փոփոխությունը երկրի տնտեսական աճի վրա:

**Հետազոտության համար հիմք համարվող տվյալների բազան:** Հետազոտության մեջ ներառված բոլոր հաշվարկները հիմնված են համաշխարհային բանկի և համաշխարհային նորարարական համաթվի տվյալների բազայի վրա: 2013-2016թթ.-ի ընթացքում վերը նշված ցուցանիշներն առանձնացվել են 120 երկրի համար:

**Երկրների ընտրության սկզբունքը:** Համաշխարհային նորարարական համաթվի հրապարակումներում 2013-2016թթ.-ին ներկայացված երկրների թիվը տատանողական է: Մասնավորապես, 2017թ.-ին ներառվել է 127 երկիր, իսկ 2013թ.-ին՝ 140 երկիր: Մեր տվյալների բազայում յուրաքանչյուր տարվա համար ընտրվել են նույն թվով և նույն կազմով 120 երկրներ: Մեր կողմից հեռացվել են այն երկրները, որոնց տվյալների բազան ընդհատ է, այսինքն՝ կարող են լինել գործոններ, որոց մասով տվյալներ ընդհանրապես չկան: Դա հավանաբար պայմանավորված է այդ երկրում տիրող անկայուն վիճակով: Այդ երկրների շարքում են մերձավոր արևելքի երկրներից մի քանիսը, որտեղ պատերազմական վիճակ է, Աֆրիկայի բազմաթիվ երկրներ, Լատինական ամերիկայի պետություններ և այլն:

**Ժամանակահատվածի ընտրությունը:** Վերլուծությունն իրականացվել է 2013-2016թթ. -ի կտրվածքով: Մինչև 2013թ.-ը բացակայում են համաշխարհային նորարարական համաթվի մասով ցուցանիշները, իսկ 2017թ.-ի համար բացակայում են ներկայացված ցուցակի մի շարք երկրների տնտեսական աճի ցուցանիշները: Հետևաբար, կարծում ենք, ընտրվել է թե՛ երկրների կազմի, թե՛ ժամանակահատվածի հնարավորինս օպտիմալ տարբերակը:

**Մոդելների առաջադրումը և գնահատումը:** Վերը նշված գլխավոր հարցադրմանը պատասխանելու համար իրականացվել է պանելային փոփոխականներով մոդելի առաջադրում և գնահատում: Առանձնացվել են ֆիքսված և պատահական էֆեկտներով մոդելները: Ֆիքսված էֆեկտներով մոդելները գնահատվել են պարզագույն փոքրագույն քառակուսիների եղանակով, իսկ պատահական էֆեկտներով մոդելը՝ ընդհան-

րացված փոքրագույն քառակուսիների եղանակով: Գնահատման արդյունքում ստացվել են համապատասխան գնահատված գործակիցներ: Առաջադրված երկու մոդելներից առավել նախընտրելին բացահայտելու համար իրականացվել է Հաուսմանի թեստը, որի արդյունքները փաստել են, որ նպատակահարմար է օգտագործել պատահական էֆեկտներով մոդելը: Վերջինիս որակական հատկությունները ևս թույլ են տալիս իրականացնել հետագա վերլուծություն:

**Վերոնշյալ գործոնների ազդեցությունը տնտեսական աճի վրա:** Նշված գործոններից նշանակալի են միայն երեքը՝ IA, KA և OC, և մոդելի ազատ անդամը: Ըստ ստացված արդյունքների՝ այլ հավասար պայմաններում, եթե երկիրը մեկ կետով առաջադիմել է IA և KA գործոնների մասով, ապա տնտեսական աճը կավելանա 0.01%-ով: Իսկ OC գործոնի մասով առկա է հակառակ ազդեցություն: Եթե երկիրը առաջադիմում է սույն ցուցանիշի մասով 1 կետով, ապա նկատվում է տնտեսական աճի անկում՝ մոտ 0.03%-ով:

**ՀՀ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցության մոդել:**

**Ֆիքսված էֆֆեկտներով մոդել:**

$$EG_{it} = \beta_1 + \alpha_1 \cdot KW_{it} + \alpha_2 \cdot IL_{it} + \alpha_3 \cdot KA_{it} + \alpha_4 \cdot KC_{it} + \alpha_5 \cdot KI_{it} + \alpha_6 \cdot KD_{it} + \alpha_7 \cdot IA_{it} + \alpha_8 \cdot CGAS_{it} + \alpha_9 \cdot OC_{it} + \varepsilon_{it} \quad (5)$$

Որտեղ,  $EG_{it}, KW_{it}, IL_{it}, KA_{it}, KC_{it}, KI_{it}, KD_{it}, IA_{it}, CGAS_{it}, OC_{it} - t$  – որդ տարում  $i$  – որդ երկրի վերը ձևակերպված համապատասխան փոփոխականներն են,

$\beta_1, \alpha_1, \alpha_2, \alpha_3, \alpha_4, \alpha_5, \alpha_6, \alpha_7, \alpha_8, \alpha_9$  – երը՝ մոդելի անհայտ պարամետրերը, իսկ  $\varepsilon_{it}$  – ն մոդելի պատահական սխալն է:

**Պատահական էֆֆեկտներով մոդել:**

$$EG_{it} = \beta_0 + \delta_1 \cdot KW_{it} + \delta_2 \cdot IL_{it} + \delta_3 \cdot KA_{it} + \delta_4 \cdot KC_{it} + \delta_5 \cdot KI_{it} + \delta_6 \cdot KD_{it} + \delta_7 \cdot IA_{it} + \delta_8 \cdot CGAS_{it} + \delta_9 \cdot OC_{it} + \epsilon_{it} \quad (6)$$

Որտեղ,  $\beta_0, \delta_1, \delta_2, \delta_3, \delta_4, \delta_5, \delta_6, \delta_7, \delta_8, \delta_9$  – երը մոդելի անհայտ պարամետրերն են, իսկ  $\epsilon_{it} = \beta_i + \varepsilon_{it}$  – ն մոդելի պատահական սխալն է:

Գնահատելով երկու մոդելները և ստուգելով, թե մոդելներից որ մեկն է նպատակահարմար դիտարկել՝ եկել ենք այն եզրահանգման, որ անհրաժեշտ է հետագա մեկնաբանությունները կատարել պատահական էֆֆեկտներով մոդելով: Գնահատված պատահական էֆֆեկտներով մոդելի տեսքը հետևյալն է.

$$\widehat{EG}_{it} = \frac{2.58}{(0.0000)} - \frac{0.01}{(0.0100)} \cdot KA_{it} - \frac{0.01}{(0.0032)} \cdot IA_{it} + \frac{0.03}{(0.0000)} \cdot OC_{it} \quad (7)$$

Որտեղ,  $\widehat{EG}_{it}$  – ն  $t$  – թղ տարում  $i$  – թղ երկրի տնտեսական աճի ցուցանիշի կանխատեսվող արժեքն է: Մոդելի գործակիցները նշանակալի են, իսկ համապատասխան վիճակագրական չափանիշները գտնվում են ընդունելի սահմաններում: Նկատենք, որ KA և IA ցուցանիշների գործակիցները մոդելում ունեն բացասական նշան, իսկ OC-ն՝ դրական: Մինչդեռ վերոշարադրյալում նշվել է, որ ՀՀ տնտեսական աճի վրա KA և IA ցուցանիշներն ունեն դրական, իսկ OC-ն՝ բացասական ազդեցություն: Մոդելի հիման վրա սցենարային կանխատեսումներ և հետագա տնտեսագիտական մեկնաբանություններ կատարելու հարցում շփոթություն չառաջացնելու համար, նշենք, որ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ թվաբանական առումով մեկ հորիզոնականով երկրի բարձրացումն ըստ էության մեկնաբանվում է որպես երկրի դիրքի թուլացում և հակառակը:

**Սցենարային կանխատեսումներ:**

Հայտնի է, որ երկարաժամկետ կանխատեսումներ կատարելու համար անհրաժեշտ են հնարավորինս երկար ժամանակային շարքեր, սակայն, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այդ շարքերը մեր օրինակում չեն գերազանցում 5 տարին, ինչը խարխլում է հնարավորինս ճշգրիտ էկոնոմետրիկ կանխատեսումներ կատարելու հիմքերը: Ուստի կփորձենք իրականացնել, այսպես կոչված, «պայմանական» կանխատեսում՝ տարբերակելով 3 պայմանական սցենարներ՝

- ✓ Լավատեսական սցենար – ենթադրվում է, որ ՀՀ զբաղեցրած հորիզոնականը մոդելում արտացոլված ցուցանիշների մասով կբարելավվի յուրաքանչյուր տարի մեկ հորիզոնականով
- ✓ Զրոյական կամ չեզոք սցենար - ենթադրվում է, որ զբաղեցրած հորիզոնականի փոփոխություն տեղի չի ունենա վերոնշյալ ցուցանիշներից և ոչ մեկի մասով
- ✓ Վատատեսական սցենար - ենթադրվում է, որ ՀՀ զբաղեցրած հորիզոնականը մոդելում արտացոլված ցուցանիշների մասով կվատթարանա յուրաքանչյուր տարի մեկ հորիզոնականով


ՀՀ տնտեսական աճի կանխատեսումը կատարված է 20 տարվա համար: Հաշվի առնելով 2017թ.-ի ՀՀ տնտեսական աճի փաստացի ցուցանիշի դեռևս անհասանելի



լինելու հանգամանքը՝ կանխատեսում կատարվել է նաև 2017թ.-ի համար: Ըստ համաշխարհային նորարարական համաթվի՝ 2017թ. -ին ՀՀ-ն IA, KA և OC ցուցանիշների մասով փաստացի գրավել է համապատասխանաբար 41, 90 և 48 հորիզոնականները, որոնք, մոդելում տեղադրելով, կստանանք 2.45% աճ: Ըստ վերոնշյալ պայմանական սցենարների՝ մինչև 2036թ. կատարված կանխատեսումը ներկայացված է գծապատկեր 13-ում:

Գծապատկեր 13.

### ՀՀ տնտեսական աճի սցենարային կանխատեսում



Գծապատկեր 13-ից կարելի է տեսնել, որ լավատեսական զարգացումների դեպքում 2036թ.-ին ՀՀ տնտեսական աճն «այլ հավասար պայմաններում» կկազմի 2.64%, վատատեսականի դեպքում՝ 2.26%, իսկ չեզոքի դեպքում պարզապես կպահպանվի 2017թ.-ի համար կանխատեսվող 2.45% աճի ցուցանիշը: Բնականաբար, գնահատված մոդելով նույնիսկ լավատեսական սցենարի դեպքում մինչև 2036թ.-ը ՀՀ տնտեսական աճը չի կարող գոհացուցիչ լինել, սակայն չպետք է մոռանալ, որ տնտեսական աճը միայն վերը նշված գործոններով չի պայմանավորված և դրանք ընդամենը նպաստում կամ խոչընդոտում են առկա աճին:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, ըստ ավելացված արժեքի մեջ ունեցած տեխնոլոգիաների ու նորարարությունների մասնակցության, տնտեսության ճյուղերն ու ենթաճյուղերը դասակարգում է 5 խմբում<sup>202</sup> (տե՛ս աղյուսակ 11)

<sup>202</sup> Ավելացված արժեքի միջին ցուցանիշները հաշվարկվել են մեր կողմից՝ պարզ միջինի հաշվարկման բանաձևով: Հաշվարկները կատարված են ըստ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հաշվետվության՝ Galindo-Rueda F., Verger F., “OECD Taxonomy of Economic Activities Based on R&D Intensity”, OECD Science, Technology and Industry Working Papers 2016/04, page 10,

**Ավելացված արժեքն ըստ տնտեսության ոլորտների**

<b>Կարգավիճակ</b>	<b>Մասնաբաժինն ավելացված արժեքում(%)</b>
Բարձր	28.61%
Միջինից բարձր	9.5%
Միջին	2.6%
Միջինից ցածր	1.23%
Ցածր	0.2%

Նորարարություններով ու տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված ամենամեծ արժեքն ըստ վերոնշյալ աղյուսակի ստացվում է օդային և տիեզերական, դեղագործական, համակարգչային, էլեկտրոնային և օպտիկական ապրանքների արտադրությունից, ծրագրային ապահովման ծառայություններից և գիտահետազոտական աշխատանքներից, իսկ ամենացածր ավելացված արժեքն ստացվում է գյուղատնտեսական գործունեությունից և հանքահումքային արդյունաբերությունից: Տրամաբանական է, որ բարձր տնտեսական աճ ունենալու նպատակով մեծ ավելացված արժեք ունեցող արտադրությունները պետք է ունենան ՀՆԱ-ի ստեղծման մեջ հնարավորինս մեծ մասնաբաժին, ինչը, բնականաբար, չի կարելի պնդել ՀՀ-ի համար: Ուստի մոդելով գնահատված տեխնոլոգիաների ու նորարարությունների գրեթե աննշան ազդեցությունը տնտեսական աճի վրա, կարծում ենք, իրատեսական է: Եթե տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ տնտեսության ոլորտների դասակարգման հիման վրա գնահատենք տեխնոլոգիաներով և նորարարություններով պայմանավորված ավելացված արժեքը ՀՀ-ի համար, ապա կտեսնենք, որ ՀՆԱ-ի մեջ մեծ մասնաբաժին ունեն տնտեսության հատկապես ավելացված արժեքի ստեղծման համար տեխնոլոգիական ցածր մասնաբաժին ունեցող ճյուղերը (տե՛ս աղյուսակ 12):

**Տեխնոլոգիաներով և նորարարություններով պայմանավորված ավելացված արժեքն ըստ տնտեսության ճյուղերի**

Տնտեսության ճյուղ	Թողարկման ծավալը, մլն դրամ (2016թ. )	Մասնաբաժինը համախառն թողարկման մեջ (%)	Ավելացված արժեքն ըստ ՏՀՀԿ գնահատման (%)	Ավելացված արժեքը բացարձակ գումարով (մլն դրամ)
Մեծածախ և մանրածախ առևտուր	2,234,376	35.9%	0.3%	6,256
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	878,500	14.1%	0.3%	2,372
Շինարարություն	410,603	6.6%	0.2%	862
Հանքագործական արդյունաբերություն	256,481	4.1%	0.8%	2,052
Վերամշակող արդյունաբերություն, այդ թվում՝	1,176,227	18.9%	-	19,483
<i>Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի արտադրություն</i>	532,099	8.5%	1.4%	7,662
<i>Էլեկտրականության, գազի, զոլորշու արտադրություն</i>	287,925	4.6%	0.4%	1,008
<i>Հիմնային մեքանիզմների արտադրություն</i>	152,552	2.5%	2.1%	3,158
<i>Այլ</i>	203,651	3.3%	-	7,655
<b>Ծառայություններ, այդ թվում՝</b>	<b>1,268,394</b>	<b>20.4%</b>	<b>-</b>	<b>15,437</b>
<i>Ֆինանսական և ապահովագրական գործունեություն</i>	246,939	4.0%	0.4%	938
<i>Տեղեկատվություն և կապ</i>	222,995	3.6%	5.9%	13,157
<i>Փոխադրումներ և պահեստային տնտեսություն</i>	168,843	2.7%	0.1%	135
<i>Կացության և հանրային սննդի կազմակերպում</i>	94,388	1.5%	0.0%	19
<i>Մասնագիտական, գիտական և այլ գործունեություն</i>	67,222	1.1%	1.8%	1,183
<i>Անշարժ գույքի հետ կապված գործունեություն</i>	46,378	0.7%	0.01%	49
<i>Այլ</i>	421,626	6.8%	-	-
<b>Ընդամենը</b>	<b>6,224,581</b>	<b>100.0%</b>	<b>-</b>	<b>46,462</b>

Համաձայն աղյուսակ 12-ում արտացոլված գնահատումների՝ 2016թ.-ին տեխնոլոգիաներով և նորարարություններով պայմանավորված ավելացված արժեքը ՀՀ-ում կազմել է մոտ 46 մլրդ դրամ կամ համախառն թողարկման մոտ 0.75%-ը<sup>203</sup>, իսկ համախառն ավելացված արժեքի՝ 1.0%-ը<sup>204</sup>: Այս ցուցանիշով ՀՀ-ն գտնվում է ցածր և միջինից ցածր տեխնոլոգիական մասնակցությամբ ավելացված արժեք ստեղծող երկրների միջակայքում, ինչը վկայում է նաև տնտեսական աճի ցածր որակական հատկանիշի մասին: Չնայած բարձր ավելացված արժեք ապահովող այնպիսի ճյուղերի, ինչպիսիք են «դեղագործական արտադրանքի» ու «համակարգչային, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրության» առկայությանը՝ այնուամենայնիվ, դրանց մասնաբաժինները համախառն թողարկման մեջ կազմում են ընդամենը 0.13% և 0.10%, ինչն ըստ էության չեզոքացնում է այդ ճյուղերի համապատասխանաբար 28%-ոց և 24%-ոց ավելացված արժեքի դրական էֆեկտը: Բացի ՏՏ ոլորտից, բավականին փոքր են նաև միջինից բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղերի մասնաբաժինները համախառն թողարկման մեջ: Այսպես, Քիմիական նյութերի և քիմիական արդյունաբերության արտադրանքի, էլեկտրական սարքավորումների, մեքենաների և սարքավորումների արտադրության մասնաբաժինները կազմում են համապատասխանաբար 0.13%, 0.11% և 0.06%: Եթե տնտեսության ճյուղերը համեմատենք ըստ ավելացված արժեքում տեխնոլոգիաների և նորարարությունների մասնակցության աստիճանի, ապա կարձանագրենք, որ դրանցով պայմանավորված ամենամեծ ավելացված արժեքը ստեղծվել է արդյունաբերության մեջ՝ մոտ 19,5 մլրդ դրամի չափով, ինչը պայմանավորված է ոչ թե բարձր տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման, այլ պարզապես տնտեսության մեջ արդյունաբերության ունեցած մեծ մասնաբաժնով: Արդյունաբերությունից հետո մյուս ճյուղը ծառայություններն են, որտեղ ստեղծված ավելացված արժեքի մեջ մոտ 15 մլրդ դրամը պայմանավորված է տեխնոլոգիաներով և նորարարություններով: Այս ճյուղի մեջ իր հերթին ամենամեծ


<sup>203</sup> Համախառն թողարկման տակ պետք է հասկանալ տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված արտադրանքի հանրագումարը, որի մեջ ներառված է նաև միջանկյալ սպառումը: Միևնույն ժամանակ ներառված չեն հարկերն ու տուրքերը, ինչպես նաև պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոցիալական ապահովագրության, բնակչության սոցիալական սպասարկման ոլորտներում ստեղծված արդյունքները:

<sup>204</sup> Ըստ ԱՎԾ 2017թ. -ի տարեգրքի՝ 2016թ. -ին համախառն ավելացված արժեքը կազմել է 4,571,168 մլն դրամ

մասնաբաժինն ունի SS ոլորտը, որտեղ ստեղծվել է տեխնոլոգիաներով և նորարարություններով պայմանավորված մոտ 13 մլրդ դրամի ավելացված արժեք: Կ.Գրիգորյանի գնահատմամբ տեղեկատվության և հեռահաղորդակցության ոլորտը ՀՀ-ում նույնիսկ ի զորու է ակտիվորեն խթանել ծառայությունների արտահանումը, ինչպես ծրագրային ապահովման, այլ SS ծառայությունների, այնպես էլ ֆինանսական և բիզնես ծառայությունների, ինտերնետ տուրիզմի, օնլայն կրթության և այլ ծառայությունների մասով<sup>205</sup>: Երկարաժամկետում ավելացված արժեքի մեջ տեխնոլոգիաների և նորարարությունների մասնակցության դինամիկան պարզելու համար մեր կողմից ագրեգավորվել են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքները՝ հիմք ընդունելով տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության վերոնշյալ դասակարգումը: Ագրեգավորումն իրականացվել է այն ենթադրությամբ, որ գծապատկեր 14-ում ներկայացված տոկոսային ցուցանիշները ժամանակի ընթացքում մնում են անփոփոխ:

Գծապատկեր 14.

**Ավելացված արժեքի մեջ տեխնոլոգիաների և նորարարությունների մասնաբաժինը 2006-2016թթ.**



Գծապատկեր 14-ից կարելի է տեսնել, որ ավելացված արժեքի դինամիկ աճին զուգընթաց դրանում տեխնոլոգիաների և նորարարությունների մասնաբաժինները, ըստ դասակարգված խմբերի, պահպանել են իրենց համամասնությունները: Մինևույն ժամանակ 2006-2016թթ. ընթացքում դինամիկ կրճատվել են «միջինից ցածր» և «ցածր», ինչպես նաև «միջին» և «բարձր» տեխնոլոգիաների մասնաբաժինների միջև առկա տարբերությունները: Հատկանշական է, որ քննարկվող ժամանակահատվածում

<sup>205</sup> Григорян К.Г., “ВОПРОСЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ В РАМКАХ ИНТЕГРАЦИИ В ЕАЭС”, Финансовые исследования № 4 (53) 2016, стр. 39

համախառն ավելացված արժեքի մեջ տեխնոլոգիաների և նորարարությունների ագրեգավորված մասնաբաժինը գրեթե մնացել է անփոփոխ՝ տատանվելով 1.01%-ից 1.15% միջակայքում:

### **3.2. Տնտեսական աճի վրա կառուցվածքային տեղաշարժերի ազդեցության գնահատումը**

Տնտեսական աճի մեջ տեխնոլոգիական բաղադրիչով պայմանավորված ավելացված արժեքի ստեղծման նպատակադրումը ենթադրում է տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժեր: Նգաի և Պիսարիդեսի կողմից առաջարկվող տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը բնութագրող տնտեսական աճի մոդելի հիման վրա Ռ. Մնացականյանի կողմից ՀՀ-ի համար մշակվել է մոդել, որտեղ տեխնոլոգիական առաջընթացն էնդոգենացվել է ըստ տնտեսության երեք հատվածների՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն և ծառայություններ<sup>206</sup>: Մոդելով ստացված արդյունքների համաձայն, եթե վերոնշյալ ճյուղերում միաժամանակ մեկ տոկոսային կետով ավելանա արտաքին տեխնոլոգիաների կլանումը, ապա գյուղատնտեսության և արդյունաբերության հատվածներում զբաղվածների թվաքանակը սկզբնական որոշակի աճից հետո կսկսի կրճատվել, իսկ ծառայությունների ոլորտում, ընդհակառակը՝ աճել, միևնույն ժամանակ ծառայությունների ոլորտում համախառն թողարկման մասնաբաժինը մյուս ճյուղերի համեմատ առաջանցիկ տեմպերով կմեծանա<sup>207</sup>: Ստացվում է, որ տեխնոլոգիաների կլանումը գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում առաջացնում է ավելցուկային աշխատուժ, որի մի մասը «հոսում» է դեպի ծառայությունների ճյուղ՝ հանգեցնելով ծառայությունների ոչ միայն ինտենսիվ, այլև էքստենսիվ ընդլայնմանը: Տնտեսական աճի տեսանկյունից ծառայությունների ընդլայնումը, կարծում ենք, հեռանկարային է, քանի որ այն իր մեջ ներառում է ՏՏ ոլորտը, ինչը միջինից բարձր ավելացված արժեք ապահովող ճյուղերից թերևս միակն է, որ ՀՆԱ-ի մեջ ունի քիչ թե շատ զգալի տեսակարար կշիռ: Բացի այդ, ի տարբերություն գյուղատնտեսության և արդյունաբերության, արտաքին տեխնոլոգիաների կլանումն


<sup>206</sup> Մնացականյան Ռ. «Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության գնահատումը փոքր բաց տնտեսության համար (Հայաստանի օրինակով)», ՀՀ կենտրոնական բանկ, Դիվիզան ուսումնասիտազոտական կենտրոն, 2017թ., էջ 36

<sup>207</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 34-35

ուղեկցվում է ոչ թե աշխատուժի արտահոսքով, այլ, ընդհակառակը, դրա կլանմամբ՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը: Վիճակագրությունը փաստում է, որ զբաղվածության տեսանկյունից կառուցվածքային էական տեղաշարժեր գրանցվել են գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտում (տե՛ս գծապատկեր 15)

Գծապատկեր 15.

### Զբաղվածության կառուցվածքային տեղաշարժերը 2005-2016թթ.




Գծապատկեր 15-ը ցույց տալիս, որ առևտրի, հանքագործական և վերամշակող արդյունաբերության ճյուղերում զբաղվածության կառուցվածքային տեղաշարժեր գրեթե չեն գրանցվել և զբաղված բնակչության մեջ վերջիններիս մասնաբաժինները միջինում կազմել են համապատասխանաբար 10%, 1% և 11%: Նույն ժամանակահատվածում գյուղատնտեսության մեջ զբաղվածների մասնաբաժինը դինամիկ կրճատվել է՝ 2005թ.-ի 46%-ի համեմատությամբ 2016թ.-ին հասնելով 34%-ի, իսկ ծառայությունների մասնաբաժինը՝ 2005թ.-ին 28%-ից 2016թ.-ին հասնելով 39%-ի<sup>208</sup>: Հատկանշական է, որ զբաղվածության նման կառուցվածքային տեղաշարժը զուգակցվել է տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի՝ 2005թ.-ին 21.7 մլրդ դրամից 2016թ.-ին մինչև 46.5 մլրդ դրամի դինամիկ ավելացմամբ: Նկատենք, որ չնայած Ռ. Մնացականյանի կողմից մշակված մոդելը հնարավորություն է տալիս բացահայտել տեխնոլոգիաների կլանմամբ պայմանավորված կառուցվածքային տեղաշարժերի ընդհանուր օրինաչափությունները, այնուամենայնիվ այդպիսի տեղաշարժերի արդյունքում տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքը քանակապես գնահատված չէ: Ուստի, ելնելով տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի վրա նմանատիպ տեղաշարժերի ազդեցությունը քանակապես գնահատելու անհրաժեշ-

<sup>208</sup> Ցուցանիշները հաշվարկված են մեր կողմից՝ ԱՎԾ տարեգրքերի հիման վրա

տությունից, սույն ատենախոսության շրջանակներում մշակվել է գծային ռեգրեսիոն մոդել, որտեղ բացատրվող փոփոխական է հանդիսանում մեր կողմից արդեն հաշվարկված տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքը, իսկ բացատրող փոփոխականներ՝ «գյուղատնտեսություն» և «ծառայություններ» ճյուղերում զբաղվածների թվաքանակը: Բացատրող փոփոխականների վերոնշյալ ընտրությունը պայմանավորված է բացատրվող փոփոխականի հետ ունեցած բարձր կոռելյացիոն կապով (գծապատկեր 16):

Գծապատկեր 16.

**«Գյուղատնտեսություն» և «ծառայություններ» ճյուղերում զբաղվածների թվաքանակի և տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի կոռելյացիա**



Ինչպես երևում է գծապատկերից տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքը գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակից ունի բացասական, իսկ ծառայությունների մեջ զբաղվածների թվաքանակից՝ դրական կախվածություն, որոնց կոռելյացիոն գործակիցները կազմում են համապատասխանաբար -0.9 և 8.4<sup>209</sup>: Բացատրվող փոփոխականի հետ բարձր կոռելյացիա ունի նաև «առևտուր» ճյուղում զբաղվածների թվաքանակը՝ 0.82, սակայն մոդելում վերջինիս գործակիցը նշանակալիության՝ վիճակագրական չափանիշներին չբավարարելու և մոդելի վստահելիության մակարդակի վրա բացասաբար ազդելու հետևանքով մոդելում չի ընդգրկվել: Ինչ վերաբերում է «հանքագործական արդյունաբերություն», «վերամշակող արդյունաբերություն» և «շինարարություն» ճյուղերում զբաղվածների ազդեցությանը, ապա պետք է նշել, որ վերջիններս ունեն թույլ կոռելյացվածություն բացատրվող փոփոխականի հետ՝ համապատասխանաբար 0.2, -0.3 և 0.3: Գծային

<sup>209</sup> Հաշվարկվել են մեր կողմից



եղանակով գործակիցների գնահատման (օգտագործվել է փոքրագույն քառակուսիների մեթոդը) համար հիմք են ընդունվել 2006-2016թթ. ժամանակագրական շարքերը, որի ընտրությունը պայմանավորված է հնարավորինս համադրելի վիճակագրություն ապահովելու հանգամանքով: Այսպես օրինակ՝ տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի հաշվարկման համար մինչև 2007թ.-ի տարեգրքերում տնտեսության ճյուղերի բացվածքը էականորեն տարբեր է 2007թ.-ից հետո հրատարակված տարեգրքերում համապատասխան ճյուղերի բացվածքից, ինչը խոչընդոտել է հնարավորինս ճշգրիտ հաշվարկել և ապա ագրեգավորել տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքը: Մասնավորապես, մինչև 2007թ. հրատարակված տարեգրքերում «արդյունաբերություն» ճյուղը ներկայացված է 3 ենթաճյուղով՝ «մշակող արդյունաբերություն», «հանքագործական արդյունաբերություն» և «էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում», սակայն, ի դեմս վերամշակող արդյունաբերության, չկան այդ ենթաճյուղերի բացվածքները:

Մոդելը կառուցվել է ՀՀ ԱՎԾ տարեգրքերի 11 տարվա ժամանակագրական շարքերի հիման վրա (2006-2016թթ.), որտեղ բացատրվող փոփոխական է հանդիսանում տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքը ընթացիկ գներով (մլն դրամ), իսկ բացատրող փոփոխականներ՝ «գյուղատնտեսություն» և «ծառայություններ» ճյուղերում զբաղվածների թվաքանակը (հազ. մարդ): Մոդելն ունի դետերմինացիայի բարձր գործակից, որը կազմում է 0.91 և վկայում է բացատրվող փոփոխականի գծային եղանակով նկարագրման հավաստիության բարձր աստիճանի մասին: Մոդելով գնահատված ազատ անդամը և բացատրող փոփոխականների գործակիցները վիճակագրորեն նշանակալի են, որոնց համար զրոյական հիպոթեզը մերժելու հավանականային գործակիցները (P-value) գտնվում են թույլատրելի սահմաններում: Չնայած բացատրող փոփոխականների միջև որոշակի մուլտիկոլենեարության առկայությանը՝ այնուամենայնիվ, դրանք գտնվում են վիճակագրորեն թույլատրելի սահմաններում: Ընտրված փոփոխականների նշանակալիության մակարդակը ստուգելու համար հաշվարկվել է Դարբին-Վաթսոնի գործակիցը, որը գտնվում է վիճակագրորեն ընդունելի սահմաններում (կազմում է 1.6) և փաստում է մոդելով գնահատված մնացորդների միջև ընդունելի ավտոկոռելյացիայի մասին: Մոդելից կարելի է արտածել տեխնոլոգիա-

ներով պայմանավորված ավելացված արժեքի վրա «գյուղատնտեսություն» և «ծառայություններ» ճյուղերում զբաղվածների թվաքանակի ազդեցության չափը, որն էլ ցույց է տալիս կառուցվածքային տեղաշարժերով պայմանավորված վերջինիս փոփոխությունը<sup>210</sup>.

$$\widehat{GVA}_{Tech.} = 55,727.6 \underset{(0.01)}{-} - 88.2 \underset{(0.00)}{\cdot} A + 55.4 \underset{(0.03)}{\cdot} S \quad (8)$$

Որտեղ  $\widehat{GVA}_{Tech.}$ -ը տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքն է, իսկ A-ն և S-ը՝ համապատասխանաբար «գյուղատնտեսություն» և «ծառայություններ» ճյուղերում զբաղվածների թվաքանակը: Վերոնշյալ բանաձևից կարելի է նկատել, որ ՀՀ-ում տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի ստեղծման վրա գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակն ունի բացասական, իսկ ծառայություններում՝ դրական ազդեցություն: Գնահատված մոդելի համաձայն, եթե, օրինակ, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտում միաժամանակ զբաղվածների թվաքանակը լինի 100 հազ. մարդ, ապա տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքը կկազմի 52,447.6 մլն դրամ:

Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի չափը գնահատելու համար Հ. Նիշին իր «տնտեսական աճի կառուցվածքային փոփոխություններն ու փոխակերպումները Ճապոնիայում» վերնագրով հետազոտության մեջ օգտագործում է լայն տարածում ստացած, այսպես կոչված, բացարձակ արժեքի նորմայի (Norm of Absolute Value) և Լիլիենի ձևափոխված համաթվի (Modified Lilien Index) բանաձևերը, որոնք ունեն հետևյալ տեսքը<sup>211</sup>.

$$NAV_{s,t} = 0.5 \sum_{i=1}^n |x_i - x_{i,t}| \quad , \quad (9)$$

Որտեղ  $NAV_{s,t}$ -ը s և t ժամանակահատվածների համար հաշվարկվող բացարձակ արժեքի նորման է, իսկ  $x_{i,t}$ -ն՝ t-րդ ժամանակահատվածում տնտեսության i-րդ ճյուղի մասնաբաժինը համախառն թողարկման մեջ: Ցուցանիշն արժեքներ է ընդունում [0-1] միջակայքում և եթե այն մոտ է 0-ին, ապա կառուցվածքային տեղաշարժ առկա չէ և հակառակը:

<sup>210</sup> Տե՛ս հավելված 4

<sup>211</sup> Nishi H., “Structural Change and Transformation of Growth Regime in the Japanese Economy”, discussion Paper No. E-15-001, Japan 2015, page 6-7.


$$MLI_{s,t} = \sqrt{\sum_{i=1}^n x_{i,s} * x_{i,t} * \left(\log\left(\frac{x_{i,s}}{x_{i,t}}\right)\right)^2}, (10)$$

Որտեղ  $MLI_{s,t}$ -ն  $s$  և  $t$  ժամանակահատվածների համար հաշվարկվող Լիլիենի ձևափոխված համաթիվն է, որը ցույց է տալիս կառուցվածքային տեղաշարժերի տեմպը: Ցուցանիշը տատանվում է  $[0-1]$  միջակայքում և որքան մոտենում է 0-ին, այնքան կառուցվածքային տեղաշարժերի տեմպը նվազում է և հակառակը:

Վերոնշյալ հաշվարկները կատարելու համար տնտեսությունը դիտարկվել է ըստ 5 հիմնական ճյուղերի՝ գյուղատնտեսություն, հանքագործական արդյունաբերություն, վերամշակող արդյունաբերություն, ծառայություններ և շինարարություն: ՀՀ-ի համար 2006-2016թթ. հաշվարկված ցուցանիշների դինամիկան ներկայացված է գծապատկեր 17-ում.

Գծապատկեր 17.

**ՀՀ տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը բնութագրող ցուցանիշների դինամիկան 2006-2016թթ. ընթացքում**



Գծապատկերից կարելի է տեսնել, որ թե՛ կառուցվածքային տեղաշարժերի մակարդակը (NAV) և թե՛ դրա փոփոխության տեմպը (MLI) բնութագրող ցուցանիշները զգալիորեն փոքր են մեկից և փաստում են տնտեսության կառուցվածքի գրեթե աննշան տեղաշարժի մասին: Ավելին, չնայած 2016թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ այդ ցուցանիշներն աճել են, այնուամենայնիվ 2006-2016թթ.-ի դինամիկան ցույց է տալիս, որ դրանք ունեցել են նվազման միտում: Ավելացված արժեքի փոփոխության վրա կառուցվածքային տեղաշարժերի, ինստիտուտների և միջին անվանական աշխատավարձերի ազդեցությունը գնահատվել է կոռելյացիոն հաշվարկների հիման վրա (տե՛ս աղյուսակ 13):

**Ավելացված արժեքի, միջին անվանական աշխատավարձի, ինստիտուտների  
և կառուցվածքային տեղաշարժերը բնութագրող համաթվերի կոռելյացիոն կապ**

	Ավելացված արժեք	Միջինաշխ. վարձ	Ինստիտուցիոնալ միջավայր	NAV	MLI
Ավելացվածարժե ք	1.00				
Միջինաշխ. վարձ	0.97	1.00			
Ինստիտուցիոնալ միջավայր	0.87	0.91	1.00		
NAV	-0.45	-0.42	-0.30	1.00	
MLI	-0.40	-0.34	-0.24	0.99	1.00

Աղյուսակ 13-ում կատարված հաշվարկների համաձայն՝ ավելացված արժեքի փոփոխության և կառուցվածքային տեղաշարժերը բնութագրող NAV և MLI ցուցանիշների միջև առկա է բացասական փոխազդեցություն, որը կազմում է համապատասխանաբար -0.45 և -0.40: Ստացված արդյունքը փաստում է, որ կառուցվածքային տեղաշարժերի զառիկող դինամիկան բացասաբար է անդրադառնում ավելացված արժեքի ստեղծման վրա: Եթե համեմատենք կոռելյացիոն գնահատման արդյունքները մոդել 2-ի արդյունքների հետ, ապա կարելի է նկատել, որ դրանք փոխլրացնում են միմյանց: Ինչպես արդեն նշել ենք, կառուցվածքային տեղաշարժեր, որպես այդպիսին, գրանցվել են գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերում, որի արդյունքում հենց այդ ճյուղերում զբաղվածության ցուցանիշները մոդելում ունեցան նշանակալիության բարձր աստիճան և, համաձայն մոդելի, այլ հավասար պայմաններում նշված ճյուղերում զբաղվածների թվաքանակները հավասար լինելու պարագայում տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի վրա գյուղատնտեսությունը կթողնի ավելի մեծ բացասական ազդեցություն, քան ծառայությունների դրական ազդեցությունն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի մասնաբաժինը վերջին 11 տարվա ընթացքում համախառն ավելացված արժեքի մեջ գրեթե կայուն է մնացել և համեմատելով համախառն ավելացված արժեքի փոփոխության վրա կառուցվածքային տեղաշարժերը բնութագրող ցուցանիշների կոռելյացիոն գնահատումների արդյունքները՝ կարելի է պնդել, որ ստեղծված ավելացված արժեքի վրա **գրոյի մոտ կառուցվածքային տեղաշարժի բա-**

**ցասական ազդեցությունը գերազանցում է դրական ազդեցությանը:** Ինչ վերաբերում է վերոնշյալ կոռելյացիոն գնահատումներում նաև միջին անվանական աշխատավարձերի ընդգրկման նպատակահարմարությանը, որն ավելացված արժեքի վրա ունի ուժեղ դրական ազդեցություն, ապա պետք է նշել, որ ճյուղերի միջև աշխատավարձային տարբերություններն ունեն կառուցվածքային տեղաշարժեր առաջացնելու հնարավորություն, հատկապես հարաբերականորեն երիտասարդ աշխատուժի շրջանակներում, որոնք մասնագիտական կողմնորոշման առումով ավելի մոբիլ են: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների՝ 2016թ.-ին ՀՀ-ում միջինից զգալիորեն բարձր աշխատավարձ են ստանում «տեղեկատվության և կապի», «ֆինանսական և ապահովագրական գործունեության», «հանքագործական արդյունաբերության» և «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման» ոլորտներում զբաղվածները՝ համապատասխանաբար 357,391 դրամի, 395,518 դրամի, 348,426 դրամի և 278,160 դրամի չափով<sup>212</sup>, որոնց մեջ ավելացված արժեքի ստեղծման համար միջինից բարձր տեխնոլոգիատար միակ ճյուղը տեղեկատվության և կապի ճյուղն է (ըստ աղյուսակ 11-ի):

Կոռելյացիոն գնահատումներում որպես ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ցուցանիշ է հանդիսանում համաաշխարհային մրցունակության համաթվի մաս կազմող «ինստիտուտներ» կլաստերի փոփոխությունների դինամիկան ՀՀ-ի համար: Հաշվարկը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ցուցանիշն ավելացված արժեքի վրա ունի բավականին ուժեղ դրական ազդեցություն, իսկ կառուցվածքային տեղաշարժերի վրա՝ թույլ և բացասական ազդեցություն (կոռելյացիոն գործակիցները կազմում են համապատասխանաբար -0.30 և -0.24), ինչը, կարծում ենք, խոսում է գործող ինստիտուտների պակաս արդյունավետ լինելու մասին: Ատենախոսության երկրորդ գլխում նշել ենք, որ չնայած տեխնոլոգիաները հանդիսանում են տնտեսական աճի վրա ազդող կարևորագույն գործոն, այնուամենայնիվ երկրի տեխնոլոգիական ներուժը վերջին հաշվով պայամավորված է երկրում գործող ինստիտուտների արդյունավետությունից: Երկրի տեխնոլոգիական ներուժը մեծացնելու համար մեծ նշանակություն ունեն թե՛ ներքին և թե՛ արտաքին աղբյուրներից ստացված

<sup>212</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ 2017թ. տարեգիրք. <http://armstat.am/file/doc/99506313.pdf>

ներդրումները, որոնք առնչվում են ինչպես անմիջական տեխնոլոգիական ոլորտին բնորոշ, այնպես էլ ընդհանուր տնտեսական և քաղաքական համակարգից բխող ռիսկերի հետ: Ասվածն ի նկատի ունենալով՝ինստիտուտների արդյունավետության տակ պետք է հասկանալ առաջին հերթին ինստիտուտների՝ այդ ռիսկերի հնարավորինս նվազեցման ունակությունը: Գաղտնիք չէ, որ ՀՀ ներդրումային միջավայրին վնաս հասցնող ռիսկերի մի մասը ՀՀ-ի շուրջ ներկայիս ռազմաքաղաքական զարգացումների արդյունքն են, որոնց կառավարումը, ըստ էության, դուրս է տնտեսական համակարգի տիրույթից: Այնուամենայնիվ, պակաս չեն նաև տնտեսական համակարգի ներսից ածանցվող ռիսկերը, որոնց զգալի մակարդակը ստիպում է տնտեսական քաղաքականություններ մշակելու ժամանակ առանձնակի կարևորել ինստիտուտների արդյունավետությունը բարձրացնելու խնդիրը: Երկրում առկա ռիսկերի մասին պատկերացում է տալիս Նյու Յորքի բիզնես դպրոցի ֆինանսական ամբիոնի պրոֆեսոր Աս.Դամոդարանի վիճակագրությունը, որի հիման վրա ստորև ներկայացված աղյուսակ 14-ում արտացոլված է ՀՀ-ի համար հաշվարկված երկրին բնորոշ ռիսկերի մակարդակը և հարկային դրույքաչափը: Այդ ցուցանիշների մասով համեմատական վերլուծություն իրականացնելու համար աղյուսակում ներառված են նաև տարբեր տարածաշրջանների համար հաշվարկված ցուցանիշները, որոնք կշռված են տարածաշրջանի համախառն ՀՆԱ-ի մեջ երկրի ունեցած ՀՆԱ մասնաբաժնով<sup>213</sup>:

Աղյուսակ 14.

**Ներդրումային ռիսկերի և հարկային դրույքաչափերի մակարդակն  
ըստ տարածաշրջանների**

Տարածաշրջան/Երկիր	Տարածաշրջանի/երկրի ռիսկ պրեմիում	Համախառն ռիսկ պրեմիում	Հարկային դրույքաչափ
Հայաստան	5.19%	10.27%	20.00%
Աֆրիկա	5.58%	10.63%	28.04%
Ասիա	1.19%	6.27%	25.93%
Ավստրալի և Նոր Զելանդիա	0.00%	5.08%	29.71%
Կարիբյան ավազանի երկրներ	6.31%	11.39%	24.02%
Կենտրոնական և հարավային Ամերիկա	3.55%	8.63%	31.73%
Ռուսաստան և արևելյան Եվրոպա	2.69%	7.77%	18.42%
Միջին արևելք	1.61%	6.69%	20.56%
Հյուսիսային Ամերիկա	0.00%	5.08%	21.42%
Արևմտյան Եվրոպա	0.93%	6.01%	25.51%
<b>Ընդամենը աշխարհում</b>	<b>1.13%</b>	<b>6.21%</b>	<b>24.64%</b>

<sup>213</sup> Տե՛ս Ասֆատ Դամոդարանի պաշտոնական կայքէջ. <http://pages.stern.nyu.edu/~adamodar/>

Աղյուսակում արտացոլված տարածաշրջանի կամ երկրի ռիսկ պրեմիումը ցույց է տալիս կոնկրետ տարածաշրջանի կամ երկրի կառավարման առանձնահատկություններով և տիրող քաղաքական իրավիճակով պայմանավորվածներդրողի համար լրացուցիչ ռիսկերի մակարդակը: Այս ցուցանիշը ՀՀ-ում բավականին բարձր է և 2017թ. -ին կազմել է 5.19%, որը կարելի է համեմատել աֆրիկյան և կարիբյան ավազանի երկրների ցուցանիշների հետ՝ համապատասխանաբար 5.58% և 6.31%: ՀՀ-ում բարձր է նաև համախառն ռիսկ պրեմիումը, որն իր մեջ ներառում է նաև տնտեսական ռիսկերը: Ստացվում է, որ ՀՀ-ում պոտենցյալ ներդրողները պետք է ոչ միայն փոխհատուցեն իրենց կատարած ծախսերը, այլև պետք է լրացուցիչ ևս 10.27%-ի ռիսկ վերցնեն իրենց ուսերին, դրան գումարեն ակնկալվող շահույթի մարժան, որից հետո միայն կարող են սահմանել ապրանքի կամ ծառայության առաջարկի գինը: Հասկանալի է, որ նման ռիսկերը ազդում են գների մակարդակի վրա և թողարկված արտադրանքը դարձնում պակաս մրցունակ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Այս առումով մրցունակության խնդրին առավելապես բախվում են փոքր ավելացված արժեք ունեցող արտադրությունները և դրանով առաջնային պլան մղում բարձր ավելացված արժեք ունեցող արտադրությունների կազմակերպման անհրաժեշտությունը: Աղյուսակ 14-ից կարելի է նկատել, որ ՀՀ-ում հարկային դրույքաչափը ոչ միայն տարբեր տարածաշրջաններում, այլ նաև ընդամենը աշխարհում միջին հարկային դրույքաչափերի համեմատությամբ զգալիորեն ցածր է և կազմում է 20%: Եթե ուսումնասիրենք ՀՀ-ում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան, ապա կտեսնենք, որ 2008թ. -ից սկսած՝ դրանք 944 մլն դոլարից դինամիկ կրճատվել են՝ 2016թ. -ին հասնելով 338 մլն դոլարի<sup>214</sup>: Այսինքն, պետք է արձանագրել, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների վրա էական ազդեցություն են ունեցել ոչ այնքան ցածր հարկային դրույքաչափերը, որքան երկրում առկա լրացուցիչ ռիսկերի զգալի մակարդակը, ինչն ընդգծում է գործող ինստիտուտների պակաս արդյունավետ լինելու հանգամանքը:

---

<sup>214</sup> Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ.  
<https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD?locations=AM>

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլոբալացման ներկա պայմաններում համաշխարհային տնտեսության հետ ազգային տնտեսությունների սերտ փոխկապվածությունը զգալիորեն մեծացնում է տնտեսական համակարգը հավասարակշռության վիճակից դուրս բերելու ռիսկերը: Ըստ էության, կարճաժամկետում տեխնոլոգիաների փոփոխությունը տնտեսությունը հավասարակշռությունից դուրս բերող գործոն է, սակայն երկարաժամկետում այն վերածվում է տնտեսական զարգացման միտումի: Առաջին հայացքից անցանկալի թվացող հավասարակշռության վիճակի խախտումն իրականում ոչ միշտ է անհանգստացնող: Եթե տնտեսական աճը դիտարկենք որպես տնտեսական համակարգի մի վիճակից մեկ այլ՝ ավելի բարձր վիճակի անցման գործընթաց, ապա պարզ կդառնա, որ տնտեսական աճն ինքնին տնտեսական համակարգի հավասարակշռության խախտման պատճառ է, սակայն, մյուս կողմից, նույն տնտեսական աճը դինամիկ զարգացման խթան է, ինչը ենթադրում է բարեկեցության մեծացում: Մեդիսոնի վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին 60 տարվա ընթացքում գրեթե բոլոր երկրներում թե՛ ՀՆԱ-ն և թե՛ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն դինամիկ աճել են: Սակայն ակնհայտ է, որ ոչ բոլոր երկրներում է բնակչության բարեկեցությունն այդ աճի տեմպերին համահունչ աճել: Ավելին, զարգացած և զարգացող երկրների միջև, այսպես կոչված, «բարեկեցության ճեղքվածքը» էականորեն մեծացել է: Դա առաջին հերթին պայմանավորված է երկրների հնարավորինս մեծ ավելացված արժեք ստեղծելու պոտենցիալով, իսկ զարգացած երկրներն ունեն տեխնոլոգիական լուրջ ռեսուրսներ, և այդ ռեսուրսային բազան ընդլայնելու համար անհրաժեշտ բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայր: Հաշվի առնելով ՀՀ երկարաժամկետ տնտեսական աճի կայունության ապահովման ինստիտուցիոնալ հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ սույն ատենախոսության շրջանակներում կատարված քանակական և որակական վերլուծությունների արդյունքները կարելի է ամփոփել ստորև ներկայացված եզրակացություններում.

1. Տնտեսական աճը՝ որպես իրար հաջորդող ժամանակահատվածների միջև այս կամ այն ցուցանիշի (հիմնականում ՀՆԱ-ի) պարզագույն քանակական փոփոխություն ընկալելու պրակտիկան այլևս սպառել է իրեն: Այն պետք է լինի ոչ թե կառավարության առջև դրված նպատակ, այլ պետք է հանդիսանա կյանքի



- որակի բարձրացման միջոց: Իսկ այդպիսին լինելու համար աճը պետք է լինի ներառական և դրանից ստացված օգուտները հասանելի լինեն հանրության լայն շերտերին,
2. Տարբեր ժամանակաշրջաններում տնտեսական աճի մասին պատկերացումներն իրենց արտացոլումն են գտել համապատասխան դպրոցների կողմից մշակված տեսություններում: Քեյնսյան դպրոցի ներկակայացուցիչները տնտեսական աճը պայմանավորել են ամբողջական պահանջարկի, իսկ դասական և նորդասական դպրոցները՝ ամբողջական առաջարկի փոփոխությամբ: Տնտեսական աճի կայունության հիմնախնդրի շուրջ բանավեճերի արդյունքում հակադրվել են ազատ շուկայական հարաբերությունները տնտեսության պետական կարգավորման հետ: Սակայն չի քննարկվել թե՛ առաջինի և թե՛ երկրորդի ռացիոնալության հարցը,
  3. Տնտեսական աճի մոդելների էվոլյուցիոն զարգացման արդյունքում տեխնոլոգիական գործոնը երկարաժամկետ որակյալ աճ ապահովող ներհամակարգային (էնդոգեն) կարևորագույն գործոն է դիտարկվում: Տնտեսագիտության ժամանակակից ուղղություններից ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը, կարևորելով տեխնոլոգիական գործոնի դերը տնտեսական աճի ապահովման գործում, այն բխեցնում է երկրում գործող ինստիտուցիոնալ միջավայրից,
  4. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարճաժամկետում զարգացող երկրներին բնորոշ է տեխնոլոգիաների նմանակումը (իմիտացիան) այնքան ժամանակ, քանի դեռ չի ձևավորվել անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների բավարար պաշար, որը հնարավոր կդարձնի նմանակումից աստիճանական անցումը նորարարությունների: Դրա վառ օրինակը Չինաստանն է, որի կողմից մոտ կես դար տևողությամբ հետևողականորեն իրականացվող նմանակման քաղաքականությունը փորձի ու հմտությունների առումով մարդկային կապիտալում լավագույն ներդրումը եղավ և պարարտ հող ստեղծեց նմանակումից սահուն կերպով նորարարությունների անցման համար,
  5. Կայուն տնտեսական աճի տեսանկյունից ինստիտուտների դինամիկ փոփոխությունները մեկնաբանելու համար երկրների ինստիտուցիոնալ միջավայրը

բնորոշող համաթվերի և ՀՆԱ աճի տեմպի միջև կոռելյացիոն գնահատումները երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքով ցույց են տալիս, որ մի շարք ինստիտուտների ազդեցությունը տնտեսական աճի վրա կարճաժամկետում բացասական է, իսկ երկարաժամկետում կարող է լինել դրական: Կարճաժամկետ կտրվածքով զարգացող երկրներում տնտեսական աճի վրա բացասական ազդեցություն ունեն սեփականության պաշտպանության և կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ինստիտուտները, զարգացած երկրներում՝ օրենքի գերակայությունը, իսկ երկարաժամկետում թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրներում՝ միայն օրենքի գերակայությունը,

6. Աճի ներառականությունը ենթադրում է ստեղծված լրացուցիչ արժեքի հասանելիություն և արդարացի բաշխում հանրության լայն շերտերի միջև: Դրան հասնելու լավագույն միջոց է փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության համար ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայրի ստեղծումը, որը մի կողմից միտված է գործազրկության կրճատմանը, մյուս կողմից՝ եկամուտների արդարացի բաշխմանը: Այդ առումով ՀՀ հարկային օրենսգիրքը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող ստարտափերի համար բարենպաստ ինստիտուցիոնալ պայմաններ է ստեղծում: Այսպես՝ մինչև 30 աշխատակից ունեցող և «տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով<sup>215</sup> սահմանված կարգով այդ ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունները համապատասխան հավաստագիր ունենալու դեպքում 5 տարով ազատվում են շահութահարկից, և եկամտային հարկի դրույքաչափը սահմանվում է 10%<sup>216</sup>,
7. ՀՀ տնտեսական աճի առանձնահատկությունները բացահայտելու նպատակով ժամանակագրական առումով բաժանված 4 փուլերից և ոչ մեկում աճը որակյալ համարել չի կարելի: Չնայած 2001-2009թթ. տնտեսական աճը բնորոշվել է երկնիշ թվերով, այնուամենայնիվ այն չի բխել տնտեսության մրցունակության բարձրացումից և, բնականաբար, բնորոշվել է աճի անկայունությամբ: Իսկ աճի ներկա փուլն առանձնանում է տեխնոլոգիաների տարածման համար անհրա-

<sup>215</sup> Տե՛ս հետևյալ կայքէջում. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95017>

<sup>216</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 445, տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120164>

- ժեշտ ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացմամբ, որը վերջին հաշվով միտված է տնտեսական աճի որակական հատկանիշի բարձրացմանը,
8. ՀՀ տնտեսական աճի վրա տեխնոլոգիական գործոնի ազդեցությունը գրեթե աննշան է: Կատարված տնտեսաչափական գնահատումները ցույց են տալիս, որ շուկայական գներով ՀՆԱ աճի տեմպի և համաշխարհային նորարարական համաթվի մաս կազմող ցուցանիշների մի մասը չեն բավարարում մոդելում ներառելու համար անհրաժեշտ վիճակագրական չափանիշներին, իսկ մյուս մասի ազդեցությունը բացատրող փոփոխականի վրա շատ փոքր է,
9. Չնայած ՀՀ-ն մրցունակության համաթվով աշխարհի թվով 150 երկրների շարքում զբաղեցնում է միջանկյալ դիրք, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ տեխնոլոգիական ներուժն ընդհանուր առմամբ միջինից ցածր է գնահատվում: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից ըստ տնտեսության ոլորտների ավելացված արժեքի ստեղծման մեջ տեխնոլոգիական գործոնով պայմանավորված արժեքի գնահատման մեթոդաբանության հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2016թ. -ին տեխնոլոգիական գործոնով պայմանավորված ավելացված արժեքը ՀՀ-ում կազմել է մոտ 46 մլրդ դրամ, որը կազմում է համախառն ավելացված արժեքի ընդամենը 1%-ը,
10. Ինչպես համախառն ավելացված արժեքի, այնպես էլ տեխնոլոգիաներով պայմանավորված ավելացված արժեքի վրա ՀՀ տնտեսության ներկա կառուցվածքի բացասական ազդեցությունը գերազանցում է դրական ազդեցությանը: Ուստի զրոյին մոտ կառուցվածքային տեղաշարժերի արդյունքը կարող է դառնալ ավելացված արժեքի դինամիկ կրճատման պատճառ,
11. ՀՀ երկարաժամկետ տնտեսական աճի համար տեխնոլոգիաների ու նորարարությունների վրա խարսխված քաղաքականությունն այլընտրանք չունի, որովհետև հենց դրանք են պայմանավորում երկրի մրցունակությունն ու կանխորոշում տնտեսության զարգացման վեկտորը: Այս առումով պետք է արձանագրել, որ 2018թ.-ի հունվարից ուժի մեջ մտած նոր հարկային օրենսգրքով նախատեսված հիմնական միջոցների արագացված ամորտիզացիոն մասհանումների փոխարի-

նումը հավասարաչափ մասհանումներով կունենա բացասական ազդեցություն նորարարական ընկերությունների համար: Դա առաջին հերթին պայմանավորված է նորարարական ոլորտի ինտենսիվ զարգացման արդյունքում հիմնական միջոցների բարոյական մաշվածության արագ տեմպով, որն ըստ էության կգերազանցի ֆիզիկական մաշվածության մասհանումների տեմպը, իսկ մնացորդային արժեքով այդ հիմնական միջոցների օտարումը կդառնա պակաս իրատեսական,

12. Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման համար առկա են զգալի ռիսկեր, որոնք ուրվագծում են երկրում գործող ինստիտուտների պակաս արդյունավետ լինելու հանգամանքը: Ընդ որում, ինստիտուցիոնալ խնդիրները հիմնականում գտնվում են ոչ այնքան ֆորմալ, որքան ոչ ֆորմալ տիրույթում: Ֆորմալ առումով 2018թ.-ի հունվարից ուժի մեջ մտած նոր հարկային օրենսգրքով նախատեսված շահաբաժինների հարկման մասին կետը<sup>217</sup>, ՀՀ-ում ստեղծված շահույթի վերաներդրման հարկադրանքի ենթատեքստ ունի, ինչը, բնականաբար, օտարերկրյա կապիտալի համար գրավիչ չի կարող լինել: Ընդհանուր առմամբ, չնայած ՀՀ օրենսդրությունը աչքի չի ընկնում կոպիտ բացթողմաներով, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ օրենքի կատարման վերահսկողական մեխանիզմները բավականին հեռու են կատարյալ լինելուց:

Հաշվի առնելով որակյալ տնտեսական աճի ապահովման համար բացահայտված մի շարք հիմնախնդիրներն ու մատնանշված առաջնահերթությունները՝ սույն հետազոտության շրջանակներում առաջարկվում է.

1. Որպես տնտեսական աճի համապարփակ ցուցանիշ՝ ուսումնասիրությունների ժամանակ օգտագործել համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից մշակված **ներառական զարգացման համաթվը**: Իսկ եթե, այնուամենայնիվ, երկարաժամկետ վերլուծությունների համար վերոնշյալ համաթվի ժամանակային շարքերը բավարար չեն, ապա մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ին զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև մի շարք այլ ցուցանիշների համեմատական վերլու-

<sup>217</sup> ՀՀ հարկային օրենսգրք, հոդված 4, տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120164>

- ծություն, ինչպիսիք են օրինակ՝ համաշխարհային նորարարական համաթիվը, մրցունակության համաթիվը, մարդկային զարգացման համաթիվը և այլն,
2. Տեխնոլոգիաների նմանակման համար կիրառել պետական կարգավորման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են օրինակ՝ թաքնված հովանավորչությունը, հարկային և մաքսային կարգավորումը: Թաքնված հովանավորչության տակ պետք է հասկանալ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ընտրանքային մոտեցում: Բնականաբար, այդպիսի քաղաքականությունը պետք է իրականացնել նրբանկատորեն՝ հնարավորինս բացառելով տեղական արտադրողների միջև մրցակցությունն արհեստականորեն խոչընդոտելու ռիսկերը: Անհրաժեշտ է պարզեցնել բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկման համար ներմուծվող սարքավորումների հարկային և մաքսային ընթացակարգերը,
  3. Նմանակման փուլում, այսպես կոչված «գիտելիքների նախասկզբնական կուտակումից» հետո, հետևողականորեն իրականացնել երկարաժամկետ կայունության ապահովմանը միտված ինստիտուցիոնալ փոփոխություններ: Այդ համատեքստում պետք է կարևորել կոռուպցիայի դեմ պայքարը, հովանավորչական սահմանափակումների վերացումը, տեղական և արտասահմանյան ընկերությունների միջև մրցակցային հավասար պայմանների ստեղծումը և այլն,
  4. Նորարարական ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման համար վերանայել նոր հարկային օրենսգրքով նախատեսված մի շարք դրույթներ, ինչպիսիք են արագացված ամորտիզացիոն մասհանումների փոխարինումը հավասարաչափ մասհանումներով, շահաբաժինների հարկումը և այլն: Առանձնակի ուշադրություն է պետք դարձնել հատկապես օրենքների կիրարկման վերահսկողական մեխանիզմներին,
  5. ՀՀ տեխնոլոգիական ներուժը մեծացնելու համար ստեղծել, այսպես կոչված, «տեխնոլոգիական հեղափոխության հարթակներ»: Դրա վառ օրինակը 2016թ.-ին ստեղծված FAST հիմնադրամն է, որի հիմնական առաքելությունը ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս տեխնոլոգիական նորարարությունը և գիտական

առաջխաղացումը խթանելու համար նպաստավոր էկոհամակարգի ստեղծումն է<sup>218</sup>,

6. Իրականացնել ցածր ավելացված արժեք ստեղծող տնտեսության ճյուղերից դեպի բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղեր աշխատուժի ուղղորդում: Այդ նպատակով կրթության և գիտության ոլորտում պետական քաղաքականության շրջանակներում նախ անհրաժեշտ է մասնագիտությունները դասակարգել ըստ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների, ապա պետք է իրականացնել աշխատուժի ուղղորդում դեպի առավել նախընտրելի մասնագիտություններ: Իսկ որպես առավել նախընտրելի մասնագիտություններ, պետք է սահմանվեն բնագիտական և տեխնիկական մասնագիտությունները, որոնք ունեն ուղիղ ազդեցություն տեխնոլոգիաների և նորարարությունների վրա: Չնսեմացնելով հասարակագիտական մասնագիտությունները՝ դրանք պետք է ծառայեցնել որպես գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման, կառավարման և իրացման հարթակ: Այլ կերպ ասած՝ հասարակագիտական մասնագիտություններին պետք է վերապահվի գիտություն-արդյունաբերություն կապի ապահովումը:
7. Նորարարությունների խթանման համար ՀՀ պետական գերատեսչությունների միջև բյուջետային ռեսուրսների բաշխման առաջնահերթությունները սահմանելու ժամանակ հաշվի առնել նաև յուրաքանչյուրի կողմից ներկայացված պլանավորված ծախսային ծրագրում **նորարարական նախաձեռնությունների** մասնաբաժինը: Դրա համար անհրաժեշտ է սահմանել նորարարական նախաձեռնությունների չափորոշիչներ և մշակել դրանց մասնաբաժնի հաշվարկման մեթոդաբանություն:

---

<sup>218</sup> Տե՛ս FAST հիմնադրամի պաշտոնական կայքէջում.  
<https://www.idea.am/hy/foundation-for-armenian-science-and-technology>

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Հայ գրականության ցանկ

1. Աղաջանյան Հ. Ի. «Տնտեսական աճի որակը», ՀՊՏՀ 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2014, 85 էջ: [18]
2. Ավետիսյան Հ. «Ինովացիոն ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ և կառուցակարգեր», Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1 ., Երևան 2009, 6 էջ: [189]
3. Արևելյան գործընկերության երկրների Հաշվետվություն «Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում», 2016թ. 35 էջ: [195]
4. Եղիազարյան Ա. «Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը (հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ)», 21-րդ դար, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, Երևան 2014, թիվ 3(55), 66 էջ:[169]
5. «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 2006թ. մայիսի 23-ի ՀՕ-63-Ն: [172]
6. «Ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 2007թ. օգոստոսի 2-ի N 878-Ն: [172]
7. «Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 2007թ. Օգոստոսի 2-ի N 877-Ն: [172]
8. «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1466-Ն որոշում, 2006թ. հոկտեմբերի 19-ի: [172]
9. «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», Հավելված ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի նիստի N6 արձանագրային որոշման: [172]
10. «Ինովացիոն նախագծերի մրցույթի հայտի ձևը և գնահատման չափանիշները սահմանելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրաման, 2016թ. մարտի 2-ի N 166-Ն: [172]

11. Կարապետյան Լ. «ՀՀ-ում ներդրումների արդյունավետ տեղաբաշխման հիմնահարցի շուրջ», Բանբեր Երևանի համալսարանի, Երևան 2017, № 2 (23), 11 էջ: [170]
12. Կոմպասս կենտրոն «Տնտեսական վիճակը Հայաստանում, «Հնարավորություններն ու մարտահրավերները 2017թ. », Երևան 2017, 20 էջ: [177]
13. «ՀՀ ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թվականների ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշում, 2005թ. սեպտեմբերի 28 N 1729-Ն: [172]
14. «ՀՀ-ում ինովացիոն գործունեության հայեցակարգ», Հավելված ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20-ի N 2 նիստի արձանագրային որոշման: [172]
15. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N442-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», 216 էջ:[172]
16. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք», ընդունված 2016թ. հոկտեմբերի 4-ին: [216] [217]
17. Մարգարյան Ա., «Տնտեսության արդիականացման տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ գործոնների փոխհարաբերությունների հարցի շուրջ», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N2, Երևան 2011, 14 էջ: [161]
18. Մարգարյան Ա. «Ազգային տնտեսությունը համաշխարհային եկամտի բաշխման համակարգում», 21-րդ դար, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, Երևան 2005, թիվ 2(8), 123- 146 էջեր: [13]
19. Մարգարյան Ա. «Հայաստանի Հանրապետության տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում», ՀՊՏՀ 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2014, 49 էջ: [195]
20. Մարտիրոսյան Ա. Ռ., Մարտիրոսյան Բ. Վ., «Գիտատեխնիկական նորարարությունների տնտեսական նշանակությունը և ինստիտուցիոնալ տեսությունը գործնականում», Հեղինակային հրատ., 2016թ. , 74 էջ



21. Մնացականյան Ռ. «Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության գնահատումը փոքր բաց տնտեսության համար (Հայաստանի օրինակով)», ՀՀ կենտրոնական բանկ, Դիվիզան ուսումնահետազոտական կենտրոն, 2017թ., 50 էջ: [206]
22. Պետրոսյան Ա., «Տնտեսական աճի որակը որպես աղքատության հաղթահարման պայման», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N1, Երևան 2014, 186 էջ: [17]
23. Պետրոսյան Ա., «Տնտեսական աճի չափման այլընտրանքային միջոցները», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N2, Երևան 2014, 153 էջ: [10]
24. Սարգսյան Լ. «ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմները», Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան 2016, 10 էջ: [190]
25. Վարդանյան Գ. , «Գիտելիքահենք տնտեսություն: Հնարավորություններ և մարտահրավերներ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2008, 401 էջ [186]
26. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2014 թվականի դեկտեմբերի 17-ին: [215]

### ***Русская литература***

1. Базилюк А.В., Жулын О.В, «Инклюзивный рост как основа социально-экономического развития», Экономика и управление на транспорте, Выпуск 2, 2016, 19-29 с. [38] [219]
2. Волошин В.И., Якушкин В.С. “Социально-Экономическое развитие постсоветских стран: Итоги двадцатилетия”, Российская академия наук, Москва 2012, 400с. [159]
3. Григорян К.Г, “ВОПРОСЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ В РАМКАХ ИНТЕГРАЦИИ В ЕАЭС”, Финансовые исследования № 4 (53) 2016, стр. 37-40: [205]

4. Григорян К.Г., ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ МЕЖДУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ, Сборник статей международной научно-практической конференции, Краснодар 2015, стр. 92-100: [185]
5. Исламутдинов В.Ф. “Сущность и классификация институтов институциональной среды инновационной деятельности”, журнал институциональных исследований, №2, 2014, 12 с.[80]
6. Казакова А. А. “Инклюзивный рост: проблема социологической концептуализации Теория и практика общественного развития, Москва 2016, 4 с. [36]
7. Комиссаров А.Г. “Инновационное развитие: роль малого бизнеса и государства”, Российское предпринимательство, № 2, 2011, 6 с.[136]
8. Левенков А., «Инклюзивный рост: понятие, индикаторы, международный опыт», Банкайский вестник, декабрь 2015, 41-46 с.[37]
9. Липсиц И.В. “Экономика”, учебник для вузов, Москва 2006, 656с. [4]
10. Меркулова Т.В. “Экономический рост и неравенство: институциональный аспект и эмпирический анализ”, Экономическая теория, N ° 1, 2009, 10 с. [135]
11. Павенкова М.В., “Институт и институциональность как социологические категории”, Вестник СпбГУ, серия 6, 2001, №3, 12 с.[88]
12. Пескова Д.Р., “Теневая Экономика и экономический рост – особенности взаимодействия” УФА 2006, 10с. [7]
13. Полидуц А.А., “Природа экономического роста и факторы, на него влияющие”, Вестник, Челябинск 2015, N 11 (366), 115-119 с. [27]
14. Полтерович В.М., “Проблема Формирования Национальной Инновационной Системы”, Экономика и математические методы, №2, Москва 2009, 29с.[125]
15. Сафрончук М.В. “Экономический рост”, Курс экономической теории: учебник – 5-е исправленное, дополненное и переработанное издание – Киров 2004., 40 с. [6]
16. Суворов Н.А., “Экономика”, Московский Государственный Технический Университет Гражданской Авиации, Москва 2006, 49с.[5]

17. Тарасевич В. Н. “Что такое институт? (опыт институциональной эволюции)”, журнал институциональных исследований, №3, 2010, 19 с.[77]
18. Шалапугин А.Д., “Определение экономического роста в посткризисной экономике”, Вестник N 4 (20), Челябинск 2013, 177 с.[9]

***Արդասահմանյան գրականություն և ինֆերենս կայքեր***

1. Acemoglu D., “Introduction to modern economic growth: Parts 1-5”, Department of Economics, Massachusetts Institute of Technology, p. 610.[1] [94]
2. Acemoglu D., Johnson S., Robison J.A., “Institutions as a Fundamental Cause of Long-Run Growth”, Handbook of economic growth, Vol. 1A, 2005, pp. 385-472. [79] [89]
3. Acemoglu D., Robinson J., “The Role of Institutions in Growth and Development”, Washington D.C. 2008, p. 30.[91]
4. “Armenia Country Report”, BTI, Yerevan 2016, p. 35.[194]
5. Arzumanyan T., Abovyan M., “Country Report Armenia” supported by the European Commission under the grant agreement N609532, Yerevan 2014, p. 28.[195]
6. Ashraf Q. Galor O. “Malthusian Population Dynamics: Theory and Evidence”, March 26, 2008, p. 44.[44]
7. Abel – Koch J., “KfW Competitiveness Indicator 2016”, Bpifrance, France 2015, p. 128. [138] [220]
8. Basiago A.D., “Economic, social, and environmental sustainability in development theory and urban planning practice”, Environmentalist Vol.19.N 2, 1999, p.145-161. [32]
9. Biddle J.E., “The Introduction of Cobb Douglas Regression and its Adoption by Agriculture”, Dept. of Economics Michigan State University, October 2010, p. 48.[51]
10. Brondoni M.S., “Innovation and Imitation: Corporate Strategies for Global Competition” Symphony Emerging Issues In Management, N 1 p. 14.[114] [123]
11. Braunfels E., “How do Political and Economic Institutions Affect Each Other?”, Discussion paper, Norway 2014, p. 52. [93]

12. Boulhol H., "Technology differences, institutions and economic growth: a conditional convergence", February 2004, p.65.[144]
13. Ciegis S., Ramanauskiene J., Martinkus B. "The Concept of Sustainable Development and its Use for Sustainability Scenarios", 2009, pp. 28-37.[21] [31]
14. Cesaratto S., "Endogenous growth theory twenty years after: a critical assessment", University of Siena, Berlin, 2008, p. 22.[62]
15. Colander D., "The Death of Neoclassical Economics", Journal of the History of Economic Thought, Volume 22, NO. 2, 2000, pp. 127-143.[74]
16. Colander D., Holt R., Rosser B., "The Changing Face of Mainstream Economics", Middlebury college economics discussion paper NO. 03-27, November 2003, p. 14.[75]
17. Chang Ha – Joon "Institutions and economic development: theory, policy and history", Journal of Institutional Economics,Cambridge, October 2010, p. 25.[95]
18. Chol-Won Li "Endogenous vs. Semi-endogenous Growth in a Two-R&D-Sector Model", University of Glasgow, January 1999, p. 19.[67]
19. Comin, Mestieri M., "Technology Diffusion, Measurement, Causes and Consequences", May 2013, p. 66.[143]
20. Dequech D. "Neoclassical, mainstream, orthodox, and heterodox economics", Journal of Post Keynesian Economics, Vol. 30(2), 2007, pp. 279-302.[72]
21. Dutta S., Lanvin B., Wunsch-Vincent S., "The Global Innovation Index 2015", Geneva, Switzerland 2015, p. 453. [192]
22. Dutta S., Lanvin B., Wunsch-Vincent S., "The Global Innovation Index 2017", Geneva, Switzerland and New Delhi 2017, p. 463.[193]
23. EV Consulting "Armenia: Diaspora Assisted Growth", Armenia 2005, p. 26.[160]
24. Easterlin R. A. "Happiness and Economic Growth: The Evidence", University of Southern California and IZA, Discussion paper No. 7187, January 2013, p. 30.[12]
25. Everett T.,Ishwaran M.,Ansaloni G. P.,Rubin A., «Economic Growth and the Environment», Defra Evidence and Analysis Series, Paper 2, March 2010, p. 51.[15]

26. Feldman M., Hadjimichael T, Kemeny T., Lanahan L., “The Logic of Economic Development: A Definition and Model for Investment”, SAGE Publications Ltd, 2016, pp. 5-21. [23]
27. Fatas A., Mihov I. “Policy Volatility, Institutions and Economic Growth”, France 2010, p.50.[92]
28. Galindo – Rueda F., Verger F., “OECD Taxonomy of Economic Activities Based on R&D Intensity”, OECD Science, Technology and Industry Working Papers 2016/04, Paris 2016, p 25.[202]
29. Gorodnichenka Y., Svejnar J., Terrel K., “Globalization and Innovation in Emerging Markets”, Germany 2008, p. 43.[124]
30. Gould D.M., Ruffin R.J., “What Determines Economic Growth?”, Economic review – Second Quarter, 1993, pp. 25-40.[71]
31. Grossman G.M., Helpman E., “Endogenous Innovation in the Theory of Growth”, Cambridge 1993, p. 38.[55]
32. Greiner A. “Models of economic growth”, Department of Business Administration and Economics, Bielefeld University, Germany, p. 27.[41]
33. Haapanen L., Tapio P., Finland Futures Research Centre, Turku School of Economics, “The role of economic growth in sustainable development from the perspective of 21<sup>st</sup> century growth critique” Finland 2016,p. 3. [20]
34. Haller A. P. “Concepts of Economic Growth and Development. Challenges of Crisis and of Knowledge”, Romania, pp. 66-71.[28]
35. Hong B. T., “Cobb-Douglas Production Function”, November, 2008, p. 7.[50]
36. Hodgson G.M., “What are Institutions?”, Journal of Economic Issues No. 1, March 2006, p. 25.[78]
37. Hodgson G.M., “The Approach of Institutional Economics” Journal of Economic Literature, March, 1998, pp. 166-192.[84]
38. International Economic Development Council's, “Economic Development Reference Guide”, 2000, p. 68. [22]
39. “Industrial Development Report”, UNIDO, 2005.[127]

40. “Innovation and Barriers to Innovation: Small and Medium Enterprises in Addis Ababa”, Sileshi Talegeta, *Journal of Small Business and Entrepreneurship Development*, New York 2014, Vol.2, No.1, p. 21.
41. Jones Ch. I., “R&D-Based Models of Economic Growth”, *The Journal of Political Economy*, Vol. 103 (4), August 1995, pp. 759-784.[66]
42. Jones Ch. I., Romer P., “The New Kaldor Facts: Ideas, Institutions, Population, and Human Capital”, *American Economic Journal: Macroeconomics* Vol. 2:1, 2010, p. 22.[68]
43. Jones Ch. I., “The Facts of Economic Growth”, Stanford, 2016, p. 69.[46]
44. Lanvin B., Evans P., “The Global Talent Competitiveness Index 2017”, France, 2016, p. 400.
45. Libanio G., Moro S., “Manufacturing Industry and Economic Growth in Latin America: A Kaldorian Approach”, Brazil, p. 14.[69]
46. Lorenzo G. Bellu, “Development and Development Paradigms: A (Reasoned) Review of Prevailing Visions”, *EasyPol*, May 2011, p. 46.[24]
47. Leeuwen Van Bas “Is Lucas Right? On the role of human capital in growth theory”, *Human Capital and Economic Growth*, pp. 154- 178.[59]
48. Lanvin B., Evans P., “The Global Talent Competitiveness Index 2013” *Novus media Solutions Ltd Singapore* 2013, p. 284.[196]
49. Malthus T. “An Essay on the Principle of Population”, London, 1798, printed for J. Johnson, in St. Paul’s Church – Yard, p. 126. [19]
50. Mensah A. M. and Castro L. M. “Sustainable Resource Use & Sustainable Development: A Contradiction?!” ,Germany, 2004, p. 22.[33]
51. Munasinghe M., “Sustainomics: A Trans-disciplinary Framework for Making Development More Sustainable”, Colombo, Sri Lanka, 2004, p. 18.[34]
52. McCallum B. T., “Neoclassical vs. Endogenous Growth Analysis: An Overview”, *Federal Reserve Bank of Richmond*, Vol. 82/4, 1996, pp. 41-71. [65]
53. M. De Vroey and L. Pensieroso “The Rise of a Mainstream in Economics”, *Discussion Paper*, 2016, p. 27.[73]

54. Menard C., Shiley M. M., “New Institutional Economics: From Early Institutions to a New Paradigm?”, Working Paper Number 8, September 2012, p. 60.[86]
55. Mokyr J., “Long-Term Economic Growth and The History of Technology”, JOEL MOKYR, Philippe Aghion and Steven N. Durlauf, 2005, p. 74.[101] [107]
56. Mester J. L., “Long-Run Economic Growth”, New York 2015, p.16.[109]
57. Nishi H., “Structural Change and Transformation of Growth Regime in the Japanese Economy”, discussion Paper No. E-15-001, Japan 2015, p. 45.[211]
58. Niosi J., “Innovation and Development through Imitation (In Praise of Imitation)”, Australia 2012, p. 11.[113]
59. North D. C., “Transaction Costs, Institutions, And Economic Performance”, An International Center for Economic Growth Publication, San Francisco, California,1992, p. 32.[87]
60. Nguyen Quoc Viet, Ngyuen Thi Hien, Vu Thi Quy, Vo Ngoc Qui, “Institutions matter for technological changes in transition economy: Comparison between Japanese FDI and private enterprises in Vietnam”, Faculty of Development Economics, VNU, University of Economics and Business.[100]
61. Okun B. and Richardson R. W. “Economic Development: Concept and Meaning”, Washington D.C., 1962, p. 55. [25]
62. Ogilive Sh., Carus A.W., “Institutions and Economic Growth in Historical Perspective”, University of Cambridge, United Kingdom, pp. 403-513.[82]
63. Parker J., “Empirical Evidence on Economic Growth”, Economics 314 coursebook, chapter 6, 2010, p. 52.[54] [70]
64. Parker J., “Theories of Endogenous Growth”, Economics 314 coursebook, 2010, Chapter 5, p. 29.
65. Rutherford M., “Institutional Economics: Then and Now”, The Journal of Economic Perspectives, Vol.15,No.3, 2001, pp. 173-194.[85]
66. Rebelo S., “Long-Run Policy Analysis and Long-Run Growth”, The Journal of Political Economy, Vol. 99, N 3, 1991, pp.500-521.[64]

67. Romer P. M. “Endogenous Technological Change”, University of Chicago, pp. 71-102.[48]
68. Romer D. “Advanced Macroeconomics”, Mc Graw – Hill Education, 1996, p. 550.[57]
69. Shearer R. A. “The Concept of Economic Growth”, Blackwell publishing Ltd, 1961, pp. 497-532.[3]
70. Sharipov I., “Contemporary Economic Growth Models and Theories: A Literature Review”, CES Working Papers-Volume VII, Issue 3, p. 759-773.[42]
71. Salvadori N. “Old and New Growth Theories: an Assessment”, Italy 2003,p. 384.[43]
72. Srinivasan T.N. “Long-Run Growth Theories and Empirics: Anything New?”, University of Chicago Press, 1995, p. 37-70.[47]
73. Schenck D. “Notes on Growth Theory, Ec750”, Boston College, Department of Economics, May, 2012, p. 65.[49]
74. Schutt F., “The importance of Human Capital for Economic Growth”, Germany 2003, p. 63.[60]
75. Samuelson P.A., Nordhaus W.D., “Economics”, 16th Edition, McGraw – Hill companies, 1998, p. 824.[76]
76. Sharma R., Saxena K., “Strengthening the Patent Regime: Benefits for Developing Countries – A Survey,Journal of Intellectual Property Rights, Vol 17, March 2012, pp122-132.[111]
77. Suthersanen U., “UNCTAD-ICTSD Project on IPRs and Sustainable Development”, London 2006, p. 68.[112]
78. Syrquin M., “Kuznets and Modern Economic Growth Fifty Years Later” University of Miami’ May 2005, p 15. [106]
79. Schwab K., “The Global Competitiveness Report 2016-2017”, World Economic Forum, Switzerland 2017, p. 400.
80. The World Bank “Global Economic Prospects: Technology and Technological Diffusion in The Developing World”, 2008.[142]
81. Todaro M.P., Smith S.C., “Economic Development”, 11th Edition, New York, 1994, p. 719. [26]




82. Thomas I. Palley, "Growth theory in a Keynesian mode: some Keynesian foundations for new endogenous growth theory", *Journal of Post Keynesian Economics*, 1996, Vol. 19, No. 1, pp. 113-135.[39]
83. Talegeta S. "Innovation and Barriers to Innovation: Small and Medium Enterprises in Addis Ababa", New York 2014, Vol 2, N 1, pp. 83-106.[137]
84. United Nations Economic Commission for Europe, "Innovation Performance Review of Armenia", New York and Geneva 2014, p. 156.[182]
85. Verspagen B., "Endogenous Innovation in Neo-Classical Growth models: A Survey", Louisiana State University Press, *Journal of Macroeconomics*, 14 (4), 1992, pp. 631-662.[61]
86. Vilaverde – Fernandez J., "Was Malthus Right? Economic Growth and Population Dynamics", University of Pennsylvania 2001, p.43.[45]
87. Wei Xie, White S., "From Imitation to Creation? The Critical Yet Uncertain Paradigm Shift for Chinese Firms", *Journal of Technology Management in China*, Vol.1, N 3, 2006, p. 13.[118]
88. Werle R. "Institutions and Systems: Analysing Technical Innovation Processes From an Institutional Perspective", *Innovation Policy and Governance in High – Tech Industries, Germany*, 2012, pp. 23-47.[102] [121]
89. Wiggins S., Junior D., "IPPG Briefing Paper No. Three", Manchester, July 2006, p. 6.[81]
90. Wayne E. "The Meaning of Economic Development", United Nations University, 2006, p. 15.[30]
91. <http://armstat.am/am/>
92. <https://www.idea.am/hy/foundation-for-armenian-science-and-technology>
93. <http://www.eif.am/arm/about/>
94. <http://www.innovcentre.am/hy/article/55>
95. [http://www.arlis.am/Annexes%5C3%5Cqax6\\_11hav.pdf](http://www.arlis.am/Annexes%5C3%5Cqax6_11hav.pdf)
96. <http://data.worldbank.org>
97. <http://pages.stern.nyu.edu/~adamodar/>

98. <http://www.oecd-ilibrary.org/>
99. <http://s3.amazonaws.com/ipri2016/IPRI+2016+Full+Report.pdf>
100. <http://reports.weforum.org/global-competitiveness-index/downloads/>
101. <https://www.transparency.org/cpi2015/>
102. <https://rsf.org/en/detailed-methodology>
103. <http://m.forbes.ru/article.php?id=7786>
104. <http://hdr.undp.org/en/countries/profiles/UZB>
105. <https://www.rug.nl/ggdc/historicaldevelopment/maddison/>
106. <https://internationalpropertyrightsindex.org/countries>
107. <https://www.imf.org/external/pubs/ft/fandd/2014/09/pdf/basics.pdf>

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1.

### Ներառական աճն ըստ Բազիլյուկի և ժուլինի<sup>219</sup>.



## Հավելված 2.

### ՓՄՁ մրցունակությունն ըստ երկրների ինստիտուցիոնալ միջավայրի ցուցանիշների<sup>220</sup>

	Գերմանիա	Ֆրանսիա	Մեծ Բրիտանիա	Իսպանիա	Ճապոնիա	Չինաստան	ԱՄՆ	Ռուսաստան	Իտալիա	Բրազիլիա
Բյուրոկրատիա	2.83	3.12	3.08	2.75	3.26	2.94	2.82	2.71	2.33	2.23
Կոռուպցիա	3.81	3.66	3.54	3.20	3.61	3.02	3.14	2.94	2.78	2.60
Սոցիալ-քաղաքական կայունություն	3.50	3.28	3.34	3.01	2.90	3.25	3.01	2.78	2.71	2.32
Ենթակառուցվածքներ	3.47	3.43	3.20	3.26	2.98	3.21	3.03	3.11	2.65	2.64
Հարկեր և տուրքեր	2.97	2.79	2.90	2.73	2.84	2.58	2.89	2.61	2.27	2.05
Էներգետիկ ռեսուրսների գներ	3.00	3.12	2.97	2.88	3.00	2.81	2.72	2.81	2.53	2.31
Անհրաժեշտ հմտություններ	3.02	3.24	2.88	3.23	2.42	2.89	3.12	3.06	2.92	2.72
Ֆինանսական խոչընդոտներ	3.23	3.23	2.96	2.94	2.94	2.79	3.00	2.76	2.57	2.51
Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված օրենսդրություն	3.38	3.18	3.18	3.07	3.09	3.24	2.84	3.37	3.00	2.60
<b>Ինստիտուցիոնալ միջավայր</b>	<b>3.25</b>	<b>3.23</b>	<b>3.12</b>	<b>3.01</b>	<b>3.00</b>	<b>2.97</b>	<b>2.95</b>	<b>2.91</b>	<b>2.64</b>	<b>2.44</b>

■ Լավագույն արժեք      ■ Վատագույն արժեք

<sup>219</sup> Базилюк А. В., Жулын О.В, «Инклюзивный рост как основа социально-экономического развития», Экономика и управление на транспорте, Выпуск 2, 2016, стр. 22.

<sup>220</sup> Abel – Koch J., “KfW Competitiveness Indicator 2016”, Bpifrance, France 2015

**Հավելված 3.**

**Համաշխարհային մրցունակության համաթիվն ըստ  
12 հենասյուների 2006-2009թթ.<sup>221</sup>.**

Հենասյուն	2006- 2007 թթ.	2007- 2008 թթ.	2008- 2009 թթ.	Միջին
Ինստիտուտներ	3.44	3.40	3.50	3.45
Ենթակառուցվածքներ	2.66	2.85	2.87	2.79
Մակրոտնտեսական միջավայր	4.33	4.98	4.73	4.68
Առողջապահություն և հիմնական կրթություն	6.40	4.96	5.06	5.47
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	3.58	3.35	3.43	3.45
Ապրանքային շուկայի արդյունավետություն	3.60	3.71	3.75	3.69
Աշխատանքի շուկայի արդյունավետություն		4.54	4.57	4.55
Ֆինանսական շուկայի զարգացում		3.59	3.68	3.62
Տեխնոլոգիական պատրաստվածություն	2.81	2.55	2.56	2.64
Ներքին շուկայի մեծություն	-	2.42	2.48	2.45
Գործարարության բարդություն	3.34	3.26	3.30	3.28
Ինովացիաներ	3.00	2.87	2.77	2.82

**Հավելված 4.**

**ՀՀ տնտեսական աճի մեջ տեխնոլոգիաների և նորարարությունների  
մասնակցության տնտեսաչափական մոդել**

SUMMARY OUTPUT

*Regression Statistics*

Multiple R	0.963
R Square	0.927
Adjusted R Square	0.909
Standard Error	2,223
Observations	11

ANOVA


	df	SS	MS	F	Significance F
Regression	2.00	505,114,547	252,557,273	51.12	0.00
Residual	8.00	39,522,373	4,940,297		
Total	10.00	544,636,920			

	Coefficients	Standard Error	t Stat	P-value	Lower 95%	Upper 95%	VIF
Intercept	55,727.66	15,099.49	3.69	0.01	20,908.16	90,547.15	
Agriculture	-88.20	18.25	-4.83	0.00	-130.28	-46.11	2.15
Service	55.43	21.41	2.59	0.03	6.05	104.80	2.34

<sup>221</sup> Վիճակագրական տվյալները վերցված են Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակումներից: 2000 – 2005թթ. Հայաստանի համար հաշվարկված ցուցանիշներն անհասանելի են:


**Հավելված 5.**

**Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսեր (մլն դրամ)<sup>222</sup>**



**Հավելված 6.**

**Ասպիրանտների բաշխումն ըստ մասնագիտությունների<sup>223</sup>.**



**Հավելված 7.**

**ՀՀ ՀՆԱ աճի կառուցվածքն ըստ ճյուղերի<sup>224</sup>**

Ճյուղ	2011	2012	2013	2014	2015
ՀՆԱ	4.7%	7.2%	3.3%	3.6%	3.0%
Ավելացվածարժեք (համախառն, հիմնականգներով)	4.3%	6.1%	2.9%	3.4%	3.6%
Արտադրանքիզուտահարկեր	0.4%	1.1%	0.4%	0.2%	(0.6) %
ՖՄԱԶԾ	(0.6) %	(0.3) %	0.1%	(0.1) %	0.3%
Գյուղատնտեսություն	2.4%	1.9%	1.4%	1.1%	2.4%
Արդյունաբերություն	2.1%	1.1%	1.0%	(0.1) %	1.2%
Շինարարություն	(2.1) %	0.6%	(0.9) %	(0.5) %	(0.3) %
Առևտուրևծառայություններ	2.5%	2.8%	1.3%	3.0%	0%

<sup>222</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում. <http://armstat.am/file/doc/99504363.pdf>

<sup>223</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում. <http://armstat.am/file/doc/99504363.pdf>

<sup>224</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում. <http://armstat.am/>

Ներառական զարգացման համաթիվն ըստ երկրների 2017թ<sup>225</sup>

№	Երկիր	Ներառական զարգացման համաթիվ	5 տարվա տրենդ	Մեկշնչին ընկնող ՀՆԱ փոփոխություն
1	Նորվեգիա	6.02	2%	-6%
2	Լյուքսեմբուրգ	5.86	-3%	-2%
3	Շվեյցարիա	5.75	2%	-2%
4	Իսլանդիա	5.48	5%	6%
5	Դանիա	5.31	1%	-3%
6	Շվեդիա	5.3	-1%	-3%
7	Նիդերլանդներ	5.28	-2%	-3%
8	Ավստրալիա	5.18	0%	-4%
9	Նորձեյլանդիա	5.09	2%	1%
10	Ավստրիա	5.05	0%	-2%
11	Ֆինլանդիա	5.04	-3%	-3%
12	Իռլանդիա	5.01	2%	4%
13	Գերմանիա	4.99	2%	-2%
14	Կորեայի հանր.	4.95	1%	3%
15	Կանադա	4.9	1%	-4%
16	Բելգիա	4.89	-1%	-3%
17	Սլովակիա	4.88	0%	-2%
18	Ֆրանսիա	4.83	-2%	-3%
19	Չեխիա	4.78	1%	-3%
20	Սլովենիա	4.75	-6%	-3%
21	Մեծ Բրիտանիա	4.69	-1%	0%
22	Էստոնիա	4.52	0%	1%
23	ԱՄՆ	4.44	1%	3%
24	Ճապոնիա	4.36	-1%	-4%
25	Իսրայել	4.28	3%	2%
26	Իսպանիա	4.24	-7%	-3%
27	Իտալիա	4.18	-5%	-4%
28	Պորտուգալիա	3.94	-5%	-3%
29	Հունաստան	3.68	-8%	-7%
30	Լիտվա	4.73	2%	1%
31	Ադրբեջան	4.73	-1%	-10%
32	Հունգարիա	4.57	3%	-2%
33	Լեհաստան	4.57	1%	-2%
34	Պանամա	4.52	1%	8%
35	Ռումինիա	4.53	5%	1%
36	Ուրուգվայ	4.53	4%	2%

<sup>225</sup> Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայքէջում.  
[http://www3.weforum.org/docs/WEF\\_Forum\\_IncGrwth\\_2017.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2017.pdf)

**Հավելված 8-ի շարունակություն.**

37	Լատվիա	4.52	4%	1%
38	Մալազիա	4.39	2%	-2%
39	Կոստանտինոպոլ	4.47	-1%	5%
40	Չիլի	4.46	2%	-1%
41	Արգենտինա	4.43	0%	0%
42	Թայլանդ	4.42	1%	2%
43	Ռուսաստան	4.42	1%	-8%
44	Պերու	4.41	1%	1%
45	Չինաստան	4.4	2%	8%
46	Ղազախստան	4.37	4%	-7%
47	Բուլղարիա	4.37	-1%	-1%
48	Պարագվայ	4.31	4%	1%
49	Թուրքիա	4.3	3%	-1%
50	Իրան	4.29	-2%	-7%
51	Ինդոնեզիա	4.29	1%	0%
52	Խորվաթիա	4.28	-6%	-3%
53	Մակեդոնիա	4.27	3%	1%
54	Վիետնամ	4.25	-1%	8%
55	Վենեսուելա	4.25	2%	14%
56	Նեպալ	4.24	7%	1%
57	Դոմինիկյանիս նր.	4.14	-1%	3%
58	Մեքսիկա	4.13	-1%	-3%
59	Բրազիլիա	4.13	0%	-7%
60	Վրաստան	4.09	7%	1%
61	Նիկարագուա	4.08	3%	5%
62	Կոլումբիա	4.08	0%	-4%
63	Մոլդովա	4.08	1%	0%
64	Մոնղոլիա	4.04	6%	0%
65	Բանգլադեշ	4.03	1%	10%
66	Բոլիվիա	4.02	1%	6%
67	Ալբանիա	4.02	-6%	-1%
68	ՇրիԼանկա	4.01	-2%	4%
69	Ֆիլիպիններ	4	-1%	5%
70	Սալվադոր	4	1%	2%
71	Սերբիա	4	-5%	-3%
72	Կամբոջա	3.97	0%	8%
73	Թունիս	3.94	-4%	-3%
74	Մարոկո	3.89	1%	-1%
75	Գվատեմալա	3.83	2%	5%
76	Ուկրաինա	3.67	-3%	-8%
77	Հոնդուրաս	3.67	-2%	2%
78	Լատու	3.66	-3%	11%

**Հավելված 8-ի շարունակություն.**

79	Հայաստան	3.66	-2%	1%
80	Տանզանիա	3.59	0%	4%
81	Պակիստան	3.56	0%	3%
82	Տաջիկստան	3.52	-4%	0%
83	Գանա	3.5	-5%	0%
84	Կամերուն	3.5	-2%	0%
85	Կիրգիզստան	3.49	-5%	-1%
86	Սենեգալ	3.48	-4%	-2%
87	Մալի	3.39	1%	-1%
88	Հնդկաստան	3.38	3%	3%
89	Նամիբիա	3.28	1%	-5%
90	Չադ	3.31	-3%	-7%
91	Ուգանդա	3.28	-4%	1%
92	Քենյա	3.23	-4%	8%
93	Բուրունդի	3.22	-3%	2%
94	ՍիերաԼիոնե	3.21	4%	4%
95	Ռուանդա	3.2	-8%	3%
96	Լեսոտո	3.12	8%	-5%
97	ՀարավայինԱֆրիկա	3.09	5%	-8%
98	Նիգերիա	3.07	-3%	-2%
99	Մադագասկար	3.05	-5%	-2%
100	Մավրիտանիա	2.89	-7%	-4%
101	Չամբիա	2.84	-10%	-4%
102	Մալավիա	2.83	-9%	-9%
103	Մոզամբիկ	2.79	-9%	-5%

**Հավելված 9.**

**Մարդկային զարգացման համաթիվն ըստ երկրների 1990-2015թթ.<sup>226</sup>**

Տարի	Հայաստան	Ադրբեջան	Չինաստան	Վրաստան	Ղազախստան	Ռուսաստան
1993	0.593	-	0.528	-	0.676	0.71
1994	0.597	-	0.538	-	0.668	0.701
1995	0.603	0.609	0.547	-	0.665	0.7
1996	0.609	0.61	0.557	-	0.666	0.701
1997	0.618	0.615	0.565	-	0.67	0.704
1998	0.632	0.626	0.574	-	0.672	0.703
1999	0.639	0.636	0.583	-	0.676	0.709
2000	0.644	0.642	0.592	0.673	0.685	0.72
2001	0.645	0.651	0.6	0.677	0.7	0.727
2002	0.657	0.659	0.61	0.684	0.714	0.733

<sup>226</sup> Տե՛ս ՄԱԿ-ի զարգացման ծրագրի պաշտոնական կայքէջում. <http://hdr.undp.org/en/data>



**Հավելված 9-ի շարունակություն.**

2003	0.668	0.668	0.622	0.694	0.725	0.741
2004	0.679	0.675	0.634	0.703	0.737	0.748
2005	0.692	0.682	0.646	0.714	0.747	0.754
2006	0.707	0.708	0.659	0.722	0.754	0.761
2007	0.721	0.719	0.672	0.735	0.758	0.769
2008	0.725	0.728	0.682	0.734	0.758	0.776
2009	0.72	0.737	0.691	0.738	0.763	0.773
2010	0.729	0.741	0.7	0.742	0.766	0.785
2011	0.732	0.742	0.703	0.749	0.774	0.792
2012	0.736	0.745	0.713	0.755	0.782	0.799
2013	0.739	0.752	0.723	0.759	0.789	0.803
2014	0.741	0.758	0.734	0.768	0.793	0.805
2015	0.743	0.759	0.738	0.769	0.794	0.804